Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՏԷՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՀՈՐՁԱՆՔ

1925

Арм.
2-3505a
2-3505a

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՀՈՐՁԱՆՔ

A 7280

ԱԿԱԴԵՄԻԱ

Инв. № 21245

ՅԵՐԵՎԱՆ 1925

2-32059

21245

Գրաւիպվար № 174բ. Տիրաժ 1,000 օրինակ

Պետհրատի յերկրորդ տպարան, Յերեւանում

ՀՈՐՁԱՆՔ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

1

Այն տարիներում իշխանությունը փոխվում եր շատ արագ։

Արթնանում եյիր ու չգիտեյիր թե ով ե իշխում քաղաքում։

Քաղաքացիական կռիվները քանդել եյին բոլոր հիմքերը։

Խռովահույզ եր դառել ամեն ինչ։

Մարդը դժգոհ եր։

Նա դժգոհ եր ամեն ինչից և ամենից։

Նա դժգոհ եր իր հին կյանքից։

Հինը նրան շատ եր ամուր պրկել իր ճանկերում ու վոսկրացրել։

Թափահարում եր ազատվելու։

Նա դժգոհ եր և ուզում եր իր ապրումի յեղանակն ինքը վորոշել։

Այլևս չեր կամենում յենթարկվել։

Ցանկանում եր յենթարկել։

Ու ծովի պես ալեկոծ, տարուբերվում էր կնճռոտ։

Մեկը կորցնելու յեր, մյուսը՝ գտնելու։

Մեկի կյանքը նոր միայն կաղապարվում էր, իսկ մյուսինը՝ խորտակվում և բաղխվելով այդ նոր կյանքին, փշուր-փշուր ցած գլորվում։

Հինը փթած էր, նա տեղի յեր տալիս։

Այդ գիտեյին բոլորը։

Գիտեյին և ընկնողները, սակայն խեղդվողի համար ջրում պատահորեն ընկած և ալիքներից անկամորեն տարուբերվող ծեղն իսկ ապահով հենարան է թվում։

Ամուր կառչած կորուստի փեշերից, հեվ ի հեվ վազ էյին տալիս նրա յետևից։

Արյան ու ավերմունքի մեջ լողալով, կամենում էյին կրկին գոյության կանչել իրենց՝ արդէն իսկ խորտակված և անպետքացած նավը։

2

Քաղաքը պետք է հանձնվեր։

Սպիտակների բանակը մեծ ուժերով առաջ էր շարժվում։

Դրությունը պահել այլևս անկարելի յեր։

Իսկ օգնություն ստանալն՝ անհնարին։

Ամեն տեղ օգնության կարիք կար։

Լայնածավալ էր յերկիրը և ուժերը ցրիվ,

դեռ անկազմակերպ, դեռ սաղմային դրությամբ։

Իսկ գյուղերը մեծ մասամբ քաշված իրենց պատյաններում, գաղտագողի նայում էյին դեռ անվստահ։

Միակ օգնությունը կարող էր ներսից լինել, սակայն դուռ ու պատուհան ամուր փակած քաղաքի բազմաթիվ տները դեպի տիրողները մի ներքին, զսպված և իրենց կորուստի կատաղությունից ատամներ կրճտացնող թշնամանք ունեյին։

Յեվ անշուշտ առաջին հարձակվողը նրանք էյին լինելու։

Վորպեսզի քաղաքը ռմբակոծման չյենթարկվի (մի բան, վորի առաջ կանգ չէյին առնի ըս պիտակները), տիրող իշխանությունը վորոշեց քաղաքը թողնել։

Արևելքը դեռ նոր էր շառագունել, արևի վոսկեգույն շերտերը դեռ նոր միայն ամոթխած ցոլում էյին յերկինքն ի վեր, յերբ փոքրաթիվ կարմիր բանակն ու կառավարության անդամները քաղաքի բոլոր փողոցներով շտապ անցնելով, հավաքվեցին նշանակված վայրը՝ լեռներում ապաստան գտնելու համար։

Արտաքնապես դրության փոփոխությունը նկատելի չէր։

Պահակները դեռ շարունակում էյին իրենց

դիրքերում մնալ ու ստուգել անցորդների ինքնությունը։

3

Մոտամոլոր քայլերով անցնում է Արգամը։
Նա չպետք է հեռանա։
Մնալու յե քաղաքում,
Այդպես էր վորոշված։

Պետք է մնալ և տեղում կազմակերպել ու կապ պահպանել հեռացողների հետ։

Քայլում է Արգամը ու նայում հեռացողներին. դիտում է նրանց դեմքի վշտոտ արտահայտությունը, ուր կարծես վերադարձող բռնությունը խորը ակոս է փորել։ Նայում է փակ տներին ու նրան թվում է, վոր այդ ամուր և բարձրապարիսպ տները քար լռության մեջ անձայն հրճվում են իրենց վրա, ծաղրում, լեզու ցույց տալիս։

Մոտենում է մի պահակի, վորն հանդարտ կանգնած է իր դիրքում։

Նայում է նրա բարձր հասակին, փայլուն աչքերին, վորոնց մեջ այնքան կրակ, նոր կյանքի այնքան հավատ կա ու սիրտը ճմլվում է։

Մի քանի րոպե ևս, և ով գիտե, կենդանի կմնա՞ արդյոք այդ՝ իր գործի ճշմարտությունը պաշտպանող աննկուն պահակը։

— Լսի՛ր, սիրելիս, ժամանակ է, վոր դիրքդ թողնես, մի քանի րոպեյից թշնամին այստեղ կլինի — Արգամի ձայնը դողում է այդ բառերի ծանրության ճնշումից։

Պահակը նայում է նրան կշտամբանքով, չի վստահում նրա խոսքերին ու խուլ մրմռում է.—

— Հեռացի՛ր։

— Բայց դու վտանգում յես քո կյանքը։

— Իսկ դու ո՞վ յես։

Արգամը հիացած նրա կասկածամտությամբ, ցույց է տալիս իր ինքնությունը հաստատող կուսակցական մանդատը։

— Փախի՛ր դեպի անտառ։ Բոլորն արդեն գնացել են։ Այս կողմով այլևս վտանգավոր է։ Մերոնց կհանդիպես անտառում։

— Հապա դո՞ւք, ընկեր...

— Յես մնալու յեմ...

— Այդ դեպքում մնաս բարով։

Յեվ յերկու անծանոթ, բայց գաղափարով ծանոթ, նպատակով մեկ մարդիկ փողոցի ամայության մեջ գրկվում, համբուրվում են յեղբայրաբար ու բաժանվում տարբեր ուղիներով, վորպեսզի քանդեն իրենց մեջ առաջացող այդ բաժանման պարիսպը և շուտով կրկին միանան։

4

Շրջում է Արգամը բոլոր պահակատեղերը, արձակում պահակներին։

Յերբ վերջին պահակն էլ հեռանում է արագ քայլերով, այն ժամանակ միայն մտածում է իր մասին։

Քաղաքն արդեն արթնանում է, բացվում է շուկան։ Քիչ հետո թշնամին վրա կհասնի։ Անձնատուր լինելու պայմանաժամը լրանում է։

Պատասխան չստանալով, հարձակման կդիմեն և խոչնդոտի չհանդիպելով, ներս կթափվեն քաղաք։

Ո՞ւր գնալ։

Բանվորական թաղն ավելի անպաշտպան է. ամենից առաջ այդ թաղում կսկսվեն խուզարկություններն ու տանջանքները։ Մանավանդ բանվորներից շատերն հեռացել են ընտանիքով, թափուր թողնելով իրենց նկուղները։

Ո՞ւմ մոտ թաքնվել։

Կարևորն առաջին մի քանի օրերն են։

Այնուհետև հեշտ է։

Իրեն այստեղ ճանաչողները քիչ են, նոր յեկած լինելու պատճառով։

Այդ հանգամանքն էր պատճառը, որ ըն-

կերները համաձայնվել եյին իրեն թողնել մի
այդպիսի վտանգավոր և պատասխանատու գոր-
ծի համար։

Կեղծ անցագրի շնորհիվ մի քանի օրից, յերբ
տիրապետողների արբեցումը կանցնի, կարող կը-
լինի ազատ զգալ իրեն ու գործի դիմել։

Սակայն ո՞ւր թաքնվել այդ քանի օրերում։

Մտքում թվեց այն բոլորին, վորոնք վոր-
պես համակրողների, կարող եյին վստահելի լի-
նել։

Բայց բոլոր տեղերն էլ վտանգավոր եյին։

Սակայն հարկավոր էր շտապել։

Կայարանի կողմից արդեն լսվում էր հրա-
ցանաձգություն, իսկ տներն էլ բաց եյին անում
իրենց փակ դուռ ու լուսամուտները։

Ու քայլերն ուղղեց դեպի քաղաքի հեռա-
վոր թաղերից մեկը։

5

Տներն ամրոցների պես ամեն կողմից փակ
ու կողպված, լուռ, կարծես գալիքի պատահա-
կանության մղձավանջն եյին ապրում, իսկ որ-
ներում փակված մարդիկ անհանգիստ եյին։

Մի քանի օր էր արդեն, վոր սպիտակ բա-
նակի մոտիկության լուրն առել եյին, շատերն

եվ հաստատ գիտեյին նրանց ներկայացրած վերջնագրի ու կարմիրների ծանր դրության մասին։

Սակայն այդ ամենի մասին շշուկով եյին խոսում միայն։

Քաղքենիական վախկոտ միտքն ինքն իրենից իսկ թաքնվելով, դեռ չեր համարձակվում թռիչք անել, թեև այնքա՜ն ջերմորեն սպասում եր կրկին տեսնել ուսադիրներ, ձիգ հագնված խթանավոր սպաներ, վորոնց թվում և իր հարազատներից շատերին։

Ու խոսում եյին գաղտագողի, հայացքներով, շարժումներով։

Ո՞վ գիտե դեռ ինչե՛ր կարող ե պատահել...

Այդ կաշվե բաճկոնավորները սատանի պես կարողանում են դրությունն աննկատելի կերպով փոխել հօգուտ իրենց։

Դեռ յերեկոյան նրանց անվրդով դեմքերը յերբե՛ք ցույց չեյին տալիս, թե մի քանի ժամից հետո իրենք այլևս չեն լինի, վոր գուցե իրենցից շատերը գնդակահարված, այս ու այն պատի տակ ընկած լինեն, կամ բանտերը լցված։

Յեվ փակված չորս պատերի մեջ, քաղքենիական միտքը, մեկը մյուսից գաղտնի, սարսափի ու յերջանկության զանազան պատկերներ եր նկարում։

Վողջ գիշեր անքուն, լուսադեմին մարդիկ տարբեր ցանկություններով եյին դեռ փակ պատուհաններից գաղտագողի նայում դեպի փողոց։

Յեվ տարբեր պատրաստություններ եյին տեսնում նոր բացվող որվան դիմավորելու։

Յեթե մի փոքրիկ մաս տան անկյուններն ընկած հավաքում և ապահով տեղերում պահում եր այն ամենը՝ նկար, գիրք, մանդատ և այլն՝ վոր կապ ուներ կարմիրների հետ, ապա մեծամասնությունը թաքցրած տեղերից հանում եյին ֆրրակ, սմոկինգ, պաշտոնական համազգեստ, ցիլինդր, ինքնության, պաշտոնի, աստիճանի վկայականներ, գովասանագրեր, պարգևատրման հրովարտակներ, շքանշաններ, յեռագույն դրոշակներ ..

Միջանցքներում ու խոհանոցներում աղախինները, տանտիկինները, հարսները, աղջիկները մաքրում, փայլեցնում եյին համազգեստի կոճակներ, գլխարկանիշներ, ուսադիրներ...

6

— Դուք ինչո՞ւ եք վախենում,— ասում եր կալվածատեր Անանյանն իր ընտանիքին, վոր հավաքված սեղանատանը, ամեն մեկը մի անկյունում կծկված, սարսափի արտահայտությունը դեմ-

քերին, նայում էյին հոր պատրաստություննե-
րին։

— Մենք վախենալու վոչինչ չունենք, յե-
կողները մերոնք են։ Թող վախենան տկլորները,
«բիրդան իշխան» դառած քոստները, վոր ու-
զում էյին իմ հարստությունը խլել ու ինձ հա-
վասար մարդ դառնալ։ Հիմի ցույց կտամ նրանց,
թե ինչ է նշանակում իմ ագարակներն իրենց
մեջ բաժանել։ Քթներից կհանեմ կերածները։
Թռչնաբուծարանիս ամեն մեկ հավի փոխարեն
տասը, քսանը հետ կստանամ հոգիները հանելով։

Հիմի մերն է, ասում են, — մեր աշխատան-
քով յես հարստությունդ դիզել։ Քո հորն ո-
ղորմի... իմ խելքով, իմ ճարպիկությամբ, հայ-
րենիքին ու գահին մատուցած իմ ծառայությամբ
եմ այս ամենին տեր դարձել, իսկ դու կրկին
քաշվիր քո բունն ու մեջքդ յերկտակիր և սպա-
սիր, մինչև մի կտոր հաց շպրտեմ առաջդ, վոր
քաղցից չմեռնես։

— Հայրիկ, ասում են, վոր սպիտակներն ի-
րենց գրաված քաղաքներում յերեք որ շարու-
նակ ավերում, թալանում, սպանում ու այրում
են առանց վորևե որենքի յենթարկվելու։

— Լավ էլ անում են, սակայն դա մեզ չի
վերաբերում։ Նրանք շատ լավ են ճանաչում ի-

7280

րենց մարդը։ Հենց վոր զորքերը քաղաք մտնեն,
իսկույն այցետոմս կպցրեք գլխավոր մուտքի
դռանը, էլ մեզ մոտ չեն մտնի։ Սպաների մեջ
իմ լավ բարեկամներից շատ կան։

— Իսկապե՞ս, հայրիկ, — վերջնականապես
հանգստացած և ուրախ թռչկոտելով նրա մոտ էն
վազ տալիս յերկու հասակ առած աղջիկները՝ Ա-
նիկն ու Մանիկը։

— Ի՞նչ լավ կլինի, չէ, յերբ այս քնձռոտ-
ները գնան։ Սպաներն ուսադիր ունեն, հա՞, հայ-
րիկ, էլի առաջվա պես, սիրուն, շիկ... կրկին բալ,
յերեկույթ... Ա՜խ, մայրիկ, ինչքան ժամանակ է
նոր շոր չենք կարել։ Հիմի հո պահած կտորնե-
րը կհանես. էլ ի՞նչ կա վախենալու։ Այնպես չէ՞,
հայրիկ։

— Իհարկե, — ասում է հայրը, փիրուզե մեծ
ակով մատանին ճկ. ույթին հագնելով։

— Դե, դե, է՜լի գժվեցիք, — կշտամբում է
մայրը, — դեռ վոչինչ չկա, իսկ դուք արդեն ու
րախանում եք։ Մի սպասեցեք թող էս միջատա-
վորների հոտը կորչի, հետո։

— Վո՛չ, վոչ, հենց այսոր, — ասում է Անի-
կը, մորը փաթաթվելով, — հագիս կարգին շոր չկա։

— Հոռոմ, — կանչում է Անանյանը, — մի ըզ-
գույշ դուրս գնա, տես ինչ կա, ինչ չկա փո-

ղոցներում։ Լսիր, թե ինչ են խոսում շուկայում։

— Իսկույն աղա,— պատասխանում է աղախինն ու գլուխը կախ դցած, շուռ գալիս գնալու։

— Աղա՞ — ծաղրում է Անանյանը, հապա եդ լեզուդ մինչև հիմա վո՞րտեղ եր։ Քիչ եր մընում «ընկեր» ասեյիր, հիմի հանկարծ աղա դառա հա՞։ Սպասիր, քո կապն էլ կքաշեմ։

— Աղա, յես մեղք չունեմ, սովորում եյին, ներիր,— հետ է դառնում Հոռոմն ու վախվորած, մի քայլ անում առաջ։

—Սովորո՞ւմ եյին... սուտ ես ասում, ուզում եյիր մեր տան խանումը դառնալ։ Դու էլ նրանցից ես։ Դպրոց եյիր գնում, կարդալ-գրել սովորում, կարծում եյիր հենց են է, որ մենք սուս ենք արել, մեր հաշիվը փակվեց, հիմի մեր տերը դուք եք։ Սպասիր մի դեռ իս յերկուորն անց կենա...

—Աղա, բաղդս եմ ընկել, ներիր...

—Լավ, լավ, դեռ գնա կատարիր, ինչ որ հրամայեցի, իսկ այդ մասին հետո կխոսենք,— ասում է Անանյանն ու դառնում կնոջը.—

—Սենյակներն ելի կարգին սարքիր, ամեն բան առաջվա նման իրեն տեղը լինի։

Մաքուր, սիրուն։

Ափսոս Թագավորի ու Թագուհու նկարները չկան։

Հազար անգամ ասացի մի պատռեք, իսկ դուք ելի ձեր եշը քշեցիք։ Այ, հիմի ինչքան պետք է։

Անիկ, տես գրքերի մեջ Թագավորի պատկերը չկա՞։ Լավ փնտրիր, գուցե գտնես։ Ցեթե կտրնեգանեք, սպիտակ ու կարմիր մետաքսե բրից շրջանակի նման բաների մեջ փաթաթեցեք ու կախ տվեք ընդունարանի ճակատի պատից, բարձր։

Չմոռանաք յեռագույն դրոշակն էլ գլխավոր մուտքի մոտ կախել։

Ա՛, ես շուն շանվորդի որդերավոր տնվորներին էլ պետք է իսկույն տնից քշել ու բանդնստեցնել։ Շատ եյին ուռչում իրենց որդերնե-րով, դե թող հիմի էլ պարծենան։

Ձեռքերը շփելով քայլում է Անանյանը սենյակի յերկայնքով։

Ուրախ է, անչափ ուրախ ու շարունակ կրկնում է.—

—Վերջապես, վերջապես...

Անիկը վերադառնում է գրքից պոկած մի թերթ ձեռքին, որի մի յերեսին Թագավորի նկարն է։

Անանյանը մոտենում է, պատիվ բռնում ու կանչում.—

— Կեցցե՜ նորին մեծություն ինքնակալ կայսրն Ռուսիո,— և վոգևորությունից մոռանալով, վոր սպիտակները դեռ քաղաքում չեն, յերգում է.—

«Տեր պահյա զկայսրն...»

Կինը սարսափած լռեցնում է.—

— Սուս, սուս, դեռ ժամանակը չի...

Ու վախվորած, հետ է քաշում պատուհանի վարագույրը և դուրս նայում:

Դրսում արդեն անսովոր շարժում է տիրում:

Աղմուկն աստիճանաբար ուռչում է, մեծանում ու ծավալվում:

Յերբեմն լսվում է հատ-հատ հրացանաձգություն:

Սպիտակներն զգուշությամբ, բայց կասկածը սրտներում, առաջ են շարժվում, առանց դիմադրության հանդիպելու:

7

Փոքրիկ տնակը, վորի առաջ կանգ առավ Արգամը, գտնվում եր բանվորական թաղի հակառակ կողմը, քաղաքի հեռավոր, նոր բնակելի մի խուլ մասում:

Դա մի կոշկակարի բնակարան եր, ուր և գտնվում եր նրա արհեստանոցը:

Արգամը ճանաչում եր նրան, բայց վոչ այն-
քան մոտիկ, վոր նրան կարողանար վստահել իր
անձը:

Մի քանի րոպե վարանած կանգ առավ դը-
ռանը, մեկ կամենալով ներս մտնել, մեկ էլ հետ
դառնալ, մտքում քննելով վարպետի անձնավո-
րությունը, վորը վերջ ի վերջո այնքան էլ դրա-
կան արժեք չստացավ:

Ու շուռ յեկավ հետ դառնալու, բայց ար-
դեն ուշ եր:

Քաղաքի բոլոր կողմերից լսելի յեր ներս լըց-
վող գինվորների աղաղակ, ձիյերի դոփյուն...

Այլևս առանց տատանվելու ներս մտավ,
գցեց փողոցի դռան փակը ու յետևի դռնով ան-
ցավ արհեստանոց:

Վարպետն արդեն վոտքի յեր ու նստած մի
ցածլիկ, քառակուսի, կոշկարական զանազան
գործիքներով, փայտյա մեխերով, կաշվի կտոր-
ներով ծածկված սեղանի մոտ, մի կոշիկ ձեռքին,
կարկատում եր:

Նա քառասունն անց մի՝ արդեն սպիտակած,
կորաքամակ ծերուկի եր նման, նիհար դեմքով,
ներս ընկած այտերով ու խորը փոսերի միջից
նայող, դեռևս առկայծող աչքերով:

Տեսնելով Արգամին, նա մի ակնթարթ ընդ-

հատեց գործը, զարմանքով նայեց վրան ու հանկարծակի հայտնված վախի զգացման արտահայտություն ձայնի մեջ, հարցրեց կշտամբանքով.—

— Ինչո՞ւ ինձ մոտ յեկար...

Արգամն ըմբռնեց հարցի իսկական նշանակությունը, հասկացավ, որ իր ներկայությամբ վտանգի յե յենթարկում նրան, կամեցավ լռությամբ դառնալ, դուրս գնալ, սակայն փողոցներում աջ ու ձախ վազող զինվորների ներկայությունը թուլացրեց նրա հաստատակամությունը։

Նա վախ զգաց ոչ այն բանի համար, որ ինքը կարող է բռնվել, որ իրեն կտանջեն, կըսպանեն, այլ որ, իր մահով կվտանգվի այն ծրագիրը, որի հաջող իրականացումից է կախված յուրայինների կյանքը, տարիներ շարունակ փայփայած և հազարավոր զոհեր կլանած գաղափարը, այն գաղափարը, որի հաղթանակի ժամը՝ բազմաթիվների համառ կամքով՝ արդեն հնչել է։

Մի քայլ մոտեցավ, գլխահակ կանգնեց վարպետի առաջ ու առանց նրան նայելու, խուլ ձայնով շշնջաց.—

— Չեյի ուզում քեզ մոտ գալ, բայց յերբ հասա այս կողմերը, քաղաքն արդեն նրանց ձեռքըն էր ու այլևս դրսում մնալ չեյի կարող։

— Իսկ իմ մասին չմտածեցի՞ր,— վարպետը

հարցական նայեց նրան, տեղում մի անհանգիստ շարժում գործելով։

«Անպայման կհանձնի»,— անցավ Արգամի մտքով, բայց իր մտածումը թագցրեց։

— Քեզ ձեռք չեն տա, գուցե և քեզ մոտ չխուզարկեն, նրանք մեզ են փնտրում,— ասաց նա։

Մի քանի րոպե ծանր լռություն տիրեց։

Վարպետն առանց վեր նայելու, շարունակում էր գործը, դանդաղորեն ծակում կոշկի ներբանն ու մազե ասեղին հագցրած մոմած թելով կարում, իսկ Արգամը լուռ կանգնած պատի տակ, սպասում էր։

Վերջապես վարպետը ցած դրեց կոշիկն ու ծանր լռությունն ընդհատելով, խուլ ձայնով ասաց.—

— Դե որ յեկել ես, նստիր, ինչ արած՝ արդեն ուշ է։

«Անշուշտ կհանձնի»,— կրկին անցավ Արգամի մտքով. բայց առավ փոքրիկ, ցածլիկ աթոռակ ու քաշվելով արհեստանոցի անկյունը, փողոցի դռան հանդիպակ՝ որ դեռ փակ էր՝ նստեց լուռ

8

— Չկարողացաք պահել հա՞, ստիպված յեղաք հանձնելու՞,— վարպետի ձայնում ծաղրի հազիվ որսացվող շեշտ կար։

— Չկարողացանք, նրանք շատ են։

— Բարեկամս, իզուր եք աշխատում։ Քանի հարյուր տարի է, ժողովուրդը սովորել է նրանց, սովորել է, որ իրեն միշտ հրամայեն, կառավարեն։ Առանց ծեծվելու, առանց ուրիշի բեռները տանելու, ժողովուրդը չի կարող ապրել։

— Մենք կսովորեցնենք նրան, որ ինքն իր տերը դառնա։

— Ոչ, չեք կարող, որովհետև դուք ոչինչ չունեք. չունեք հաց, չունեք զոր, իսկ հարստությունը դեռ նրանց ձեռքումն է։ Սոված ու մերկ մարդը յերկար ժամանակ չի դիմանա, նրան կարելի է մի կտոր հացով խաբել։

— Մենք նրանց հարստությունը կխլենք ու ժողովրդին կտանք։ Ձեզ կվերադարձնենք այն, ինչ որ նրանք այնքան յերկար տարիներ միշտ խլել են ձեզանից։

— Չի լինի, չէ, նրանք զենք ունեն, ուժ ունեն, նրանց օգնում են ուրիշ մեծ պետություններ, իսկ դուք մնացել եք ձեր գլխին, ձեր ցանկություններին միայն։

Այդ ժամանակ փողոցում լսվեց ավելի ու ավելի մոտեցող աղմուկ և ապա մեկն ուժգին հրեց արհեստանոցի դրսի դուռը ու մի բամբ ձայն կանչեց.—

— Ե՛յ, բաց արա, օրենքի անունով ասում եմ բաց արա, թե չէ՞ դուռը կկոտրեմ։

Արգամը նստած տեղից վեր ցատկեց։

Ամեն ինչ կորավ։

Փախչել այլևս անհնարին է, մնում է պաշտպանվել... Բայց մի ատրճանակով շատ բան կարելի չէ անել, այն էլ ուրիշի կյանքը վտանգելու պայմանով...

Ձեռքը տարավ գրպանն ատրճանակը հանելու, բայց չհանեց ու այդպես անշարժ մնաց կանգնած։

Իսկ վարպետը հանդարտ բարձրացավ տեղից, մոտեցավ դռանը, կարծես կամենալով բացել այն, սակայն դարձավ, անկյունի կաշիների մեջ ընկած մի պարանի կտոր վերցնելով, պարզեց Արգամին.—

— Բակում, այս կողմի պատի տակ ջրհոր կա, կապիր անից ու իջիր մեջը, շատ խորը չի, մի վախեցիր։ Շուտ արա, մինչև յես զբաղեցնեմ սրանց։

Իսկ ինքը մոտենալով դռանը, ձայն տվեց.—

— Սիրելիս, դեռ արհեստանոցը բաց անելու ժամանակը չի, մի ժամից հետո։

— Չենք յեկել կոշիկ պատվիրելու, բաց արա, պիտի խուզարկենք։ Կառավարական բանակն

արդեն քաղաքը վերցրել է, յերբ դուք դեռ քընած եյիք։

Վարպետն ուրախ շեշտ տալով ձայնին, բացականչեց.—

—Վա՛հ, եդ շատ լավ յեղավ։ Իսկ կարմիրները ի՞նչ յեղան։ Յերևի բոլորին էլ բռնել եք։

—Վոչ, փախել են, բայց մեր գործի մի մասն ընկել է հետևներից։ Անպայման կբռնեն։

—Աստուծով, աստուծով...

—Դե, դե, շուտ արա, ժամանակ չկա քեզ հետ յերկար խոսելու։

—Իսկույն, իսկույն, բանալին գտնեմ միայն։

Դարձավ, վազեց բակը, արձակեց պարանը ու հավաքելով, ներս մտավ, նետեց կաշիների մեջ և բաց արեց դուռը։

Մի սպա, փայլուն ուսադիրներով, ատրճանակը ձեռքին ու չորս զինվոր հրացանները պատրաստ, ներս թափվեցին։

—Դե ցույց տուր, վո՞րտեղ ես թագցրել մարդկանց,—ասաց սպան, ուղիղ վարպետի վրա գնալով։

Սակայն վարպետը չշփոթվեց։

—Իբր շատ ուրախ եյի, վոր նրանք այստեղ եյին, հիմի էլ նրանց պիտի թագցնե՞մ,—ասաց նա ժպտալով։

—Սուտ ես ասում, դու յել նրանցից ես, մենք այդ լավ գիտենք։ Դե շուտով ցույց տուր, վոր մեկ էլ տակն ու վրա չանենք։

—Համեցեք խնդրեմ, փնտռեցեք։

Սպան նշան արեց։

—Զինվորներից մեկն սկսեց արհեստանոցի անկյուններում յեղած իրերը շուռ ու մուռ տալ, իսկ յերեքն անցան բակն ու տունը։ Սպան մնաց արհեստանոցում։ Նա նստեց աթոռակի վրա, հանեց մի ծխախոտ ու վառեց։

—Զարմանալի մարդիկ եք, չեք կարողանում հասկանալ, ինչ վոր ասում են։ Անպայման ցանկանում եք, վոր ուժ գործ դնենք։ Հենց մտածում եք, թե այլևս Ռուսաստան գոյություն չունի, վոր այսուհետև կարող եք ձեր ցանկացածն անել։ Մենք դեռ ցույց կտանք այդ կեղտոտ ջհուդներին, թե ինչ է նշանակում հեղափոխություն։ Այնպիսի՛ հեղափոխություն խաղանք նրանց գլխին, վոր այսուհետև այլևս հավիտյանս չմոռանան։

Սպայի աչքն հանկարծ ընկավ դարակին դրած մի զույգ յերկարաճիտք կոշիկներին, նայեց իր, արդեն մաշված կոշիկներին, յելավ տեղից, մոտեցավ ու վերցրեց։

—Ո՞վ գիտի վոր բայլշևիկի կոշիկներն են։

Դե հիմի ել նրանք կոշիկի պետք չունեն։ Նրանց ուղարկելիք տեղերում կոշիկ չեն հագնում։ Հիմի մեզ ե պատկանում։ Վոչինչ, փոքրիս լավ կլինի։

— Լսի՛ր, — դարձավ նա զինվորին, — լա՛վ, թող, ինչպես յերևում ե, մարդը սուտ չի խոսում, փող չկա։ Թո՛ղ, արի կոշիկներս քաշի։

Զինվորը մոտեցավ ու մեծ ճիգով հանեց նրա կոշիկները և նետեց անկյունը։

Սպան հագավ նորերը, լավ զննեց և ապա գոհ սրտով դարձավ վարպետին. —

— Յերբ վոր տերը գա ստանալու, ասա, վոր յես վերցրի։ Դե, կանչիր մյուսներին ել, գնանք, բավական ուշացանք։ Շատ հիմար թաղ ընտրեցինք, բան դուրս չի գա։

Իսկ մյուս զինվորները տունը տակն ու վրա անելով և իրենց համար վոչ մի հարմարավոր բան չգտնելով, հայհոյում և ձեռքերն ընկած անպետք իրերը դես ու դեն եյին նետում։

Յերբ բոլորը հավաքվեցին արհեստանոց և սպայի գլխավորությամբ դուրս գնացին, վարպետը դուրս յեկավ փողոց, մի առ ժամանակ կանգնեց, նայեց աջ ու ձախ և հավաստիանալով, վոր ուրիշ յեկողներ չկան, վրա քաշեց դռները, փակեց, ապա պարանն առնելով, մոտեցավ ջրհորին ու կախ գցեց հորի մեջ։

9

Մի ամբողջ հավիտենականություն ապրեց Արգամը ջրհորում, վոտքերը ջրի մեջ, շարժվելու հնարավորությունից զուրկ։

Նա լսում եր, ինչպես զինվորները վազվըզում են բակում, հայհոյում։

Յերբեմն մեկն ու մեկը մոտենում եր հորին։

Մեկ անգամ նույնիսկ տեսավ մեկի վոտքը, վոր կես կախվեց հորի մեջ։

Նրան թվում եր, վոր իր տեղն արդեն իմացել են, կարծես լսում եր, ինչպես ծեծում, տանջում են վարպետին, վորը սոսկալի ցավերին չդիմանալով, հայտնում ե իր թագնված տեղը։

Թվում եր, վոր զինվորներն այլևս դիտմամբ չեն հեռանա, վորպեսզի ինքը մնա հորի մեջ ու սովից մեռնի։

Մեկ որ, թե մի քանի որ եր անցել արդեն իր ջրհորն իջնելուց հետո, նա այլևս չեր կարողանում վորոշել, բայց թվում եր, վոր դա վաղուց եր, շատ վաղուց։

Կամաց-կամաց վախի զգացումը տեղի տըվեց ու նա սուր քաղց զգաց։

Այժմ միայն այդ եր համակել իրեն։ Բայց աստիճանաբար այդ ել տեղի տվեց մի անորոշ անտարբերության։

Յեվ յերբ կախված պարանի ծայրը դիպավ ուսին, ուշաբերվեց և ուրախության մի խորը հառաչանք դուրս պրծավ նրա կրծքից։

Լսեց վարպետի կանչը, պարանը կապեց մեջքին ու աշխատելով շատ ծանրություն չպատճառել քաշողին, վեր բարձրացավ։

Լուռ, շնորհակալության անհուն զգացումով սեղմեց վարպետի ձեռքը, որը նրա թևից բռնած, տարավ սենյակ։

— Այս անգամ ազատվեցինք,— ասաց նա, սենյակ մտնելով։— Հանիր կոշիկներդ, թաց են։ Շորերդ էլ հարկավոր է փոխել, դրանցով իսկույն կճանաչվես։

Ու կնոջը պատվիրեց, որ հաց գցի։

Յերեխաներ չունեին. ինքն էր ու իր կինը։

Վստահ էր այլևս, որ Արգամն իր մոտ ապահով կլինի։

10

Յերբ անցան առաջին խառն որերը և քաղաքացիներն հնարավորություն ստացան քիչ թե շատ անվտանգ դուրս գալ փողոց ու շուկա և մահվան սպառնալիքով բացվեցին վաճառատները, Արգամը վարպետի միջոցով ձեռք բերեց մի ձեռք մաքուր, սև հագուստ իր բոլոր պարագանե-

րով, մուգ ակնոցներ ու մի փոքրիկ ճամպրուկ։

Կեղծ անցագրում նշանակված էր.—

«Արշակ Մարտինյան, փիլիսոփայության դոկտոր, 32 տարեկան»։

Նրա սև, փոքրիկ միրուքը, մուգ ակնոցները և սև, անբիծ հագուստը սպիտակ վզնոցով ու վառ փողկապով, նրա փիլիսոփայության դոկտոր լինելը վոչ մի կասկածի չեյին յենթարկում։

Հետևյալ որը դեռ շատ վաղ էր, որ շնորհակալություն հայտնելով վարպետին ու նրա կնոջը, ճամպրուկը ձեռքին, զգուշությամբ աննըկատելի անցնելով այդ նեղ ու հեռավոր փողոցով, քայլերն ուղղեց դեպի քաղաքի կենտրոնական մասում գտնվող շքեղ հյուրանոցներից մեկը։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

«Սիրելի Յերվանդ.

«Մի շաբաթ է, ինչ մենք գրավել ենք Ս-ն համարյա առանց կռվի։ Ընդհանրապես այս վերջերս մեր հաջողությունները մեծ են և առանց արգելքների առաջ ենք շարժվում։ Անցյալ օրը շքերթի ժամանակ զորավարն անձամբ ներկա էր ու ճառ արտասանեց, մատնանշելով, որ մեր հաջողությունները հետևանք են մեր նպատակի ճշմարտության, որ ժողովուրդը մեզ հետ է, և որ մոտ է ժամանակը մեր մայր յերկիրն ազատելու այդ բաղդախնդիր Թալանչիներից, որոնք մեր առջևից փախչում են նապաստակների պես։

«Յես համաձայն եմ իհարկե, որ մեր նպատակը ճշմարիտ է, բայց որ ժողովուրդը մեզ հետ է, դա մի քիչ կասկածելի յէ։ Մեզ հետ են առևտրականները, հողատերերը և ընդհանրապես դուքանչիները, բայց դա դեռ ժողովուրդ չէ։ Ո-

րինակ, այս շրջանի գյուղացիները խեթ աչքով են նայում մեզ և հացը թագցրել են. շատ մեծ դժվարությամբ և գյուղեր վոչնչացնելու սպառնալիքով հազիվ կարողանում ենք հաց ձեռք բերել զորքի համար։

«Սակայն այդ թողնենք. մեր բանը չէ քաղաքականությամբ զբաղվելը։ Մենք զինվոր ենք և կատարելու յենք, ինչ որ մեզ կհրամայվի. քաղաքականությունը թող վարեն նախարարները, ղեկավարները։

«Չափազանց լավ է անցնում իմ ժամանակը։ Ո՜, յեթե այստեղ լինեյիր, ուղակի խելքդ կկորցնեյիր... Ինչպիսի՜ շրթունքներ, կրծքեր, մատիկներ, տոտիկներ... հիմցք... իսկական դրախտ, այն դրախտը, որը խոստացել է Մոհամմեդը։ Այս անպիտան գավառներում իսկական գոհարներ կան։ Հագնվում և զարդարվում են այնպես որ... յերևելի՜։ Կաֆե-շանտան մտնելիս ուղղակի մի տեսակ անգիտակցական սարսուռ ես զգում այդ բոլոր բաց ու գիրգ կրծքերից, բազուկներից, ադամանդի և ամեն տեսակ գոհարների փայլից, տասնյակ հազարներ արժեցող հագուստների շքեղությունից։ Յեվ ինչպե՜ս կարողացել են այդ ամենը թագցնել բոլշևիկներից։ Ու դեռ ասում են, որ նրանք թալանում են։ Ինչ-

պես յերևում է, նրանք այդ խնդրում դեռ յերեխաներ են։ Ցերեկի մի յերկու կտոր փայլուն բան է ընկել ձեռքները և դրանով անասելի ուրախացած, մոռացել են ամեն ինչ ու հանգիստ նստել տեղերը։

«Դու պիտի տեսնեիր այն որը, յերբ մեզ ընդունում եյին։

«Վողջ քաղաքը զարդարված եր յեռագույն դրոշակներով, յեկեղեցիների զանգակները ղողանջում եյին զվարթ յերաժշտության նման, գլխավոր փողոցի յերկու մայթերը, սկսած կամուրջից, վորտեղով մենք մտնելու եյինք քաղաք, լի յեր մաքուր և շքեղ հագնված կանանցով ու տղամարդկանցով։ Աչքդ ուր վոր դարձնում եյիր, գեղեցկուհիների մի անվերջ ծով եյիր տեսնում, վորոնք ամբողջ փողոցը պատել եյին ծաղիկներով ու մեր անցնելու ժամանակ ել դեռ ծաղիկների տարափ եյին թափում մեզ վրա։

«Կեցցեներն ու վողջույնի ուրախ բացականչությունները վերջ չունեյին։

«Տատերը մոտենում, շոշափում եյին մեր ուսադիրները և ուրախությունից արտասվում, վոր մեկ ել հին որերի բոլոր նշանները պահող և կարգապահ զորք տեսան։

«Հիմա դառնանք ինձ։

«Ապրում եմ շատ ուրախ։ Առ այժմ հանգստանում ենք, ուստի յես զինվորականին հատուկ որվա թեթև պարտականություններից դուրս, ամբողջ ժամանակն ազատ եմ։ Բայց յեթե անգամ ամբողջ ցերեկն զբաղված լինեյի, դարձյալ վոչինչ, վորովհետև այստեղ կարևորը գիշերներն են։

«Ամենից առաջ սքանչելի յեն հարավի այս ժամանակվա գիշերները, վորոնք մայիսյան վարդից ավելի յեն բորբոքում մարդու արյունը։ Ապա, սա իր կանանչներով, ուղղակի հավիտենական կանանչներով, անսպառ, անվերջ, անհաշիվ ծաղիկներով ու ծառուղիների փարթամությամբ անշուշտ աշխարհիս լավագույն անկյուններից մեկն է։

«Կաֆե-շանտանների մասին ել չեմ ասում. յերևակայիր, վոչնչով հետ չեն մնում մայրաքաղաքից։ Գուցե մասամբ այդ նրանից է, վոր մայրաքաղաքի մի քանի աստղեր այստեղ են։

«Ո՜, ինչ որգիաներ ենք սարքում... գինի, շամպայն, կանայք... կանայք...

Առանձնասենյակներ պետք չեն, ինչ կարիք կա... բնության գրկում, զբոսավայրերում, պուրակներում, ամեն մի նոճու տակ մի մի առանձնասենյակ է իր սեզի փափուկ օթոցներով։

«Այդ պուրակները շատ բան գիտեն իմ այս վերջին օրերի կյանքից։

«Հիմի կմտածես, չէ՞ վոր այդ ամենը փող արժե, իսկ ստացած ռոճիկը շատ էլ մեծ բան չէ։

«Դե ի հարկե, ռոճիկն ինչ բան է, ծխախոտի էլ չի բավականացնում, բայց և այնպես, փող... վորքա՜ն ուզես։

«Քեզ հայտնի յե անշուշտ, վոր մեր գրաված վայրերն առաջին յերեք օրը պատկանում են մեզ, այսինքն դեռ իշխանություն չկա, և մենք, կարգ հաստատելու համար, ազատ ենք, ինչպես ասում են, աջից մտնել, ձախից յելնել։ Մեր այդ յերեք օրվա կատարածները վոչ վոք չի տեսնում և հանցանք չէ, այլ նշանակում է գրաված վայրը թշնամիներից մաքրել։ Ասենք այս ամենն իզուր եմ գրում, վորովհետև անտարակույս ձեզ մոտ էլ նույնն է։

«Յեվ այդպես, այս անգամ հրաշալի բաղդ ունեցա։ Իմ շրջանը հարուստ թաղերից մեկն էր, ուր ապրում եյին մի քանի հարուստ վոսկերիչ «ջհուդ»-ներ։ Դե գիտես էլի, տղերքին պատվիրեցի խիստ լինել դեպի թշնամիները։ Այնպես վոր, յերրորդ օրվան այլևս չսպասեցի. յերկու օրն էլ ինձ համար բավական յեղավ։ Տղաներին էլ չը-

մոռացյա ինարկե։ Այս դեպքում ուրիշ կերպ չի լինի։ Սոնիկյիս համար մի այնպիսի ապարանջան ունեմ, վոր ընկերուհիները նախանձից ուղղակի կտրաքվեն։ Յեթե աստված հաջողեց ու մենք հանդիպեցինք, քեզ էլ մի սքանչելի խալաթ կընվիրեմ։ Վոր հագնես, կդառնաս իսկական թուրք փաշա։ Դու, կարծեմ, շատ ես սիրում առավոտները խալաթով ձգվել գահավորակին, լրագիր կարդալ ու սուրճ խմել։

«Դե, ցտեսություն, սիրելիս, յես շտապում եմ։ Արդեն ժամը ինն է, գնալու յեմ մի տեղ հյուր։ Հա՛, հա՛, հա՛, գիտե՞ս, մի շատ հարուստ վաճառականի մոտ, վորն ունի մի սքանչելի աղջիկ և կամենում է ինձ հետ ամուսնանալ։ Դե ի հարկե, ո՞վ գիտե, վոր յես ամուսնացած եմ։ Հրաշալի պատառ է և մինչև ականջները սիրահարված է վրաս։ Յես էլ հո էշ չեմ, գիտեմ անելիքս։ Մեկ, յերկու... մի բուռ զնգզնգուն վոսկի, ինն ամսվա հիշատակ և... հայդա՜...

«Է՜, հե՜, հե՜, Նամակս յերկարեց ու յես էլ ուշացա։ Սիրունիկս անպայման կբարկանա։

«Լսում ենք, վոր ձեր գործերն այնքան էլ հաջող չեն։ Վոչինչ, մերը լավանալուց հետո, ձերն էլ կլավանա և շատ շուտով մայրաքաղաքում կհանդիպենք միմյանց»։

Քո՝ փոխ-գնդապետ Ա. Շեկոյան

«Ց. Գ. Ցերևի զարմանում ես, որ այսպես շուտ փոխ-գնդապետ եմ դարձել։ Մի զարմացիր, ծառայական արժանիքներիս համար այս անգամ արդեն ներկայացված եմ գնդապետի աստիճանի»։

Նույն

2

Կալվածատեր Անանյանի տանը խնջույք է։

Հրավիրված են զորավարը, նահանգապետը, հետախուզական բաժնի պետը և շատ այլ հյուրեր։

Բազմաթիվ սենյակներն ազատված որդերավորներից, կրկին փառահեղ տեսք են ընդունել և իրենց ճոխ ու աչքախտիղ զարդարանքի մեջ են ընդունում փարթամ հագնված կանանց, ոսլայավոր տղամարդկանց, ուսադիրավոր ու խըթանավոր ձիգ հագնված սպաների։

Մի կողմ դաշնակն է հնչում Անիկի ճկուն ու նուրբ մատների տակ, պարասերների վոսկորները կոտրատելով, վորոնք գիրգ պլլված հույզերի հորդանքից յելևեջող կրծքերով կանանց կիսամերկ մարմիններին, գլխապտույտ տարվում են վալսի դյութիչ ակկորդների մղումով, հազիվ զսպելով տենչանքը շատ մոտիկ շուրթերի։

Մի այլ կողմ կանաչ սեղանի շուրջ բոլո-

րած, թղթախաղն է գրավել շատերի ուշադրությունը, կապուկներով թղթադրամն ու գնդուն վոսկին մեկի առջևից մյուսի, յերրորդի առաջ տեղափոխվելով։

Իսկ այլ զանազան կողմերում զույգեր քաշված, հազիվ զսպած ցանկության տաք շնչով միմյանց դեմք այրելով, ակնթարթի յերջանկության հույզն են ապրում։

Դեռ ընթրիքի չնստած, բոլորն արդեն տաքացել են։

Մանիկն ապակեպատ սրահում, ծաղկամանների լայն թփերի տակ աննկատ, փարվել է սպայի կրծքին ու շշնջում է.—

— Կիսի, ինչ լա՜վն ես դու... դու էլ չես գնա, չէ՞, մենակ չես թողնի քո Մանիկին, այնպես չէ՞... Ա՜խ, ինչ յերջանկությունն է... Համբուրիր, մեկ էլ համբուրիր ինձ ամուր, շատ ամուր...

Գործարանատեր Աստուրյանի կինը՝ իրեն ամեն կերպ յերիտասարդացնող Սաթոն, վորի տարիքն անկարելի յե վորոշել և արդեն շատ վաղուց է, վոր այլևս չի վորոշվում, գնդապետ Սաշայի հետ քաշված մի հեռավոր անկյուն, յերազական հայացքով լսում է նրա այնքա՜ն հուզալից գաղտագողի խոսքերը։

— Ո՜, ձեր այդ հայացքը, տիկին, ձեր յելևեջող կուրծքը, վոր մարմարի պես փայլում է վրան հանգչող գոհարների միջից։ Ինչպե՜ս կուզեի այդ գոհարներին փոխարինել ու ինքս հանգչել այնտեղ և ծծել ձեր վողկույզների քաղցր հյութը։

— Իսկ ի՞նչ կլինի իմ այս կուրծքը, յեթե դուք գնաք և այն վայրենիները կրկին վերադառնան։

— Անհանգիստ մի լինիք, տիկին, շատ խորըն են թաղված նրանք մեր գնդաններում ու արդեն լավ են ճաշակել մեր ուժը, վոր մեկ էլ հիմարություն անեն շարժվելու։ Շուտով այդ կոմեդիան վերջ կունենա ու նրանց վերջնահաշիվը կտեսնենք։

— Ա՜խ, ինչ լավ կլինի, ինչ լավ կլինի... Թե չէ, հավասարվիր նրանց, ինքդ աշխատիր, մի հագնվիր... Ֆի՜, զզվելի յե։

Այնպես սեղմեցեք նրանց, վոր այլևս շունչ քաշել չկարողանան։

— Ապահով յեղեք, սքանչելի տիկին, այդ մասին այլևս պետք չէ մտածել, չարժե անգամ նրանց միտք գցել։ Նրանց հաշիվն արդեն փակույց և վերջացել։

Ու սովոր ձեռքերը հեշտությամբ գտնում են

ճանապարհը տիկին Սաթոյի վողկույզները տրորելու։

Զորավարը պատրաստվում է հեռանալու։

Այդքանն էլ բավական է, վոր շնորհ արեց նստելու մի ինչ վոր կալվածատիրոջ մոտ։

Զորավարի հետ հեռանում են զորամասերի հրամանատարներից մի քանիսը։

Այժմ ամենքն ավելի ազատ են զգում իրենց։

Ընթրիքի սեղանը բացվում է։

Ճոխ է, ամեն ինչ առատ։

— Մեր հաղթական սպայության կենացը։

— Կեցցե՜ մեր քաջարի զորավարը։

— Կեցցե՜ մեր գահակալը։

Հսկայական ծաղկեփնջերն ընթրիքի յերկար սեղանի զանազան մասերում դյութիչ կիսախավար են ստեղծել։

Սեղանի տակ ձեռքերի սեղմում... վոտքերի տրորտուք...

Կանանց բաց կոշիկներն հեշտությամբ են հանվում և մանրիկ տոտիկները հատակի պարսկական գորգի փոխարեն, տղամարդկանց ծնկներին հանգչում...

— Կեցցե՜ գեղեցկությունը...

Գեղեցկուհի Սոֆիայի կոշիկը շամպայնով

լեցուն, բաժակի փոխարեն վեր է բարձրանում և ձեռքից ձեռք անցնում։

Սպասավորները զսպանակավոր խաղալիքների պես արագ ցատկում են այս ու այն կողմ, խոնարհվում, ժպտում...

— Զորապետ, թույլ տվեք զինվորական յերաժշտախումբ բերել։

Կանայք խնդրում են ամեն կողմից։

Զորապետը զիջում է։

Գալիս է յերաժշտախումբը։

Տեղավորվում են միջանցքում։

Թնդում է կայսերական օրհներգը։

Յերերալով վոտքի յեն յելնում բոլորը ժըպտուն, վոգևորությունից փայլող աչքերով։

Ապա քայլերգ... մեկը, յերկրորդը, յերրորդը...

Բացվում են բոլոր պատի վարագույրները։

Խնջույքը փոխվում է անզուսպ խրախճանքի։

Մեկը մտել է սեղանի տակ ու ցած քաշելով իր հարևանուհու թափանցիկ զուլպան, համբուրում է ազդրը վարից վեր...

Մի կին արբած, պարկել է հարևան սպայի գրկում, թևը նրա պարանոցով գցած։

Սեղանի վերջում նստած սպան գրկած հարևանուհուն, դուրս է գնում սրահ։

Աղմուկ, աղաղակ։

Մթագնել են բոլորի աչքերը։

Յելեքտրական բազմաթիվ լապտերների լույսը կիսախավարի յե փոխվել, կարծես ծածկվել է մի անծայր մոխրագույն վարագույրով։

Վոչ վոք վոչինչ չի լսում։

Վոչ վոք վոչինչ չի տեսնում։

Կիրքը վեր է կանգնել ամեն ինչից ու իշխում է բոլորին։

Աղախինները վախից այլևս չեն համարձակվում սեղանատուն մտնել։

Սպասավորները թևերի տակ մտած, դուրս են տանում մեկին, վոր հանկարծ նստած տեղից սահելով, ընկել հատակին, սիրտ է հետ տալիս։

Ոդը խեղդուկ է։

Կանայք ուշաթափության նշաններ են ցույց տալիս։

— Ոդ, թարմ ոդ,—կանչում է մեկը։

— Դեպի դուրս, զբոսանքի...

— Կառքով, կառքերով...

— Գնդապետ, հրամայիր կառքեր բերել։

Քիչ անց կառքերը շարվում են դռան առաջ։

Յելնում են զույգ-զույգ, յերերալով, միմյանց բռնելով, միմիանց գրկում ու դուրս գնում։

Տեղավորվում են կառքերում։

— Գնդապետ, դուք ինձ հետ կնստեք։

Սաթոն բռնում է Կիսիի թևը։

— Գնանք։

— Ո՞ւր։

— Քաղաքից դուրս։

— Անգութն եք դուք, գնդապետ, վողջ գիշեր ինձ ուշադրության չառաք, — Սաթոն վերցնում է գնդապետի ձեռքն ու ամուր սեղմում։

Գնդապետը համբուրում է նրա ձեռքը։

— Պատրաստ եմ ծառայելու...

Դառնում է կառապանին, —

— Հետ մնա ու վերջից գնա։ Հետ չնայես, յեթե ուզում ես կենդանի մնալ։

— Լսում եմ...

Կառքը հետ է մնում։

Գնդապետը վարժ ձեռքով արձակում է Սաթոյի կոճակները։

Լույսը նոր-նոր բացվում է։

Փողոցներում սկսում են յերևալ մարդիկ, վորոնք պատերի տակով, գլուխները կախ, շտապում են գործի։

Նայում են սլացող կառքերին, գլուխները յերերում ու շտապում են հեռանալ։

Յեվ մի ցուրտ ազդող սարսուռ, այս նոր-

կալի տեսարանի հանդեպ, սուր ասեղների պես վոլորվում է նրանց ուղեղների մեջ։

Զորապետի կառքի ձին արագ ընթացքից շնչասպառ, ընկնում է գետին։

Զորապետը բարկացած է։

Նա չի ցանկանում առաջարկված կառքերից և վոչ մեկում տեղավորվել թե ինքը և թե իր ուղեկցուհուն տեղավորել։

Ճանապարհով անցնում է մի գյուղացի, վոր քաղաք է շտապում, իր հոգսերով ծանրաբեռ։

Հրաշալի՜ միտք։

Զորապետը կանչում է նրան։

— Լծվիր ընկած ձիու փոխարեն ու քաշիր կառքը, մյուսին հավասար։

Գյուղացին կանգնել է տարակուսած։

Փոթորկում է ներսը։

Զորապետը բարձրացնում է ատրճանակը։

Կառքը շարժվում է։

Կառապանի մտրակը մերթ-մերթ եվ կպչում է մարդ-ձիուն։

Ուրախ է տիկինը։

Ծափողում է։

— Ա՜խ, ի՜նչ սքա́նչելի միտք, դուք ուղղակի հանճար եք, զորապետ, յես յերբեք, յերբե՛ք չեմ մոռանա այս զբոսանքը։ Հա, հա, հա..

հրաշալի՜ յե... աննման... Ցեկեք համբուրեմ ձեզ դրա համար... սքանչելի յե...

3

Կյանքը քաղաքում բոլորովին այլ կերպարանք ե առել։

Խանութները լցվում ամեն տեսակ ապրանքներով, կարծես քմծիծաղ են տալիս իրենց մի քանի որ առաջվա կյանքը հիշելով, յերբ դարակների դատարկությունն եր ակնապիշ նայում իր խոր ընկած և ինչ վոր խորհրդավորությամբ պարուրված հայացքով։

Իսկ այժմ ծովի պես անվերջ փայլող ցուցափեղկերում գունագեղ փաթեթներով ու իրենց մարմնի գրավիչ մեղկությամբ կողք-կողքի նըստած, հուզալից ժպտում և գրավում են իրենց նայողներին, և կարծես ուրիշներից աննկատ աչքով անելով, ներս են հրավիրում։

Փրփուրի պես թեթև ու ծալ-ծալ, մետաքսե կտորներն են կախված վայելչորեն ու նազանքով, կանանց գիրգ ուսերի ու բարձր կրծքերի տենչն յերազելով։

Սպիտակ հացը փափուկ, իր անույշ բուրմունքով կարծես ժամանակի ծալքերում թաղված դարաշրջանի արևելյան գունագեղ յերազ լինի,

վոր իր տեսքով մոռացնել ե տալիս դառնությունները ու յերբեմնի կրած անագորույն քաղցը, անդառնալի անհուն վիհը նետում յերբեմնի ցեխագույն թեփախառն զանգվածի մասին ունեցած հիշողությունը, վորը հաց եր կոչվում և վորն ունենալու համար մարդիկ ժամեր շարունակ հերթի եյին կանգնում։

Ուտեստեղենի խանութների ծառայողները հազիվ են կարողանում բավարարել բազմաթիվ հաճախորդներին։

Բազմաթիվ կաֆեները լցուն, յեռում են աղմկոտ, հև ի հև։

Մարդիկ ամբողջ օրերով շատ-շատ, ան դադար մուտք ու յելք են անում և գրպան ու լեզու խանութ դարձրած, առնում են, ծախում։

— Վոսկի տասնոց ե պետք, ո՞վ ունի։

— Հն, նոցը... չե, ավել արժե։

Դոլլար, մարկ, ֆրանկ, կերենոկի, նիկոլաևսկի պտտվում են ձեռքից ձեռք, ընկնում, բարձրանում, մերթ անհայտանում, մերթ առատորեն հրապարակ իջնում։

Ու մի շարք ճարպիկ մարդիկ, մաքուր և նորաձև հագնված, ոսլայած շապիկները փայլուն, տենդային շարժումներով պտտվում են ամբողջ օրը հովի պես ու նրանց գրպաններն են

անցնում ադամանդ, վոսկի և զանազան այլ թանկագին քարեր։

Բոլոր նրանք, որ դեռ յերեկ կորաքամակ եյին ու վախվորած, զգուշությամբ աշխատելով իրենց անցյալի հանցանքները թաքցնել, այսոր հպարտ, ուրախ ու իրենց յերջանիկ զգալով, կարծես կամենում են իրենց կորցրած որերի փոխարեն կրկնապատիկն ստանալ կյանքից։

Ու վազում են, վազում են վորսալու...

Պատերին փակցրած մեծատառ հայտարարությունների մի մասը կայսերական թատրոնի աստղերից մեկի ներկայացումն է ազդարարում, մյուսները՝ համաշխարհային հռչակ վայելող կաքավչուհու յերեկոյին հրավիրում։

Կաֆեներում բայադերաները խոստանում են մինչև լույս աննկատելի դարձնել սահող գիշերը, վորը մարմինների բույրով արբեցած, պտտվում է վորպես անվորսալի ակընթարթ։

Իսկ «Ասվագն» ամեն որ հանգստացուցիչ լուրեր է ստանում ու խոշոր տառերով գրած կպցնում իր մեծ ցուցափեղկին.—

«Հայրենիքի հարավային մասն արդեն մաքրված է կարմիրներից ամբողջությամբ։ Մեր զորքերի հառաջխաղացումն ամեն ուր փոխվում է հսկայական տոնակատարման և խրախճանքի...»

Յեվ այլն, և այլն...

Միշտ բարենպաստ, միշտ հառաջընթաց և հաղթական։

Սունկի պես բուսող՝ բայց փոքրադիր՝ լրագրերի անվանի և իրենց ուսերին լրագրողի բազմաթիվ տարիներ ունեցող խմբագիրները գեղուն գրչով մոտալուտ պայծառ ապագան են նկարագրում, յերբ ամեն ինչ կրկին իր հունի մեջ մտած, իր խաղաղ ընթացքը կբռնի, անփոփոխ սլանալու տարիների բարդերի միջով։

4

Արգամը ներս է մտնում սրճարան և մեջտեղի կլոր սեղանից առնելով մի լրագիր, քաշվում է հեռավոր անկյունն ու նստելով մի սեղանի մոտ, ցույց է տալիս, իբր կարդում է։

Սրճարանը կամաց-կամաց լցվում է հաճախորդներով։

Ծառայողներն անընդհատ կատարում են սրա ու նրա պատվերները։

Մի սպասավոր մոտենում է Արգամին ու բարձր ձայնով հարցնում.—

— Ի՞նչ կհրամայեք, պարոն,

ապա կամաց շշնջում.—

(— բոլորին հայտնված է)։

Արգամն իջեցնում է լրագիրն ու պատվիրում.—

— Մի բաժակ ֆրանսիական սուրճ,
յեվ ապա կամացուկ.—
(—հավաքվելու՞ մասին)։
— Ուրիշ ի՞նչ կհրամայեք հետը մատուցել, պարոն...

(—սպասում են քո վորոշման)։
— Տվեք հաց և յուղ...
(—լավ, կասեմ)։

Արգամը կրկին բարձրացնում է լրագիրն, իբր թե կարդում է, բայց միտքն այլ ուղղությամբ է գործում։

Իր անցագրով ու տիտղոսով նա հեշտությամբ, առանց կասկածի յենթարկվելու, կարողացավ տեղավորվել այն հյուրանոցում, ուր կանգ եյին առել շատ բարձրաստիճան սպաներ և, այսպես կոչված, կառավարական անձինք։

Աշխատելով միշտ լինել ուրիշների աչքի առաջ, կաֆեներում, շանտաններում, առաջնակարգ ճաշարաններում, նույնիսկ չխուսափելով ծանոթությունից մի շարք սպաների ու կանանց հետ և մեկ-մեկ էլ մասնակցելով նրանց քեֆերին, նա կարողացավ հնարավորություն ստեղծել կապ հաստատելու նախ տեղում, բանվոր-

ների ու դժգոհների հետ, ապա դուրսը՝ իր ընկերների։

Գլխավոր աջակիցը սրճարանի սպասավորն էր, վորին նա հեշտությամբ իր կողմն էր դարձրել այն որվանից, յերբ մի սպա հարբած վիճակում ատրճանակը հանելով՝ կամեցել էր խփել նրան, իր պահանջը քիչ ուշ կատարելու համար։

Մոտիկ նստած Արգամը նկատելով այդ, թռչում է տեղից և մի վոստույնով մոտենալով նրանց, խփում է սպայի թևին վարից վեր և գնդակը առաստաղին է առնում։

Այնուհետև Արգամը հարմար առիթներին խոսակցելով նրա հետ, պարզում է իր ով լինելը և առաջարկում է միասին աշխատել։

Սպասավորը դառնում է նրա ամենագործոն աջակիցը և վորպես տեղացու, հանձնառու յե լինում կատարել ամենավտանգավոր և կարևորագույն հանձնարարությունները։

Յեվ ահա վերջապես, կարևոր համարելով ժողով գումարել, ժամանակավոր գործող մարմին ընտրելու, նա սպասավորի միջոցով հայտնել էր բոլորին իր այդ նպատակն ու դրական պատասխան ստացել։

Հարկավոր էր որ և տեղ նշանակել։

Որը հեշտ էր, կարևորը տեղն էր։
Պետք էր խիստ զգույշ լինել։

Հետախուզական բաժինը խիտ ցանցով պատել էր քաղաքը և մի չնչին կասկած բավական էր, որ մարդիկ բռնվելով տարվեին, այլևս հետ չդառնալու պայմանով։

Սպասավորը բերեց սուրճը,—

— Համեցեք, պարոն...

(—հավաքվեցեք ինձ մոտ)...

— Շնորհակալություն...

(—բայց)...

......

— Ես հաց և յուղ էյի խնդրել,—

(—ընտանիքը...)

— Իսկույն, պարոն։

(—գիշերվա տասներկուսին)...

Շտապեցեք խնդրեմ։

(— լավ)։

5

Գիշերվա ժամը տասներկուսին Արգամը հանգիստ իջնում է հյուրանոցից և մի խուլ փողոցի անկյունում հագնելով կեղծամ, հեռավոր փողոցներով աննկատելի հասնում է նշանակված տեղը, ուր նրան են սպասում հավաքվածները։

Անմիջապես կազմվում է ժամանակավոր մարմին, բաժանվում է աշխատանքը։

Խիստ և մանրակրկիտ հսկողություն կատարվող գործաշարժումների, ռազմամթերքի վրա և առաջացող խուլ տրտունջի օգտագործում։

Գործը վարել առանց շտապելու, զգուշությամբ, հաշվի առնելով բոլոր տվյալները և սպասել հարմար առիթի։

Վորոշվում է հավաքույթի վայրը։

Եվ բոլոր մանրամասնությունների քննությունից հետո, ուշ ժամանակ, մեկիկ-մեկիկ հեռանում են բոլորն անշշուկ։

Արգամը կրկին իր փիլիսոփայության դոկտորի տեսքով, գլխավոր և լուսավոր փողոցներով հանդարտ անցնելով, ներս է մտնում կաֆեշանտան և միանում իր ծանոթ սպաների ու կանանց խմբին։

Անսահման ուրախ է։

Այդպիսի ուրախ տրամադրությամբ ծանոթները նրան առաջին անգամն են տեսնում։

— Մեր փիլիսոփան, ինչպես յերևում է, մի սքանչելի Եվայի գրկից հենց հիմա յե դուրս պրծել,- կատակում է մի սպա, ձեռքը նրա ուսին խփելով։

— Դե, դե, միթե՞ ինձանից էլ լա՞վն է,—

կշտամբում է նրան մի տիկին ու տեղ տալիս իր մոտ։

Արգամն ուրախ է։

Դադարկում է առաջարկած լիք բաժակը։

— Այո, պարոններ, պարոն սպան ճիշտ նկատեց։ Շատ եր այրող այն գիրկը, որ գըտնվում եյի յես քիչ առաջ։ Այրող, խանձող, նա փոթորկել է իմ վողջ արյունը և այժմ յես անսպառ ուժ եմ զգում իմ մեջ...

Սպաներից մեկը ծիծաղում է քահ-քահ։

— Եհե՜, մեր փիլիսոփան, հակառակ իր մըռայլ բնավորության, այսոր սոխակ է դարձել։ Ինչպես յերևում է, շատ է դյուր յեկել նրան իր այսորվա կյանքը։ Լցրեք բաժակները պարոնայք և տիկիններ, խմենք փիլիսոփայի ու նըրան անսպառ ուժ պարգևող գրկի կենացը։

Բաժակները զնգում են միմիանց կպչելով ու դատարկվում մի ումպով։

6

Որերի սրընթաց վազքի մեջ մեկը՝ տիրողները նորանոր միջոցներ են փնտռում իրենց տիրապետությունն ամրապնդելու և ընդարձակելու և այդ ցանկությունն իրագործելու համար միջոցների մեջ խտրություն չեն դնում,

իսկ մյուսը՝ սպասավոր, արհեստավոր, բանվոր, լուցկիավաճառ, կոշիկ մաքրող ի մի համախմբված, ել չեն կամենում ընկած ձիու փոխարեն լծվել ու մտրակի հարվածներով վազել, առանց իրենց սեփական կամքի ու ցանկության։ Նրանք պահանջում են կապանքների խորտակում, մարդկային իրավունքների վերահաստատում։

Նրանք կամենում են իրենց կամքն ունենալ։

Ու բարձրացած ալիքները ծավալվում են, տարածվում ամենուրեք և ներքին հուզմունք ապրում։

Հուլիսյան տապ որերն են արդեն։

Դաշտային աշխատանքների յեռուն շրջանը։

Խոտն ու հասկալից արտերն աշխատավորներին են սպասում անհամբեր։ Այգիներն ու պարտեզները պապակ, հևացող կրծքով զովություն են խնդրում, դալուկ հայացքներն ուղղած դեպի ճանապարհներն ու կածանները։

Սակայն այլևս կարող և հուժկու ձեռքերը չեն մոտենում նրանց, իսկ կանանց ու յերեխաների բազուկները դեռ շատ թույլ են այս աշխատանքի համար։

Տղամարդիկ թագնվել են, նրանք չեն հա-

մարձակվում դուրս գալ թփերի, անտառների թավուտների գրկից։

Ընդհանուր զորահավաք է։

Զորք է պետք։

Զորք է պետք առաջ շարժվելու, զորք է պետք սահմանները պաշտպանելու, ներսում իշխանության կարգադրությունները իրագործելու։

Զորք է պետք ուղարկելու արևելք, հյուսիս…

Զորահավաք է։

Մեկ, յերկու, յերեք, հինգ, տասը տարվա։

Անխտիր, բոլորի։

Զորահավաք է բոլոր զենքի ընդունակների։

Վստահ իրենց ուժին, դեռ հավատացած մարակի ամենազոր ազդեցության, հղփացած իրենց ժամանակավոր հաղթանակով և այն ամրապնդելու տենչանքով հե ի հև, աչքերը յերկրի կենտրոնին հառած, մոռացած ամեն չափ ու սահման, հաղթողի անպատկառությամբ, հասու հրամանը թռչում է ամեն կողմ. —

— Գալ իրենց պաշարով, իրենց հագուստով։

— Մայր հայրենիքի սրբազան ազատությունն իր զավակներին է սպասում…

— Չներկայացողները հայրենիքի և կրոնի դավաճաններ են…

— Հայրենիքի թշնամիներ…

— Այդպիսիները կգնդակահարվեն առանց դատի, առանց քննության…

Սակայն ժամանակն անցնում է և վոչ վոք չի ներկայանում ինքնակամ։

Չի ցանկանում կտրվել իր դաշտերից, իր տնից։

Չի ուզում գնալ հեռուները, չի ուզում գործիք դառնալ ուրիշի ձեռքում, ուրիշի համար։

Չի ուզում դուրս գալ ինքն իր դեմ, իր նմանների դեմ։

Գյուղացիությունը հուզված է։

Հուզմունքն ալիքների պես օղակ-օղակ տարածվում, շարժվում, միանում, շղթայում է ամեն կողմից։

Հետախուզությունն ականջները սրել է։

Գործակալներն ամենուր են։

Գյուղերում, քաղաքներում, դաշտերում, փողոցներում, կաֆեներում, տներում։

Պատժիչ խմբերը թնդանոթով, գնդացիրներով շարժվում են աջ ու ձախ, պատժում են չենթարկվող գյուղերին։

Այրվող տների, դեզերի ծուխը յերկինքն ի վեր յելած, թանձր բակ է կապել։

Յեվ հավաքում են անհնազանդներին։

Հրացաններով, սվիններով շրջապատում, հոտերի պես քշում, բերում են և ուղարկում այս կողմ, այն կողմ...

Իրենց հարազատների դեմ...

Ու ծառանում են գյուղերը։

Ամեն թփուտ, բլուրներին ու սարերին թառած կուսական անտառների ամեն անկյուն ապաստան է նրանց համար։

Գյուղը գիտե միահամուռ ոտքի ելնել, նա գիտե բոլոր կամքերից մի կամք ստեղծել և համառել։

Նա համառ է աշխատանքի նման։

Նա գիտե անընդհատ աշխատել իր դաշտում, իր պարտեզում ու մարգում, նա համառ աշխատանքով ապառաժների վրա հողաշերտ գոյացնելով, գիտե իր քրտինքով ոծել այն ու իր ապրուստը հայթայթել, բայց և գիտե լքել իր դաշտն ու այգին, իր տունն ու ընտանիքը և զենքը ձեռքին պաշտպանել իր կամքը, իր ցանկությունը, մանավանդ երբ նա գիտակցել է, արդեն զգացել, որ երկրի բաղդի փոփոխությունը մեծապես կախված է նաև իրենից։

Երկար ու ձիգ տարիների տառապանքից ազատագրված, փշրած կաշկանդումների ծանր շղթաները, տեր դառած իր աշխատանքին ու հողին, տեր դառած իր ապրումի դատավորման, նա այլևս ոչ մի կերպ չի կամենում ձեռքից տալ այդ ամենը, չի կամենում վերադառնալ այլևս իր կոտրած տաշտակին և մարած օջախին։

Զգուշացիր այլևս ձեռք տալ նրան։

Այլապես առերևույթ խաղաղ ծովի ներսը կփոթորկվի ու անսպասելի կերպով լեռնացած ալիքը երեխ ելնելով, իր ահռելի ուժով կփշրվի, խորտակելով իր ճանապարհին կանգնած ամեն մեծություն, որքան էլ հաստատուն ու անմատչելի լինի այն։

Ու գյուղերը ծառացած՝ չեն կամենում այլևս անհայտ ապագայի շեմքին ձեռնթափ նստել ու պառավ պատմության նման սպասել գալիքին։

Արգամը հաշվի չի առնում դրությունը։

Նա ուրախությունից ջղայնորեն քրքջում, շփում է ձեռքերն ու սենյակում արագ-արագ քայլում է հետ ու առաջ, երկայնքով, լայնքով, անկյունից անկյուն։

Հարկավոր է ի մի հավաքել, միավորել բոլոր այդ ցրիվ ուժերը, հարկավոր է մի ընդհանուր նպատակի բերել նրանց, մի ընդհանուր գաղափարով բոցավառել նրանց ցանկությունները։

Հուզմունքն ամենուրեք է։

Քաղաքն ողակաձև շրջապատող բոլոր գյուղերը պատրաստ են վոտքի յելնելու, իսկ քաղաքում զորքի թիվը մեծ չէ, սպայությունն զբաղված է քեֆերով և շնիկների պես կանանց ծառայելով։

Մի փոքրիկ ցնցում և միջանցիկ շրջանից միայն հիշատակ կմնա, վորպես մոտիկ անցյալի դառն որերի մի սև կոթող։

7

Ժամանակավոր մարմնի անդամները հավաքված կոշկակարի բնակարանի ներքնահարկում, մթության մեջ, նստած այս ու այն անկյունում, վորը գետին, վորը ցած աթոռակին, խորհրդակցում են ստեղծված դրությունն ոգտագործելու մասին։

Զենք է հարկավոր։

Գոնե մի քանի տասնյակ հրացան ու մի քիչ փամփուշտ։

Գյուղերում համարյա զենք չի մնացել։

Հավաքված է ամեն սպառնալիքների տակ։

Միակ միջոցը զինապահեստի գրավումն է։

Վտանգավոր է, անհավատալի, բայց և միակ յելքը։

Լռության ու խավարի մեջ մի խումբ կտրիճներով պիտի շրջապատել զինապահեստը, լռեցնել պահակներին, ապա հանել ըստ հնարավորի շատ հրացան ու փամփուշտ։

Ծանր է փորձությունը, բայց այլևս ուրիշ միջոց չկա։

Վորոշվում է գիշերն իսկ գնալ գյուղերը և հանել գոնե հիսուն լավ զինված տղաներ, վորոնք յերկու որից պատրաստ, պիտի թաքնված լինեն քաղաքին մոտիկ անտառում և սպասեն կարգադրության։

Հարձակումը զինապահեստի վրա ղեկավարելու յե Արգամը, վորը մինչ այդ դեռ մնալու յե քաղաքում, իր փիլիսոփայության դոկտորի տեսքի մեջ, ուշադրությամբ հետևելով տեղի ունեցող անցքերին և ըստ այնու մշակելով հարձակման ծրագիրը։

Դիրքերի ուսումնասիրությունը հանձնարարվում է սպասավորին, վորպես քաղաքում ավելի լեգալ և սպաների կողմից կասկածի չյենթարկվողի։

Ու գոհունակ ժպտով, գալիքի հույզերով լեցուն, խավարի մեջ սեղմում են միմյանց ձեռք և դուրս գնում, ամեն մեկն իրեն բաժին ընկած պարտականությունը կատարելու։

Յերկու որ հետո, յերեկոյան, սպասավորն Արգամին թեյ մատուցանելու ժամանակ շշընջում է.—

— Գիշերն անտառում...

Ու կես գիշերին Արգամը դեն գցած վրայից փիլիսոփայության դոկտորի սև հագուստը, ոսլայած շապիկն ու ակնոցները, հագած իր նախկին շորերը, ատրճանակը գրպանում, քաղաքի խուլ փողոցներով աննկատելի քայլում է դեպի անտառ։

Այնտեղ նրան են սպասում հիսունից ավելի սպառազեն յերիտասարդներ, պատրաստ նրա ամեն մի կարգադրությունն անհապաղ կատարելու։

Կարճ է նրա խոսքը։

Կարճ է ու ազդու։

Բաժանված մի քանի փոքրիկ խմբակների, զանազան կողմերով մոտենում են զինապահեստին, վոր քաղաքի կենտրոնից հեռու, մի քարե հաստատուն շենք է, պահապանների արթուն հսկողությանն հանձնված։

Սողում են ամեն կողմից աննկատելի ըստվերներ ու կատվի արագաշարժ վոստյունով լռեցնում պահակներին, խլելով հրացաններն ու բերանները փակելով խիստ հսկողության տակ։

կտրվում են հեռախոսի լարերը։

Լռության մեջ կոտրվում է պահեստի դուռը և խուրձերով հրացաններն ու արկղներով փամփուշտը տեղափոխվում է այդ ժամանակ մոտեցած ինքնագնաց։

Յեվ մինչ փախչել հաջողեցրած պահակը հևի հև վազում է զինապահեստի պարետին զեկուցելու, մինչ նրան յերկար փնտռելուց հետո վերջապես գտնում է կաֆե-շանտանում հարբած վիճակում և հայտնում կատարված դեպքը, մինչ նա ուշաբերվելով անսպասելի հայտնությունից, տեղեկացնում է ամենուր և զորք վոտքի հանում, արդեն Արգամն ու յուրայիններն ուսերին յերկ-յերկու հրացան էլ ավելորդ առած, առանց հուզվելու և քաջալեր ունեցած անսպասելի հաջողությունից, խիտ անտառների թավուտների ճամփան եյին բռնել, լեռներն յելնելու, մոտիկ որերի հսկա հրդեհի համար կայծեր ցանելով չորս բոլորքը։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Կատարված հանդուգն քայլը հանկարծակիի բերեց բոլորին։

Թվում եր, թե դիրքերը շատ են կայուն, վոր ամեն ինչ խաղաղ ե, սակայն պարզվեց, վոր արտաքին խաղաղությունը քողարկում ե ներքին խռովահույզ վիճակ։

Տարված անակընկալ հաղթանակի հղփանքով, շոյված խարխուլ իրենց վոտքերի տակ կորցըրած ու լոկ վորպես անցյալի բեկորներ մնացած և անցյալի շքեղության փեշերից կախված ու այն կորցնելու վախով սարսափահար մի խումբ մարդկանց վերամբարձ ընդունելությունից և նրանց կանանց աջ ու ձախ շռայլած փաղաքշանքներից, հենված առօրյա կենցաղի հետևից հև ի հև վազող և բացի իրենց բարեկեցիկ կյանքը, դեպի ամեն ինչ անտարբեր վերաբերմունք ունեցող ու իրենց համար անցյալ անդորր, ճանճային կյանքը վերադարձնող ամեն մի պայման փառաբանող քաղաքացիների անխոս հպատակու-

թյան հանգամանքի վրա, իրենց հզորության անյերկբայությունը վերագրելով ակամա խոնարհությունն այն բոլոր մարդկանց, վորոնց վորպես ձի, կարողանում եյին լծել իրենց խրախճանքի կառքերին, մոռացության եյին տվել թույնի այն աննկատելի յեռացումը, վորից վեր յելած գոլորշին աստիճանաբար թունավորում եր չորս բոլորքը, վրեժի անզուսպ կատաղությունը սնուցելով ամենուր։

Հանկարծակիի յեղած, վոտքի յելան ու վոտքի հանեցին այն բոլոր միջոցները, վոր կարևոր համարվեց։

Ու անելով զորավարի հրամանը՝ լինել անխիղճ, կանգ չառնել վոչ մի միջոցի առաջ՝ յերկար տարիներ գոմում, մթության մեջ պահված յերիվարի նման հանկարծ լույս տեսած, չափ ընկան առաջին պատահական ուղղությամբ, դեմ հանդիման արգելքի հանդիպելուս մի այլ կողմ դառնալով ու իրենց ճամփին տրորելով ամեն ինչ։

Անզորության կատաղությունից գետինն եյին դոփում։ Ավերածության փոշին բարձրացավ վեր ու տարածվելով, խիտ ամպի նման նստեց չորս բոլորքը, այն ամեն վայրերում, ուր հասնում եր նրանց ձեռքը։

Քաղաքն իր ամբողջ շրջանով հայտարարված է արտակարգ զինվորական դրության մեջ։

Պատժիչ խմբերը նստած են գյուղերում, ուր մնացել են միայն կանայք, յերեխաներ ու զառամյալ ծերունիներ։

Նույնիսկ այն տղամարդիկ, վորոնք յենթակա տիրող օրենքներին, հլու հնազանդ իրենց ուսերին ընկած բոլոր ծանրություններին, չեյին դժգոհում իրենց բաժին ընկած բեռը կրելու քրտնաթոր, չկարողացան հանդուրժել գոյություն առած դժոխքին ու միացան ապստամբներին։

Հետախուզական բաժնի աշխատանքը մեծացել, ծավալվել եր։

2

Կալվածատեր Անանյանը չեր կարողանում իրեն հաշիվ տալ։

Դեռ յերեկ նա այնպես հանգիստ եր։

Այնքան բազմերանգ ու վառվռուն եյին հեռանկարները։

Կրկին մաքրել եր տալիս ու կարգի բերում ամբարները։

Առանց իր նեղության, առանց իր գրպանից յելած ծախքերի, նրա բոլոր արտերը ցանված, մշակված եյին։

Մեկ անգամ գնացել, շրջել ու տեսել եր և հիացել ընդարձակ դաշտերում թեթև քամուց ծովի պես ալեկոծվող կանաչներով։

Գյուղացիք խեթ աչքով եյին նայել նրան, չեյին կամեցել թույլ տալ մոտենալու իր անծավալ այգուն, սակայն նա հաշվի չեր առել նրանց քրթմնջոցը, դժգոհության լուռ արտահայտությունը։

Նահանգապետը խոստացել եր, վոր իր կալվածքների բերքի տերն ինքն է, վոր կարևոր դեպքում ժամանակին նույնիսկ զինվորներ կտա բերքը հավաքելուն աջակցելու...

Յեվ հանկարծ...

Կրկին այդ ամենը կարող է յերազ համարվել...

Նա չի կարողանում հանգիստ նստել իր տեղում։

Շտապում է նահանգապետի մոտ։

— Վերցրեք ամենը, ինչ վոր ունեմ, իմս, մյուսներինը, առեք, գործադրեք զորքի պետքերի համար, միայն թե ազատեցեք մեզ նրանց կրկին վերադարձից, փրկեցեք այդ սրիկաներից մեր յերկիրը, մայր Ռուսաստանը...

Նահանգապետը հանգստացնում է։

— Հանգիստ շարունակեցեք ձեր օգտավետ

գոյությունն ու գործը ի պայծառացումն մեր տանջված հայրենիքի։ Մի խումբ ակլորներ մեզ ոչինչ չեն կարող անել, մեր դրությունն անսասան է։ Շնորհիվ ձեզ նման մեծ հայրենասերների հոգացողության, մենք պատվով դուրս կգանք մեր ստանձնած ծանր պարտականությունից ի փառս հայրենիքի ու մեր օգոստափառ վեհապետի։ Մենք կլինենք անխնա, չենք տարբերի նույնիսկ կանանց։ Արդեն մեծ թվով զորք է ճանապարհվել, շուտով տեղ կհասնեն և մենք հրով ու սրով կանցնենք ամբողջ շրջանի վրայով։ Գնացեք և ապահով յեղեք։ Հաղորդեցեք իմ ամենախորին հարգանքները տիկնոջն ու քնքույշ դստրերին։

Հուսադրված հեռանում է Անանյանը, սակայն սիրտն այնուամենայնիվ անհանգիստ է։

— Կրկին որդերավորներ... հին հագուստ... աղախնի ու բանվորների ծաղրական հայացք, յերբ ինքն ստիպված պիտի լինի շուկայից իր սան որվա պաշարը ձեռքից կախած, տուն տանել։

Մի՞թե միայն այդքանը...

Ցեթե միայն դա լինի...

Իր ցույց տված ընդունելությունը, իր կոպիտ վերաբերմունքը դեպի որդերավորները, դեպի աղախինը, դեպի շատերը, շատերը...

Իր ցուցմունքով բանտարկվածները...

Բոլորը հայտնի յեն, նրանք բոլորը կիմանան։

Կհայտնեն, անպայման կհայտնեն։

Ի՞նչ գիտես ո՞վ է չորս բոլորդ։

Սակայն ընդհանուր շփոթությունն անցնում է։

Մի պահ ցնցում է ու կրկին բաշվում, կարծես թաքնվելով և մի ավելի հարմար առիթի սպասելով, որ հանկարծակի վոստյունով կրկին հայտնվի, իր ճանկերի մեջ առնելու նրանց։

Կյանքը կրկին շարունակվում է նախկին թափով։

Շանտանները յերեկոյան մութը ծավալվելու հետ սկսում են հեալ մինչև առավոտ։

Խմիչքների, խորտիկների հոտը միախառնված ծաղկի, շպարի, ներկերի, վարդաջրերի ու բաց մարմինների բույրին, գլխապտույտ կլանում է բոլորին։

Պուրակները լցվում են զույգերով։

Կառքերը, ոթոնները սլանում են քաղաքադուրս։

Արդեն գնդապետական ուսադիրներ հագած Շեկոյանը թևը վաճառականի աղջկա մեջքով պատած, կրքից դողացող ու ընդհատ ձայնով շշընջում է սեր, հավատարմություն, հավիտենական կապ։

Աղջիկը՝ դեռ այնպես դեռատի՝ հավատացած մարդկային խոսքին, վստահորեն փարվում է նրան, իր նոր արթնացած առաջին բուռն ցանկությամբ փոթորկված։

Յեղածը...

Չարժե ուշադրության առնել։

Կբռնվեն...

Արդեն բռնված են...

Ամեն ինչ լավ է ընթանում։

Այդպիսի դեպքեր միշտ կպատահեն, սովորական յերևույթ է մեր օրերի համար։

Լրագրերը լույս են տեսնում լուսաբանող հոդվածներով։

Դեպքը կատարել են հենց իրենք, պահակները, տարել են մի քանի հրացան, ծախելու նպատակով։

Հասարակ գողություն։

Մի խումբ լրբացած զինվորների կատարած հանցանք։

Նշանակություն չպետք է տալ։

Մայր հայրենիքին դավաճանած մի քանի ավազակ զինվորներ են, վոր իրենց պատիժը կստանան։

Քաղքենիները հանգստանում են։

Վաճառատներն ու շուկան նույն հանգըս-

տությամբ շարունակում են իրենց առևտուրը։

Թագնված ապրանքները նորից մեջտեղ են հանվում։

Հանգստանում է Անանյանը։

Ուրախությունից ձեռքերն է շփում։

Ապագայի վառվռուն ծրագրեր է գծում։

Յեվ կարգի յե բերում ամբարները։

3

Արգամի բացակայությունը նկատվում է յերկրորդ որը միայն, յերբ անցնում է առաջին շփոթությունն ու նման դեպքում տեղի ունեցող անկապ վազվզուքը և յենթադրությունները։

Հետախուզական բաժինը խուզարկում է փիլիսոփայության դոկտորի գրաված սենյակը, հարցաքննության է յենթարկում սպասավորներին, հյուրանոցատիրոջ, նրա հետ ծանոթություն ունեցող սպաներին, կանանց։

— Ո՞վ եր նա, վո՞րտեղից յեկած։

Վոչ վոք վոչինչ չգիտեր։

Հանդերձներից ու դատարկ ճամպրուկից բացի վոչինչ չի գտնվում։

— Նա յե, — յենթադրում է հետախուզությունն ու փնտռում թելերը։

Սկսում են հայտնի ու գաղտնի ձերբակալություններ։

Սպասավորը մնում է հանգիստ։

Նա շատ խոնարհ է յերկտակվում պատվերները կատարելիս։

Շատ սիրալիր է, քաղաքավարի։

Նրանից չեն քաշվում, նրա ներկայությամբ խոսում են ազատ։

Առանձասենյակներում պահանջում են, վոր նա ծառայե։

Նա գիտե գաղտնիքներ պահել։

4

Քաղաքի կենտրոնական մասում, մի շատ հաստատուն յերկհարկանի քարե շենքի մեջ է տեղավորված հետախուզական բաժինը։

Վերին հարկում գրասենյակներն ու առանձնասենյակներն են, առաջին հարկում տեղավորված են գործակալներն ու պահակները, իսկ ստորին, գետնահարկ նկուղը հատկացրած է կալանավորներին։

Մուտքի մոտ, բերանը դեպի հրապարակ ուղղված, կանգնած է մի թնդանոթ, իր հատուկ պահակով, մուտքից ներս, դռների դիմաց բարձրացող աստիճանների վերին փոքրիկ հրապարակում աջ ու ձախ դրված են յերկու գնդացիր, իրենց գործադրող գինվորներով, վորոնք ձիգ կանգնած նրանց մոտ, առաջին նշանին են սպասում։

Վողջ շենքը չորս բոլորբից հանձնված է պա-

հակների հսկողության, վորոնք հրացանները ձեռքներին միշտ պատրաստ, միապաղաղ քայլում են անկյունից անկյուն հետ ու առաջ։

Կարելի յե ներս մտնել հատուկ թույլտվությամբ։

Դուրս գալիս էլ առանձին թույլտվություն է պահանջվում։

Ներս մտնողը դժվարությամբ է դուրս գալիս։

Իսկ իրենց կամքին հակառակ ներս տարածներից դեռ վոչվոք չի դուրս յեկել։

Իրենց կամքերից անկախ տարվածների թիվը շատ է։

Մանավանդ վերջին որերս։

Փակված են նրանք մի քանիսը միասին, մի մասն էլ առանձին-առանձին, քարե խոնավ ու մութ արկղի մեջ և մոռացել են ժամանակի գոյությունը։

Մեկ որ է, շաբաթ, ամիս... չգիտեն։

Չգիտեն արդյոք դրսում գարուն է, ամառ, թե արդեն ձմեռն է իր ցուրտ շնչով ավիրել բնության կանաչի գեղեցկությունը։

Մոռացել են մարդու մասին ունեցած իրենց նախկին հասկացողությունը։

Ամեն որ տեսնում են միայն գազանների,

վորոնք արյունոտված աչքերով, ատամների կըր-ճըտումներով ամեն ակնթարթ պատրաստ են անակնկալ վոստյունով հարձակվել իրենց վրա ու պատառոտել։

Յերկոտանի գազաններ։

Յերկոտանի գազաններ, վոր իրենց իմա-ցականության շնորհիվ գիտեն տանջանքի այն-պիսի ձևեր հնարել, վորի առաջ վայրի վագրն իսկ սոսկմահար կլինի։

Հաստ ու խուլ պատերի միջից անգամ հո-շոտված մարդկանց ծանր տնքոցը լսվում, տա-րածվում է նկուղից նկուղ ու սարսափ ազդում։

Դեպոյի բանվոր Սեդրակը յերեք որ է, ինչ ընկել է այդ քարե տոպրակի մեջ ու թվում է նրան, վոր արդեն մի ամբողջ հավիտենակա-նություն է անցել։

Բանտարկեցին, վորովհետև տեղի ունեցած դեպքի մասին մեկ որ ընդհանուր խոսակցու-թյան ժամանակ չկարողացավ իր ուրախությու-նը և հիացմունքը թագցնել։

Ժպտաց ուրախ ու խորհրդավոր։

Մոռացավ մի ակնթարթ, վոր գործակալնե-րը վխտում են չորս կողմը։

Մի քանի րոպեյից հետո, յերբ հանգիստ գնում էր տուն իր յերեխաների ու կնոջ մոտ, ձերբակա-լեցին։

Յերեք որ է անցել ընդամենը, բայց նրա լայն ու հուժկու թիկունքը կորացել, յերկաթե բազուկները սմքվել են ու ծերացել է ժամա-նակից շատ վաղ։

Մարմինը վողջ կապտած է անխնա և ան-հաշիվ հարվածներից, թևերի մսերը տեղ-տեղ պոկված են ատամնավոր աքցանով։

Տնքում է ամբողջ մարմինը։

Մազերին անգամ ձեռք տալիս ցավ է ըզ-գում։

Յեվ ահա յերկու զինվորի ուղեկցությամբ կրկին ներս է մտնում նրա մոտ հետախուզու-թյան պետի ոգնականը, մի կարճահասակ, կախ ընկած թշերով, անքնությունից և արբեցողու-թյունից դուրս ընկած անփայլ աչքերով մի սպա։

Սեդրակի մարմնով սարսափ է անցնում։

Սպայի արբած լինելն անկասած է։

— Հը՞, ասելո՞ւ ես այս անգամ, թե վոչ, — դառնում է նա Սեդրակին սպառնալից։

Սեդրակը լուռ է։

— Լռո՞ւմ ես։

— Արդեն ասել եմ, ուրիշ ասելիք չունեմ։

— Ովքե՞ր են այդ սրիկաները։

— Յես նրանց չեմ ճանաչում։

— Վո՞րտեղ են գտնվում այժմ նրանք։

— Ինձ հայտնի չէ նրանց տեղը։

— Կրկի՞ն համառում ես։

— . . .

— Պիտի պատասխանե՞ս, թե ոչ։

— Միևնույն է, դուք ինձ չեք հավատալու։

— Ասա ճշմարտությունը։

— Ասել եմ ամեն ինչ. յես ոչ մի տեղեկություն չունեմ։

— Սուտ է։

— Դա յե միակ ճշմարտությունը։

— Այդպես ուրեմն . . . Լավ, լավ, մենք այդ կանենք։ Իսկույն, իսկույն, մենք այդ կըտեսնենք...

Սպան մեկ-յերկու անցնում է նկուղով, ապա դառնալով զինվորներից մեկին, հրամայում.—

— Իսկույն մի բահ բեր։

«Ինչ սատանայական միտք է հղացել»,— սարսափով մտածում է Սեդրակը։

Քիչ հետո վերադառնում է զինվորը, ձեռքին մի բահ։

Սպան առնում է բահը, պատից քիչ հեռու մի գերեզմանատեղի հաշվով գիծ քաշում ու բահը մեկնում Սեդրակին։

— Առ ու փորիր։

Սեդրակը կանգնած է լուռ ու սոսկահար։

— Ինքդ փորիր քո գերեզմանը. . .

Ու հանում է ատրճանակը։

Սեդրակն հնազանդվում է։

Ձեռքերը չեն հպատակվում, մարմինը դողում է, ատամներն իրար են կափկափվում, բայց փորում է։

Գետինն ամուր է, դուրս է գալիս խիճ, մանր քարեր։

Սպան նստած մի անկյունում, պատի տակ, անտարբեր ու վոչինչ չարտահայտող հայացքով նայում է ու ծխում։

Յերկու զինվորները հրացանները պատրաստ, կանգնել են դռան այս ու այն կողմերում։

Իսկ Սեդրակը փորում է։

Բաց դռնից ընկած աղոտ լույսի տակ Սեդրակը, այլևս առանց վորևէ մտածումների, փորում է չափված փոսը։

Փորում է իր գերեզմանը։

Դռան մոտ կանգնած զինվորների դեմքերը սարսափից դալարվում են։

Վախով նայում են միմյանց ու աննկատելի ցնցումով, կատարվող սոսկալիությունը հաղորդում մեկը մյուսին և ցավակցական մի գաղտագողի հայացք նետում Սեդրակի վրա, վորի ձեռքում թույլ-թույլ շարժվում է բահը։

Փոսը՝ գծված յերկարությամբ ու լայնությամբ, փորված է արդեն մեկ արշինաչափ խորությամբ։

Սպան մոտենում է, նայում ու հրամայում.—

— Բավական է։

Առնում է բահը, զինվորներից մեկին հանձնում։

—Այժմ գիտես, թե ինչ է սպասում քեզ,— դառնում է նա Սեդրակին,—խոստովանիր ու անմիջապես ազատ կարձակվես։

Սեդրակը լուռ է։

Սպան կատաղած հարձակվում է վրան, բռնում ուսից ու թափահարում։

— Ասա՛...

Սեդրակը կրկին լուռ է։

— Խոսելո՞ւ ես վերջապես։

— Արեք, ինչ որ կամենում եք,—շշնջում է Սեդրակը նվաղուն ձայնով։

— Ուրեմն չե՞ս ասում, չե՞ս ուզում ասել։ Շատ լավ։ Դեհ, կանգնիր պատի մոտ։

Ու բռնում է Սեդրակին, կանգնեցնում իր փորած գերեզմանի ափին, պատի տակ, ապա հրամայում զինվորներին կանգնել դիմացը, հրացանները նրան ուղղած, ինքը քաշվում է հեռու և կրկին ծխախոտ վառելով, կանգ առնում։

— Վերջին անգամ ասում եմ, խոստովանիր ու փրկիր ինքդ քեզ...

— ...

— Դու չե՞ս պատասխանում։ Այդպե՞ս ուրեմն։

—Պատրա՛ստ։ Մեկ... Յերկու...

— Այժմ ինչպե՞ս, կասես...

— Ասելիք չունեմ, միայն թե խնդրում եմ, հրամայեցեք միանգամից կրակել։

—Ա՜խ, այդպես, սարսափո՞ւմ եք, մահը ծանր է ձեզ համար։ Ասացեք խնդրեմ, ինչ քնքուշն եք յեղել։ Ո՛չ, դուք մեկ անգամ չեք մեռնի, դուք կմեռնեք մի քանի անգամ, մաս-մաս, կաթիլ առ կաթիլ։

Կանգնած է Սեդրակն իր գերեզմանի ափին, դիմաց յերկու զինվոր հրացանները պատրաստ, նրան են ուղղել, իսկ քիչ հեռու կանգնել է սպան, մատների մեջ ծխախոտն է տրորում և քմծիծաղով. իր ջրային սառը հայացքով նրան է նայում, գաղտնիքներ դուրս կորզելու ցանկությամբ։

Իսկ վերևին հարկում գնդապետ Սաշան իր առանձնասենյակում հարցաքննում է հենց այդ որ ձերբակալված մի գյուղացու, որին բռնել էին քաղաքի մոտակա անտառում և խիստ հսկողության տակ հետախուզություն տարել։

Նստել ե գնդապետն իր գրասեղանի մոտ, հետ ընկած բազկաթոռի փափուկ մեջքին, ծխում ե և ծխի քուլաների միջից համառ նայելով մազակալած պարթև գյուղացուն, հարցնում ե.—

— Ի՞նչ եյիր անում անտառում։

— Սունկ եյի փնտրում։

— Ինչպե՞ս թե սունկ։

— Սունկ ելի, փափուկ, համեղ սունկ։ Կնիկս այսոր առավոտյան ասաց, վոր տուն վերադառնալիս մի քանի հատ սունկ տանեմ, ապուր յեփի։

— Յես քեզ ցույց կտամ սունկ փնտրել։

— Բայց յես սուտ չեմ ասում, յերկինքն ե վկա։ Իզուր ինձ գործից գցեցին ու այսքան տեղ բերին։

— Վորտե՞ղ են թաքնված քեզ ուղարկողները։

— Ովքե՞ր։

— Ինչպե՞ս թե ովքեր։ Նրանք, վոր քեզ ուղարկել են լրտեսության։

— Բայց այդպիսի բան չկա։ Կնիկս պատվիրեց վերադառնալիս սունկ տանեմ, յես ել հավաքում եյի անտառում. այնտեղ շատ լավերը կան։

— Պիտի ասե՞ս վերջապես։

Գնդապետը վոտքի յե յելնում և կատաղու-

թյունից շրթունքները կրծոտելով, մի քայլ առնում առաջ։

Գյուղացին վախից հետ-հետ ե ընկնում։

Գնդապետը մոտենում ե։

— Հայտնելո՞ւ յես նրանց տեղը, թե՞ վոչ, ասելո՞ւ յես վերջապես, անասուն։

Յեվ բռունցքը ծանրորեն մեկ, յերկու իջնում ե գյուղացու գլխին, վորը ծանր հարվածներից մի րոպե անգիտակ, լայն բացած աչքերով հենվում ե պատին։

Փոթորկում ե ներսը, զսպված կատաղության մի գունդ կուրծքը քերելով կոկորդին ե հասնում և անզորության բարկությունից խեղդում նրան։

Իսկ գնդապետը բռնում, ուժեղ ձեռքերով հրում ե նրան ցած, գցում հատակին և կոշիկների բաձր կրունկներով ու խթաններով հարվածում մեջքին, կողքին, կրծքին, գլխին, դեմքին։

Ծանր տնքում ե գյուղացին, արյունը վ[illegible]ում ե դեմքի ու գլխի ճեղքվածքներից, ներ[illegible] հատակը, շորը, խառնվում մազերին։

[illegible] վե[illegible]րվածելուց արդեն հոգնած, գնդապետը մոտ[illegible] քաշվում ե, զանգահարում և ներս կյալ[illegible]րին հրամայում հեռացնել բանտար[illegible] գցել։

5

Շրջում է Արգամը անտառից անտառ, սարերը, իջնում գյուղերը, մեկ յերևում այստեղ, մեկ անհայտանում հանկարծ ու ամեն տեղ նույն խոսքն է կրկնում, նույն պահանջը դնում, նույն նախապատրաստական աշխատանքները կատարում։

— Վոտքի՛։

— Թոթափել բռնությունը։

— Քշել յեկվորներին ու տիրանալ սեփական աշխատանքին ու հողին։

— Պատրաստ սպասել առաջին կանչին։

Բոլոր գյուղերն համաձայն են։

Ամեն տեղ խմբերն արդեն պատրաստ են։

Ու անհամբեր են։

Դաշտային աշխատանքները կանչում են նրանց։

Դաշտերը մնացել են անտեր։

Սովի ուրվականն է կանգնել նրանց առաջ։

Անհամբեր են։

Ամեն ինչ պատրաստ է։

Մի գրոհ և իրենք են տերը։

Պետք չէ սպասել։

Դժգոհ են, կասկածում են։ ու-

Ալիքը գլգլել է լեռնանման, փրփ[illegible]ռել ու յելք է փնտրում։

Վոչ վոք չի յերկբայում հաղթանակի մասին։

Նրանք գիտեն, վոր.—

«Գյուղ կանգնի, գերան կկոտրի»...

Նրանք գիտեն այդ փորձով։

Գիտեյին, բայց առաջ կասկածում եյին։

Իսկ այժմ այլևս վոչ մի կասկած։

Չէ, սխալ եյինք մենք, յերբ մտածում եյինք, վոր սրանք յեթե մեկ էլ վերադառնան, իսկույն ամեն ինչ կարգ ու կանոնի կընկնի ու էլի առաջվա նման մենք մեր աշխատանքին կլինենք։

Ճիշտ է, նեղություն կար, բայց սրանից ավել չեր, գոնե այս անվերջ կռիվն ու արյունահեղությունը չկար։

Առավոտները վեր եյիր կենում գնում դաշտ, քո արտին նայում, վար ու ցանքդ անում, հանգիստ հավաքում և իրիկունը տուն եյիր դառնում դաշտերով մենակ, քո քեֆին, շշվացնելով։ Իսկ հիմի իսկի կարո՞ս տունդ մենակ թողնի կամ ինքդ դաշտերը չափչփի։ Մեկ էլ տեսար մեկը գլխացդ դուրս յեկավ, թե դնանք... ուր, սատկած գիտի... կամ թե մի գնդակ վզզալով յեկավ ... հավիտյանս հավիտենից հրաժարիմք...

հ..Դեռ էն էլ մի կողմ, վոր հենց մի գլուխ տար [illegible]

[illegible]։

է, քո[illegible]մ, հիմի ավելի վատ, շատ ավելի վատ [illegible]

[illegible]և թագավորի ժամանակ։

Ել համբերելու ուժ չի մնացել։

Դե վոր մենք պիտի աշխատենք ու նրանց պահենք, ել ինչո՞ւ նրանք մեզ վրա պետք ե իշխանություն բանեցնեն։ Են ե մենք մեզ կկառավարենք։

Կառավարելն ել սովորության բան ե . . .

Տարածվում ե ձայնը գյուղից գյուղ, սարից սար, անտառից անտառ, ընդարձակ դաշտերի, անծայրածիր ու անվերջ հարթավայրերի վողջ տարածությամբ մեկ ու ապագայի գեղեցիկ հեռանկարների հույզը ձայնի մեջ, կանչում ե կարող.

— Վոտքի՛ . . .

. . . Ասում են ցածի գյուղերն ապստամբվել են, — ասում ե մի միջահասակ, մազակալած գյուղացի գյուղի հրապարակում հավաքված հասարակության, վորոնք յերեկոյան պահուն հրապարակ դուրս յեկած, խոսում են իրենց կյանքից, աշխատանքից, աշխարհի անց ու դարձից։

— Ճի՛շտ ե, մենք ել ենք լսել, — ձայն են տալիս զանազան կողմերից։

— Այսոր առավոտյան դաշտում հանդիպեցի նրանցից մեկին, — առաջ ե գալիս մեկը և պատմում իր լսածը։

Գյուղացիք խմբվում են նրա շուրջը։

Յերիտասարդներն աշխատում են ավե կանգնել, լավ լսելու

— Հիսուն զինվորով ու գնդացիրով յեկել են, թե, եդ ինչպես եք համարձակվում մեր հրամանը չկատարելու, վոր ձեր զինվորները չեն ներկայանում։ Մինչև մի ժամ յեթե չներկայանան, բոլորիդ կկոտորենք ու գյուղն ել կրակ կըտանք։

Իսկ գյուղա պետը կանգնել ե ցուցակը ձեռքին ու հրամայում ե. —

— Յես ձեր եսպես-ենպեսը, շուն-շանվորդիք, բոլորդ ներկայացեք, հիմի յես մենակ չեմ, վոր ել բանի տեղ չդնեք։

Լսում են գյուղացիք ու միտք անում. լավ, ինչպե՞ս կարելի ե եդպիսի հրաման կատարել... Ձմեռ թե լիներ, ելի հասկանալի յեր, իսկ հիմի ինչպե՞ս թողնեն, ո՞ւմ թողնեն աշխատանքը։

— Լավ, — ասում են նրանք, — ընդունում ենք, շնորհ արեք, սպասեցեք, մինչև իրիկունը դաշտերից հետ գան, հավաքեք տարեք։

Իսկ իրենք հավաքվում են ծածուկ ու խորհուրդ անում։

Մարդիկ են ուղարկում դաշտերը թե եսպիսի եսպիսի բան, իրիկունը ուշ տուն կգաք, են ել ծածուկ ճանփով։

Զինվորներին լավ կերակրում են, խմիչքն ել պակաս չի լինում

Սպաներին քաղցրացնում են, որ գիշերը քընեն ու առավոտյան ճանփա ընկնեն։

Բայց գիշերն ուրիշ բան է կատարվում։

Հավաքվում են դաշտերից, հանում են դեսից-դենից հրացան, փամփուշտ, շրջապատում նրանց, զինաթափ անում։

— Զենք ուզում լսել եգպիսի հրաման, — ասում են նրանք, — գնացեք հանգիստ ձեր տեղը նստեք, մեկ էլ որ յերևացել եք, էլ մենք մեղավոր չենք։

Բռնում են գյուղապետին, մի լավ ծեծում ու գյուղից քշում։

— Գնա, — ասում են, — կորի մեր միջից, որյուն չենք ուզում թափել։

Հետո խմաց են տալիս են բայլշևիկին, որ գյուղե գյուղ ընկած ապստամբություն է կազմակերպում, թե, —

— Մենք էլ քեզ հետ համաձայն ենք ու պատրաստ։ Եւքան տղա ունենք, եւքան էլ զենք։

Հիմի ամբողջ գյուղով քաշվել են սարերը։

— Լավ էլ արել են, — ձայն է տալիս մեկը, — միևնույն է, գնային էլ դաշտերը պիտի մնային, հիմի էլ մնացել են։ Հիմի գեռ էլի աչքները վրա յե ու իրենց ընտանիքների հետ են։

Առաջ է գալիս մի յերիտասարդ։

— Մենք էլ պետքե ապստամբվենք։

— Ինչու այդպես հանկարծ, — տարակուսած հարցնում են այս ու այն կողմից։

— Դե էլ ինչու սպասենք, որ նույն ուղղը մեր գռանն էլ չոքի, — շարունակում է յերիտասարդը, — ինչքան շուտ, ենքան լավ։ Թե որ մենք էլ ու մեր վերի գյուղերն էլ շուտով միանանք նրանց, են է, իսկույն կքշենք մեր նոր աղաներին ու հանգիստ մեր գործին կլինենք։

Հո չենք թողնի, որ բերքը հավաքեն տանեն, մեզ էլ ոտք ու ձեռք կապած քշեն, հետո խելքի գանք։

— Ճիշտ է ասում, — համաձայնվում են շատերը։

— Յես հենց այս գիշեր նրանց մոտ կըգնամ, — ասում է յերիտասարդը, — և կհայտնեմ, որ մենք էլ պատրաստ ենք։

Լսվում են զգուշացնող ձայներ։

Բայց նրանց չեն լսում։

Կարճատև խորհրդակցությունից հետո ապստամբվելու առաջարկն ընդունվում է։

6

Զինվորական խորհուրդն Արգամի ղեկավարությամբ նիստ է գումարել մի ձորում։

Պատերազմական գործողություններ սկսելու ծրագիր է մշակվում։

Ապստամբական խմբերն իրենց ղեկավարներով ամեն տեղ կազմ-պատրաստ են։

Հրացանների ու փամփուշտի խիստ պակաս է զգացվում. հնարավոր չէ բոլոր ցանկացողներին զինել։

Թշնամին թեյև փոքրաթիվ է, բայց տարիների ռազմական փորձ ունի, կռիվներում կոփված է ու մարզված։ Ունեն թնդանոթներ, գնդացիրներ, առատ ռազմամթերք, պաշար։

Իսկ իրե՞նք։

Շատ են, ճշմարիտ է, բայց խառն ի խուռն, առանց զորական կարգ ու կանոնի, առանց ռազմագետի ղեկավարության։

Եվ զինված են միայն հրացաններով։

— Այնպես պետք է անենք,— ասում է մի նախկին զինվոր, որը մեծ պատերազմի ընթացքում յեղել է զանազան ռազմաճակատներում և համարվում է զինվորական խորհրդի ստրատեգը — այնպես պետք է անենք, ընկերներ, որ թշնամուն յելք չտանք։ Եթե նա կարողացավ քաղաքը թողնել և ռազմամթերքով դուրս գնալ, կամրանա և իր թնդանոթներով կստիպի մեզ մեր դիրքերը զիջել։ Այն ժամանակ ամեն ինչ կորած է։ Մանավանդ, մեզ հարկավոր է ռազմամթերք, մեծ քանակությամբ, որպեսզի կա-

րողանանք զինվել և պահպանել մեր դրությունը։ Քաղաքն առնելը դժվար չէ, պահելն է դժվար։ Մեր հարձակումը լինելու յե շատ արագաշարժ, շտապ ու բոլոր կողմից միաժամանակ, որպեսզի թշնամին հանկարծակիի գա։ Նրանց շփոթության մեջ է մեր հաղթանակը։ Այլապես զուր կանցնի մեր ամբողջ աշխատանքը, իսկ հաղթվելուց հետո թե ինչ է լինելու մեր դրությունը, այդ մասին պետք չէ խոսել, դա շատ պարզ է։

Ու յերկար խորհրդակցությունից հետո վերջապես մշակվում է հարձակման մանրամասն ծրագիրը և ամեն ուր հրահանգ է ուղարկվում ինքնուրույն ոչ մի քայլ չանել և կարգադրությունների սպասել։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Թռչում է հրամանն ամենուր.—

«Ազդանշանն առնելուն պես հարձակման դիմել և առաջնորդվել սրանից առաջ ստացած մանրամասն հրահանգներով։ Առանց զինվորական խորհրդի գիտության, վոչ մի բնակչության մեջ չմտնել, յեթե թշնամու կողմից այդպիսի առաջարկ լինի»։

Հավաքված նշանակված վայրերում, բազմաթիվ կիսազինված մարդիկ, իրենց հաղթանակի անյերկբայությամբ հանգիստ ու սառնասիրտ, խումբ-խումբ ցրված այս ու այն կողմ, մի րոպե մոռացած անմիջականը, դանդաղորեն խոսակցում են, առաջ շարժվելու հրամանին սպասելով։

— Ե՜խ,—ասում է զինվորական մի հին, կիսապատառած ու կեղտոտ կարտուզ գլուխը կոխած, նույնպես զինվորական բաճկոնակ հագին մի հաղթանդամ, դեռ բոլորովին յերիտասարդ, ավելի շուտ պատանի, յերկար ձգվելով

կանաչ խոտերին,—Ե՜խ, ինչ սքանչելի գիշեր է, աստղերն այնպես վառ փայլում են, ենե, կար ծես կանչում են սիրուհուդ մոտ։

—Դու էլ հո,—ձայնում է մի ուրիշը,—յես այսպիսի գիշեր սիրուհու մոտ չեյի գնա, այլ ցանցն ուսս առած, գետը կգնայի ձուկ վորսալու։ Գիտե՞ս ինչ հաջող վորսի գիշեր է։ Հենց են է, ձկներն հիմի հավաքվել, խաղ են անում ու քո ցանցին սպասում, վոր մեջը լցվեն։

— Լավ, եդ բոլորին վոչինչ չունեմ,—խոսում է մի ավելի տարիքոտ գյուղացի, վոր թիկնած ծառին, հանդարտ ծխում է լրագրի թղթի մեջ փաթաթած մախորկայի հաստ գլանակը և ծուխը քուլաներով բաց թողնում գլխից վեր,—դուք են ասացեք, վոր յեթե այս դրությունը յերկար շարունակվի, ինչ են լինելու մեր արտերը։ Ջրելու ժամանակն է արդեն, թե մի քանի օր էլ ուշանա, կանաչը բոլորովին կչորանա։ Են ժամանակ էլ ինչ սիրուհի, ինչ սքանչելի գիշեր։ Սովածությունից բոլորս կգկրտանք։

— Չե՜, հայրիկ,—խոսում է կրկին պատանին,—սով չի լինի, արտերն էլ շուտով կջրենք։ Այ, մի քիչ հետո կտեսնես, թե ինչ կպատահի։

Մի այլ կողմ մի խումբ միջակ տարիքի գյուղացիներ կիսապարկած կանաչին, հրացան-

ները ծնկան տակ, ծխում են գանդաղ, մի առանձին հոգատարությամբ ծծելով ծուխը և քուլաները բաց թողնելով, լսում են իրենց ընկերներից մեկի պատմությունը, որը գյուղացուն հատուկ դանդաղությամբ ու լեռնային կածանի նման ոլորապտույտ, բառերը ծոր տալով, պատմում է, շարունակելով իր կիսատ խոսքը.—

– Կես գիշերն անց կլիներ, մեկ ել լսում եմ, դուռը թըխկ-թըխկ. ծեծում են։ Ո՞վ է, մտածում եմ, եսպես անժամանակ ծեծում դուռը։ Ուզում եմ վեր կենալ, բայց ծուլանում եմ, քունս գլխիս է դեռ, ու շուռ եմ գալիս մյուս կողքիս։ Առավոտյան քունը շատ քաղցր է, դըժվար է հրաժարվել։ Դե մերն ել հենց եդ մի ժամ քունն է, մանավանդ եդ գիշեր ել շատ ուշ եյի պառկել։ Շուռ եմ գալիս մյուս կողքիս, ձգձգվում ու քնում, բայց ելի լսում եմ, որ դուռը ծեծում են։ Ճարահատած վեր եմ կենում ու հենց եդպես մոտենում դռանը։

— Ո՞վ ես։

— Բաց արա,— ասում է,— բան ունեմ ասելու։

— Ախր դու ո՞վ ես, որ ինձ բան պիտի ասես։

— Դու ինձ չես ճանաչում, բայց որ տեսնես, կհասկանաս։

— Չե՛, ախպեր, չես խաբի, իմ հերն ինձ եդպես խրատ չի տվել,— ասում եմ,— թե դու կարգին մարդ ես, ինչ գործ ունես ես պահին անծանոթ մարդու ասելու։ Չե՛, գնա, քու հեքյաթները յես լավ գիտեմ, գնա ուրիշին պատմի։

Եդ ժամանակ զարթնում է կնիկս։

— Այ մարդ, եդ ո՞ւմ հետ ես խոսում,— հարցնում է։

—Եսպես-եսպես բան,— ասում եմ։

— Դե բաց արա դու ել ելի,— ասում է,— վախենո՞ւմ ես, ինչ է։ Ո՞վ գիտի, գուցե հարկավոր բան ունի ասելու։

— Կնգա խելք ա ելի,— ասում եմ,— դըրանից դենը հո չի կարա գնա։ Բա վո՞նց բաց անեմ դուռը, գուցե հարամի ա, ավազակ։

— Չե, այ մարդ,— ասում է,— հարամին բա ըտենց բան կանի հեչ, կգա լուսը ծեգած ժամանակ դուռ կթակի, թե նրա մտքում մի չար բան կա։

Մտածում եմ, որ ղըրուստ ա ասում, եդ սկի հարամու բռնած գործ չի, և ուզում եմ դուռը բաց անի, բայց դեռ ելի, ընենց մի տեսակ կասկած կա մեջս։

— Ախպեր,— հարցնում եմ,— հենց դու սաղ ըլես, բա դե չի ըլի մի ասես, թե ինչու իմ դուռն ես ծեծում։

— Հա, եդ կասեմ,— ասում է,— ինձ քեզ ա նշան ավել վերին գեղի ես ինչը։ Ու իմ լավ բարեկամ — ճանաչի՝ անունն ա տալիս։

Եդ վոր լսում եմ, էլ բոլոր կասկածներս փարատվում են։

— Բա դե շուտ կասեյիր, անաշեն։

— Ուզում եյի քեզ փորձեմ,— ասում է ու ծիծաղում։

— Խելոք մարդ ես յերևում,— ասում եմ։ — Ներողություն, մի քանի րոպե սպասի, կնիկս շորերը հագնի, համ էլ ինքս մի բան գցեմ վրես։

Հայնվում ենք ու դուռը բաց անում։

Ներս ա մտնում մի ցածրահասակ, [illegible] մարդ։ Հագին կաշվի տուժուրկա, վրին [illegible] մի հին վերարկու։ Յերևում ա, վոր վերարկուն իրենը չի. վրով լեն ա ու յերկար։

— Ա կնիկ,— ասում եմ,— են մեկալ ոթաղի լուսը վառի։

— Չէ,— ասում ա,— լուս վառել պետք չի, մարդ չպիտի իմանա, վոր յես եկող եմ, ենպես, թե ձեզ մոտ հեչ մարդ չի յեկել։

Հասկանում եմ միտքը։

— Լավ, թող եդպես լինի։

Մտնում ենք մյուս ոթաղը։

— Նստի, ասում եմ,— հոգնած կլինես, շատ ճանապարհ ես անցել։ Թե սոված ես, ասեմ հաց բերի։

— Հա, եդ մեկը վատ չի լինի, իսկապես սոված եմ ու հոգնած։

Շատից քչից սեղան եմ բաց անում մութը տեղ

Ուտում է շուտ-շուտ ու ախորժակով։

Յերևում է, վոր շատ սոված է։

Ուտում, վերջացնում է ու ասում.—

— Հիմի յես մի ժամի չափ կքնեմ ու առավոտը կպատմեմ, թե ինչի համար եմ յեկել։ Յես կարծում եմ, վոր քո բարեկամս ինձ չի խաբել քեզ ցույց տալով։ Դու էլ գնա քնի։

— Լավ,— ասում եմ,— թող այդպես լինի, միայն անկողին գցենք։

— Չէ,— ասում է,— մենակ մի բան տվեք վրաս անեմ։ Այդպես ավելի լավ կլինի, շատ վաղուց է, տեղաշորի մեջ չեմ քնել։

Քնում եմ յես էլ։

Բայց դե քո՞ւն կտանի։

Շուռ ու մուռ եմ գալիս էս կողքիս, էն կողքիս ու մտածում։

Լավ մարդը, լավ է յերևում, բայց դե հին մի աշխարհն ենպես ա խառնվել, վոր հերը տղիհավատալ չի կարող, բոլորը մեր ու մանուկ ուրացել են, հիմի խաթեն ամեն բոպե կանգնած դռանդ, հսկում է, վոր հարմար ժամանակին վրադ ընկնի ու իր ճանկերում խեղդի քեզ։

Մտածում եմ, մտածում ու կարծես գլխի յեմ ընկնում, թե ինչի համար յեկած կլինի։

Գիտեք, վոր մեր գյուղը հեռու ա ընկած և աշխարհի խերից-շառից ենքան ել տեղեկություն չունի, բայց դե ելի լսել եյինք, թե եսպես-եսպես, հեղափոխական մարդիկ ընկած սար ու ձոր, գյուղե-գյուղ քարոզում են, վոր մեր ես նոր իշխանավորներին քշենք ու իշխանությունը մեր ձեռքն առնենք։ Լսել եյի, բայց դե ո՞վ եր եդ ամենին ուշք դարձնում Առաջվա նման ելի Նիկալայի իշխանությունն ա հաստատվել, գեներալներ, զորք, զենք... Ես ամենի դեմ ել ինչ հնար կա դեմ կանգնելու, մի որում կըրբեն, քարուքանդ կանեն։ Չե, եդ բանը գլուխ եկող բան չի, մտածում եյի։

Բայց դուրս եկավ, վոր եդ բանն ենքան ել մի դժվար գործ չի։

Տավարին նոր եյի կեր տվել վերջացրել, ուզում եյի գեղամեջ գնամ, կնիկս եկավ, թե հյուրը վեր ա կացել, քեզ ա կանչում։

Ներս եմ գնում։

— Հիմի,—ասում ա,—հասկացած կլինես, թե յես ինչ մարդ եմ.

—Մի քիչ հասկանում եմ, բայց հո գիտես ինչ ժամանակներումն ենք ապրում, հարկավոր ա շատ զգույշ լինել։ Ի՞նչ հաստատմունք ունես եդ մասին։

Կաշե պինջակը հանում ա, թիկունքի մորթե աստառը մի քիչ տեղ ճղած ա, հետ ա անում ու ցույց տալիս վրան կարած մի սպիտակ շոր, վորի վրա թղթի նման գրած ա։

— Կարդալ գիտե՞ս։

— Հա, քիչ ու միչ գիտեմ, լուսահոգի հերս եդ բարերարությունն արել ա։

— Դե, կարդա։

Կարդում եմ։ Ըսենց-ըսենց, ընկեր ես ինչը նշանակվում ա մեր կողմից և այլն և այլն։ Փեչատն ու ստորագրություններն ել իրան կարգին։

— Լավ,—ասում եմ,—հիմի կարող ես տեղին-տեղին ասել, թե ի՞նչ ա հարկավոր քեզ։

— Հարկավոր ա, վոր ձեր գեղն ել վոտքի յելնի, ապստամբվի ու միանա մյուս գյուղերին։ Հենց եդ գործի համար ել յես յեկել եմ։ Ես որ տես քո իմացած մարդկանց, իմաց արա, վոր

գիշերը ուշ ժամանակ հավաքվեն մի ապահով տեղ, կխոսենք ու ամեն բան կկարգադրենք։ Ենպես լինի, որ ոչ մի շունչ չհասկանա իմ ետտեղ գտնվելը, թե չէ ձեր բանը վատ կլինի։ Յես միևնույն է, կթռչեմ, բայց դուք փորձանքի կմնաք։

— Լավ,— ասում եմ,— կհավաքվենք հենց ինձ մոտ, բայց դու ամբողջ օրն օթաղում ինչպես պիտի մնաս, որ մարդ չիմանա, եկող-գնացող կլինի, երեխեքը կարող են տեսնել ու դրսում հանկարծ բերաններից խոսք թռցնել։

— Եդ մեկը շատ ճիշտ յես ասում,— ասում է ու մտածում,— հարկավոր ա մի հնար գտնել

— Ի՞նչ կլինի, որ ես մի օրը գոմում անցկացնեմ։ Հոտը լավ չի, բայց ապահով կլինի։

— Հիանալի յե,— ուրախացած ասում է, —դե ցույց տուր, թե որ կողմ պիտի գնալ։

Գնում ենք գոմ։

Մսուրի մեջ խոտ եմ լցնում։ Պառկում ա վրան։

Կնկանս հասկացնում եմ բանի եյությունը ու խիստ պատվիրում, որ հարևանների մոտ լեզուն իրան քաշի։

Դե կնիկա, կնկա լեզուն ջաղացի չախչախի պես հո պիտի չխչխկացնի։

Գնում եմ գործիս։

Բայց ինչ գործ կարիլի։

Տեսնում եմ, ում որ պետք ա։ Պայմանավորվում ենք, որ աքլորն առաջին անգամ կանչելուս հավաքվեն ինձ մոտ։

Կես գիշերին հավաքվում ենք։

Ընդամենը չորս հոգի եյինք։

Խոսում ենք, ծրագիր քաշում, թե ինչն ինչպես պիտի անենք։

Հետո ընկեր Արգամը վեր ա կենում, թե,

— դե, ընկերներ, յես պիտի գնամ, ուրիշ տեղեր էլ շատ գործ ունեմ։ Դուք ասածիս պես գործը կարգի կգցեք, կկազմակերպեք ու կսպասեք իմ նշանին։ Հենց որ կարգադրություն ստացաք, իսկույն գեղի իշխանությունը կառնեք ձեր ձեռքը։

Մնաք բարով է ասում ու դուրս գնում։

Մյուսներն էլ մեկ մեկ դուրս են գնում ու գիշերվա մթի մեջ անհայտանում։

Եվ նրանից հետո գործը գնաց իրան կարգով։ Վորին հանդում, վորին տանը, վորին գեղամիջում հասկացրինք բանի դրությունը և...

Բայց այդ բոպեյին լսողների ուշադրությունը գրավեց հեռվից յերևացող ծխի հսկայական սյունը, որ շատրվանի նման դեպի վեր

ձգվելով իր բոցախառն լեզուներով կայծերի շիթեր էր նետում դեպի յերկինք։

Դա պայմանավորված ազդանշանն էր։

Յեվ իսկույն շարքից-շարք, մեկից մյուս անցավ կարգադրությունը.—

— Շարժվել առաջ քայլ առ քայլ, առանց աղմուկի. չկրակել։

Իսկ քաղաքի հյուսիսակողմից, մեծ ճանապարհի ուղղությամբ, լսվեց ուժեղ հրացանաձգություն։

Վորոշված էր ուշադրություն գրավելու համար հյուսիսային կողմում կեղծ հարձակում բացել թշնամու զորքն այդ կողմ քաշելու, իսկ այդ ժամանակ հարձակվողների մի մասն անտառներով ու բլուրներով մագլցելով, ողակաձև շրջապատելու յեր քաղաքը կայարանի կողմից և հարավային կողմի անտառով ներս էր լցվելու քաղաք, իսկ մյուս մասն էլ բռնելու յեր հյուսիսային կողմի՝ կեղծ հարձակման վայրի թիկունքը, այդպիսով կտրելով բոլոր ճանապարհները և հնարավորություն չտալով թշնամուն արագ շարժվելու։

Արևելքը նոր միայն շառագունել էր, իսկ անտառում թռչունները դեռ չէյին արթնացել իրենց նինջից։

2

Քաղաքն այդ գիշեր իր սովորական կյանքն էր ապրում։

Կաֆեները, ռեստորանները լեցուն՝ տենդայնորեն վորսում էյին անցնող ժամանակը, կարծես մի անմեկնելի գիտակցությամբ զգալով, վոր այսօրն այլևս վերադարձող չէ, վոր վաղն արդեն ուշ կլինի, վոր ընդհանրապես հետո ուշ է։

Վաղն անորոշություն է։

Անորոշությունը հղի յե անակնկալներով։

Իսկ ամեն մի անակնկալ յերևույթ վախ է պատճառում և կապված է տանջանքների հետ։

Կորչի տանջանքը։

Առանց տանջանքի, առանց մտածումների։

Յեվ սերը, և՛ մահը։

Թնդում է յերաժշտությունը։

Բաց բեմի վրա պարում է կիսամերկ կաքավչուհին։

Սահում է գալարուն, ձեռքի շղարշն օձապտույտ մեկ փաթաթելով մեջքին, մեկ ծածանելով օդի մեջ, վորպես կարապի սպիտակ, թեթև թևեր, վոր բացվել են թռիչքի համար։

Սպասավորները ծալվող վոտքերով հազիվ կարողանում են բավարարել սեղանների շուրջը նստածների բազմաթիվ պահանջները։

Օդը յելեքտրականացած է։

Կանանց մարմնի բույրը գլխապտույտ է առաջացնում։

Կիրքը մթագնած աչքերով թառել է ամեն կողմ ու իր սլաքներն է մխում հևացող կրծքերում։

Սեղանների տակ սեղմվում են ձեռքեր, վոտքեր, ապդրեր։

Առանձնասենյակները բոլորը բռնված են։

Առանձնասենյակներից մեկում կրեսոնների մի խումբ սեղան է բաց արել շրջանի հրամանատարի և նրա շքախմբի համար։

Գինուց մթնոլորտը խտացել է։

Գահավորակների վրա ձգվել են կանայք։ «Անգլիական» ծխախոտի անուշաբույր ծուխը բաց է ընկնում նրանց գիրգ շուրթերի նուրբ ճեղքվածքից ու քուլա-քուլա վեր բարձրանում, աստիճանաբար ծածկելով յելեքտրական լույսի խուրձերը և կրքալից կիսախավար ստեղծում։ Սպաները նստած նրանց մոտ, ծնկաչոք նրանց առաջ, դողացող ձայնով յերկրային յերջանկության, ակնթարթի յերջանկության անմահության հեքիաթներն են նրանց պատմում...

Ու միաձուլվում են ձեռքեր, շուրթեր...

Մոռացվում է շրջապատը, ներկա, գալիք...

Կրեսոններից մեկը կռացած դեպի հրամանատարը, ակնածու և աղաչական ձայնով հարցնում է.—

— Ուրեմն այդպես, ձերդ գերազանցություն, խոստանում եք, վոր կկարգադրեք այդ մասին. . Ա՜խ, յեթե իմանայիք ինչպես ենք տանջվել այդ ավազակների ձեռքից...

— Գիտեմ, պարոնայք, գիտեմ, բայց ինքներդ եք մեղավոր,— ասում է հրամանատարը, հետ ընկնելով բազկաթոռի մեջքին, կարծես մրա-քում թվելով նրանց մեղավորության պատճառները։

— Գիտեմ, հասկանում եմ, սակայն ճիշտն ասած, ինքներդ եք մեղավոր, ձեզ այդպես էլ պետք է, թող թալանեն, խլեն, քար ու քանդ անեն։

Կրեսոնների դեմքով սարսափ է անցնում։

— Բայց ի՞նչ հանցանք ունենք մենք, ձերդ գերազանցություն,— հարցնում են միաբերան, մոռանալով այլևս գաղտագողի հետևել գահավորակներին պառկած իրենց կանանց և սաստող հայացքով նրանց կարգի հրավիրել։

— Ի հարկե,— ժպտում է հրամանատարը— վոչ այն իմաստով վոր նրանք իրավացի չեն, վոր նրանց քարոզած հիմարությունն արդարացի չէ և հաղթանակելու չէ։ Վո՛չ։ Այլ՝ վորովհե-

ու ինքներդ հոգ չեք տանում ձեր դրությունն ապահովելու մասին։

— Ինչպե՞ս, ասացեք, մենք պատրաստ ենք ամեն ինչ անելու։

Ցեվ կրեսոնները մոռանում են արդեն աշխարհում ամեն ինչ. նրանց համար այժմ միայն մի բան, մի կենտրոն գոյություն ունի։ Դա հրամանատարի բերանն է, այն բերանը, որ հաստ սև բեխերի տակ կիսահեգնական ժպտում է և որից հնչելու յե փրկության բառը։

— Անշո՛ւշտ, — շարունակում է հրամանատարը, զգալով, որ ձկներն արդեն շարժվում են դեպի ուռկանը — որովհետև այլապես դուք հոգ կտանեյիք ուժեղացնելու ձեր պաշտպանությունը, այն կազմակերպությունը, որը նպատակ ունի վերջ տալու այդ մի բուռն բաղդախնդիրներին, վերականգնելու հին կյանքը և դրանով իսկ ապահովելու ձեր դրությունը։ Չէ՞ որ, պարոնայք, մեզանից ամեն մեկը կարող է մեր յերկրում կամ արտասահմանում իր համար բարեկեցիկ, համենայն դեպս իր գոյությունն ապահովող կյանք ստեղծել։ Բայց ոչ, մենք մոռացած տուն, ընտանիք, ապահով դրություն, ձեռք վերցրած մեր կյանքից, որն ամեն մարդու համար շատ ավելի թանկ է, քան աշխարհի ամ-

բողջ հարստությունը միասին առած, արյուն ենք թափում, զոհվում, անքուն մնում, օրեր շարունակ քաղցած անցկացնում, որպեսզի մեր ծրագիրը, մեր գաղափարն իրականացնենք, որպեսզի ապահովենք ձեր կյանքը, իսկ դուք այդ կամ չեք ըմբռնում, կամ հարկավոր չափով հաշվի չեք առնում։ Շատ է լայնածավալ մեր յերկիրը, շատ է անյերես մեր թշնամին, հարկավոր է շատ ռազմամթերք, պաշար, հագուստ, հարկավոր է մեր կողմնակից զորքի թիվը կրկնապատկել, յեռապատկել, տասնապատկել... Իսկ այդ ամենի համար հարկավոր է դրամ, բայց դրամ... չկա։ Մենք ստիպված ենք դիմել օտարներին՝ Անգլիային, Ֆրանսիային, նույնիսկ մեր նախկին թշնամի Գերմանիային, ստիպված ենք նրանցից ողորմություն խնդրել մեր գործը կատարելու համար, այն ինչ...

Հրամանատարը մի ակնթարթ դադարում է, կարծես շունչ քաշելու համար ու նայում է իր ունկնդիրներին, որոնք գլխահակ լսում են, արդեն հասկանալով, թե խնդիրն ինչ ընթացք է ստանալու, մտքներում հաշվելով այն գումարը, որով ազատվելու յեն այս անգամ։

Պարզ է, մտածում են նրանք, առանց դրամի բան չի դուրս գա, սակայն հո չի կարելի

տալ ու տալ անվերջ... Իսկ նրանք... պարտավոր են պաշտպանել, պարտավոր են վերականգնել հին կյանքը, հին կարգ ու կանոնը, հին օրենքները։ Չէ՞ վոր նրանք զորք են, զինվորներ, իսկ զինվորի պարտականությունն է պաշտպանել իրենց շահերը։ Այդպես է յեղել սկզբից, այդպես էլ պիտի լինի և՛ հիմա, և՛ հետո։ Անգլիան, Ֆրանսիան պարտավոր են օգնել, զենք, հագուստ, դրամ տալ, վորովհետև օգուտի մեծ մասն իրենցն է, չէ՞ վոր այլապես կզրկվեն հում նյութից, անծայրածիր շուկայից...

Մտածում են, բայց համոզված են, վոր այնուամենայնիվ, պիտի բաց անեն իրենց քըսակներն ու աչքի տակով միմիանց են նայում, թե ո՞վ արդյոք առաջինը պիտի չեկ գրի և ինչ գումարի։

Առաջին ստորագրողից է կախված մյուսների վճարելիքի մեծությունը։

Իսկ հրամանատարը շարունակում է. —

— Այն ինչ, պարոնայք, մեր յերկրում այնքան հարուստներ ունենք, վոր յեթե ցանկանան, կարող են հարյուր անգամ ավելի մեծ և ուժեղ բանակ պահել, քան այժմ յեղածը։ Այո՛, մեր մայր յերկրի փրկությունը, ձեր գույքի, կարողության, ձեր կյանքի ապահովությունը ձեզնից

է կախված։ Ապացուցեք, վոր արժանի յեք մեր մեծ հայրենիքի արժանի և հարազատ զավակը կոչվելու, վոր դուք սիրում եք մեր բազմաչարչար, մեր տառապած մայր հայրենիքը։ Մի խնայեք ձեր արհամարհելի դրամը նրանց, վորոնք իրենց կյանքն են դրել հայրենիքի փրկության սեղանին, վորպես վողջակեզ։

Հրամանատարը թիկնում է բազկաթոռի թևքին և հայացքն ուղղում տարածության մեջ անորոշ կետի։

Նա գոհ է իր ճառից։

Կրեսոսներն անհանգիստ շարժում են գործում նստած տեղերում։

— Ի հարկե, ի հարկե, դուք միանգամայն իրավացի յեք, վորքա՞ն է պետք, ասացեք։ Ստացեք և ուժեղացրեք զորաբանակը, միայն թե փրկեցեք մեր մայր հայրենիքն այդ սրիկա տականքներից, վորոնց համար գոյություն չունի վոչ մի սրբություն, վոչ մի կարգ ու կանոն, վորոնք խախտում և վոչնչացնում են վաղուց ի վեր գոյություն ունեցող պետական և բնական օրենքները։

Հրամանատարի լայն դեմքը ժպտում է։

Ապահովված է արդեն իր «խնայողության» աճումը մի կլորիկ գումարով էլ։

— Զափազանց շատ դրամ է պետք, մի քանի հոգով չեք կարող, անշուշտ, ծածկել այդ կարիքը, բայց տվեք ով որքան կարող է, տըվեք առանց խնայելու, առանց ափսոսանքի։

Ձեռքերն ինքնաբերաբար գնում են ծոցագրպանները, դուրս են հանվում արտասահմանյան բանկերի տոմսեր ու գրվում թվեր... Ձեռքը դողում է, սիրտը կծկվում, զսպված հառաչում է կուրծքը, սակայն գալիքն իր վոսկրացած ձեռքով բռնած գրիչը, շարում է թվերը մեկը մյուսի յետևից...

«Ներկայացնողին վճարել...»։

Հրամանատարն իր գործը վերջացած համարելով, իր քարտուղարի հետ հեռանում է, շնորհակալություն հայտնելով բացսիրտ ընդունելության համար, բանկային տոմսերը գրպանը դնելով։

Կերսոններն էլ պատրաստվում են գնալու, դժվարությամբ սթափեցնելով իրենց կանանց, վորոնք տուն վերադառնալու վոչ մի տրամադրություն չեն ցույց տալիս։

Դահլիճում թնդում է վալսն ու զույգերը խափւր, սահում են կուրծք-կրծքի, շունչ-շնչի...

Այս ու այն անկյունում, առանձնասենյակներում, պուրակների թավուտներում կիրքն է

հագուրդ առնում ակնթարթի անսանձական ցանկությամբ, և ձեռքերի մեջ ջղային կծկումներով ստինքներն են տրորվում, ինչպես թաշկինակ։

Թռչում է ժամանակը սինոմատոգրաֆային ժապավենի նման արագ պտույտով ու չգիտես, թե հաջորդ նկարն ի՞նչ է լինելու, կատարվող գործողության վո՞ր ակնթարթը, վո՞ր պատկերը։

3

Դիտում են քաղաքացիք այդ ամենն իրենց անկյուններից և տարբեր զգացմունքներ ապրում։

Տարբեր են նրանց ցանկությունները, տարբեր են ակնկալիքները։

Տեսնում են, թափահարում գլուխներն ու պինդ փակում դուռ և լուսամուտ, կծկվում իրենց անկյունում, ամուր բռնած իրենց հացի պատառը, հլու-հնազանդ գալիքին, անկամ ընկած հոսանքի մեջ, ուրիշի կամքին յենթակա։

Իսկ քչերը՝ հոգով ծառացած այդ ամենի դեմ՝ արտաքնապես խաղաղ, բայց ներքուստ ալեկոծ ծովի նման, վաղուց կապված դրսի հետ, իրենց խլուրդային աշխատանքն են կատարում դանդաղ, անշտապ, բայց նշանառու և մահացու։

Գիտեն նրանք, վոր այդ որ վերջին որն է

ինքնակոչ տերերի ու քմծիծաղով են դիտում նրանց սանձարձակ խրախճանքը.

Դա իրենց հաղթանակի աներկբայության լավագույն պայմաններից մեկն է։

Թշնամու ուժերի քայքայման նշաններից մեկը։

Ու թեև իր նախկին թափով գործում է հետախուզական բաժինը և նրա գործակալները վխտում են այս ու այն կողմ և հոտոտելով գտնում սրան ու նրան և փակում մութ նկուղի պատերի մեջ. գամփռների քմահաճույքին յենթակա, այնուամենայնիվ կազմված է նոր իշխանությունը պաշտպանող ժամանակավոր կոմիտե, պահակախումբ, բաժանված է աշխատանքը, վորպեսզի ազատարար զանգի առաջին կանչի հետ ամեն մեկն իր դիրքում կանգնած, ղեկավարեն նոր կյանքը, նոր որերն իրենց նոր պայմաններով։

Յեվ արևելքը դեռ նոր միայն շառագունել էր, վոր հրացանաձգության առաջին համազարկի հետ ցնցվեց քաղաքի հսկա սիրտը, տարբեր զգացումներով։

4

Սպիտակներն հանկարծակիի յեկած, տենդային դողով վոտքի յելան և լարած բոլոր ուժերը, առաջ նետվեցին։

Սկսվեց կռիվը։

Մեկի համար փրկարար, մյուսի համար մահաբեր։

Մեկն իր իրավունքը զորավիգ ունենալով, ավելի ու ավելի հզորացող, մյուսը՝ կորցրած վոտքի տակի հողը, սակայն զույգ ձեռքով կառչած իր գոյության արմատին, ավելի խելակորույս և անիմաստ։

Յերբ պարզվեց իրերի իսկական դասավորությունը ու նրանք փոքրաթիվ զորք թողնելով հուսախակողմը, հետ դարձան կարևոր դիրքեր գրավելու, արդեն ուշ էր։

Շրջապատող գյուղացիությունն արդեն իջել էր ու գրավել քաղաքի շրջակա ռազմական դիրքերը, յերկաթուղու կայարանը, ճանապարհները, իսկ քաղաքում արդեն տարածվում էր ժամանակավոր կոմիտեյի համար առաջին հրամանը, վոր հրավիրում էր քաղաքացիներին պահպանել խիստ կարգ ու կանոն, սպառնում թալան և անիշխանական գործողություն կատարողներին, կոչ անելով աշխատավորությանը վոտքի յելնել, ավելի սեղմելու իր շարքերը։

«ՄԻ՛ՇՏ ՊԱՏՐԱՍՏ»

Որեցոր դրությունը վատանում է։

Արդեն մի քանի օր է, վոր Քոթոթը վոչ մի «գործ» չի հաջողեցնում։

Միշտ էլ բան չի դուրս գալիս։

Իսկ այսոր դեռ վոչինչ չի կերել։

Ցուրտն էլ մի կողմից է նեղում։

Աշունն արդեն վերջանում է և Յերևանի ցրտերն, ըստ՝ սովորության հանկարծ վրա հասան։

Մի գիշերվա մեջ չորս բոլորքի սարերը ծերացան և մշտապես ալեհեր Մասիսի գագաթից այնպիսի ցուրտ քամի փչեց, վոր ջրերը սառցակալեցին, միայն կեսորի մոտ բաց անելով իրենց յերեսը, սակայն այլևս առանց ժպտի, առանց գնգուն ծիծաղի։

Իսկ ծառերի արագ մերկանալը մարդկանց սրտերը լցրեց մի անգիտակցական վախով դեպի ձմռան մոտիկությունը։

Քոթոթը աշխատում էր լավ փաթաթվել իր ուսերին գցած տոպրակով, բայց վոչ մի կերպ չէր հաջողվում. տոպրակն արդեն մաշվել էր,

տեղ տեղ խոշոր պատռվածքներ կային, իսկ մի փեշը բաժին էր ընկել մի կատաղի շան, որի սուր ատամներից հազիվ ազատվեց նա մի անգամ յերբ մտել էր մի բակ վողորմություն խնդրելու։

Այդ քայլին նա չէր դիմի, նա յերբեք բակեր չէր մտնում, բայց այդ օր քաղցն այնպես ազդել էր, որ այլևս չկարողացավ դիմանալ և ընկերներից ծածուկ թեքվեց մի նեղ փողոց ու մտավ մի բակ...

Քոթոթը գիտե, որ «խուժանը» չի սիրում բակերում վողորմություն խնդրել. բակերն ուժասպառ ծերունիներին և անդամալույծներին է թողնված։

Իրենք առողջ են, իրենք կարող են «աշխատել»։

Սակայն վերջին շրջանում այլևս «աշխատանք» չկա։

Շուկայում արդեն ամեն ինչ պակաս է։

Ժողովուրդ էլ քիչ է լինում։

Յերբ մարդիկ խռնվում են, ավելի հեշտ է լինում մի բան «թռցնել» և նկատելի չի դառնում։

Մանավանդ, յերբ ապրանքը շատ է. պակասածն աչքի չի ընկնում։

Աբովյան փողոցով զբոսնողներն էլ ձեռքերը միշտ գրպաններում են պահում, որովհետև ցուրտ է, այնպես որ, այդտեղ էլ անհաջողություն է։

Ամբողջ «խումբը» նույն վիճակումն է։

Նույնիսկ Բռռզանը, որ իրենց մեջ ամենից ուժեղն է, ամրակազմն ու դիմացկունը և իր ճարպիկության շնորհիվ ամենից հաջողակը, այլևս առաջվա նման հպարտ ման չի գալիս։

Այդ այն օրվանից է, յերբ մի անգամ «գործի» ժամանակ նա հազիվ կարողացավ ազատվել իրեն հետապնդող միլիցոներից։

Թե չէ, փոքրահասակների ուղղիչ տունը պատրաստ էր նրա համար։

Իսկ այնտեղ ընկնել, նշանակում է բոլորովին կորչել։

Ինչե՜ր ասես չեն պատմում այնտեղի մասին, թեև առայժմ իրենցից և ոչ մեկն այդ փորձանքի մեջ չի ընկել։

Լսել են բերնե-բերան և ամեն անգամ սարսափ զգացել։

Հենց բավական է այն հանգամանքը, որ պիտի փակված մնան և այլևս չկարողանան ազատ կերպով շափշփել քաղաքը ցանկացած ուղղությամբ, պիտի բաժանվեն ընկերներից և հսկողության տակ լինեն։

Ճիշտ է, քաղցած չեն մնա... սակայն ազատությունն ավելի արժե։

Վատ է միայն, որ ձմեռ է գալիս, թե չէ գարնանից մինչև աշուն այնքան էլ վատ չի լինում։

Նախ՝ չեն մրսում, ապա՝ մարդիկ կարծես ավելի բարի յեն լինում, ավելի ժպտուն և ուրախ։

Ակումբներում բացօդյա ճաշողների և ընթրողների սեղաններից միշտ էլ մի բան կարողանում են ստանալ յերբեմն «թռցնելով», յերբեմն մնացորդներից, յերբեմն ծառայություն մատուցելու համար։

Յերեկոները զբոսարաններում լավ ձայն ունեցողները յերգեր են յերգում, կան այնպիսիները, վորոնք պարում են և իրենց պատճառած զվարճության համար, խմբված մարդիկ միշտ էլ մի քանի կոպեկ չեն խնայում տալու։

Իսկ «գործ» միշտ էլ կա։

Առավոտյան դեռ լույսը նոր-նոր բացված, գյուղերից քաղաք են գալիս բազմաթիվ սայլեր, էշեր, բեռնավորված ամեն տեսակ արմտիքներով, պտուղներով և միշտ էլ կարելի յե լինում մի բան ծլկացնել։

Կյանքն ուրախ է անցնում։

Ուշ գիշեր հավաքվում են բոլորով միասին իրենց գիշերավայրը, պառկում գետնին։ Հոգնած անդամներն հանգստանում են, իսկ ստամոքսը չի գանգատվում. այնքան կուշտ է, վոր յեթե մյուս որն էլ վոչինչ չստանա, կարող է լուռ մնալ։

Ում քունը չի տանում, սկսում է պատմել որվա ընթացքում իր գլխով անցած-դարձածը, կարծիքներ հայտնում հանդիպած մարդկանց մասին, պատկերում նրանց քայլքը, խոսելը, ծանոթ կանանց մոտենալու ձևը։

Իսկ վերևից պարզ յերկինքն աստղազարդ, կամ լուսնյակի կաթնագույն լույսով վողողուն, նայում է ցած, կարծես հսկում է նրանց, մյուս որվա համար ևս հաջողություն խոստանալով։

Ընկերները բոլորն էլ ուրախ են լինում, չեն կռվում, չեն ծեծում միմյանց, իրար ձեռքից վոչինչ չեն խլում։

Բայց հիմա այդ ամենն արդեն ցանկալի յերազ է։

Ցրտից ու քաղցից կծկված, Թոթոթը տաքանալու համար վոտքերն ամուր-ամուր մայթի քարերին խփելով, քայլում է ինքն էլ չիմանալով ուր և խորը հոգոց հանելով զգում է, վոր անցան յերջանիկ որերը և վոր այսուհետև էլ

չի լինելու վոչ կուշտ ստամոքս, վոչ էլ տաք անկյուն։ Զգում է, վոր խումբն արդեն քայքայվում է. արդեն մի քանիսն հայտնի չէ, թե ինչ են յեղել, իսկ մյուսները բարկացկոտ են դարձել, ջղային, կռվում են, միմիանց ձեռքից պատառներ են խլում, թաքցնում են ձեռք բերածները, ամեն մեկն աշխատում է այլևս ուրիշներին մասնակից չանել իր «գործին»։

2

Պղտոր աչքերով նայում է Քոթոթն անցող-դարձողներին, վորոնք անցնում են շտապ, ամեն մեկն իր գործին, անուշադիր դեպի մյուսները։ Փորձում է մի յերկուսից վողորմություն խնդրել, բայց իզուր։

Մեկը նույնիսկ բղավում է.—

— Գնա կո՛րիր, դու եյիր պակաս…

Յեվ այնպես վոլորեց աչքերը վրան, վոր մի րոպե քաղցը մոռացած, Քոթոթն շտապեց փախչել հեռու։

Չե՛, այսոր բացարձակ կերպով անհաջողություն է։

Ընկերներից էլ վոչ վոքի չի հանդիպում։

Հուսահատ, մտնում է զբոսավայր։

Ծառերի տերևներն հորդ անձրևի պես մաղ-

վում են գետին, մի յերկու պտույտ գործելով ոդի մեջ, քամու բերնին։

Մի քանի զույգ զբոսնողներ կան, վորոնք ուրախ քրքջում են։ Նրանք կարծես ուրախ են, վոր աշունն է յեկել և զվարճանում են տերևների մահավերջին դողոցները դիտելով։

Կծկված նստարաններից մեկի վրա ծալապատիկ, տոպրակի ծլանքները թևերի տակ ու ձեռքերում սեղմած, նայում է նրանց ու զարմանում, թե ինչն է այդպես զվարճություն պատճառում նրանց։

Յեվ նրա մանկական միտքն սկսում է յեռանդով աշխատել։

Մտածում է, մտածում և վոչ մի կերպ չի կարողանում պարզել, թե ո՞վ է ինքը, ունեցել է արդյոք ծնողներ, ունեցել է յերբ և է իր տունը, ունեցել է խնամք, փաղաքշանք։

Այն որվանից, յերբ նա կարողացել է իր շրջապատը հասկանալ, նա իրեն փողոցումն է հիշում։

Փողոցն է յեղել միշտ իր տունը, փողոցն է յեղել իր խնամակալն ու կերակրողը։

Նա նույնիսկ չգիտե իր անունը։

Մեկ որ, յերբ դեռ ավելի փոքր եր, մի շքեղ հագնված տիկին, վորից վողորմություն

խնդրեց, նայեց իրեն ժպտալով և դառնալով իր հետ քայլող տղամարդուն, ասաց.—

— Տեսեք, իսկական քոթոթ է, փոքրը կարճ, մարմինը հաստ։

Ընկերներից մի քանիսը լսեցին և այդ օրվանից սկսեցին այդպես էլ կանչել.—

— Քոթոթ։

Հետո այդ անունը կպավ իրեն և մոռացվեց առաջվանը, այնպես մոռացվեց, որ այժմ ինքն էլ այլևս չի հիշում, որքան էլ լարում է միտքը։

Նա սկզբում չգիտեր թե ինչ է նշանակում քոթոթ բառը և խիստ բարկանում էր ընկերների վրա, երբ իրեն այդպես էին կանչում, բայց մի անգամ, երբ այդ անունը նրան փրկեց միլիցիայի ձեռքից, սկսեց սիրել և այլևս չէր բարկանում։

Այդ որ նրանք մի քանի ընկերներով «գործ» էին անում։

Շուկան լի էր գյուղացիներով, որոնք սայլերով, էշերով քաղաք էին բերել բազմաթիվ արմտիք, հավ, ձու, պանիր, յուղ, մածուն։

Վաճառողների և գնորդների աղմուկի մեջ նրանք հաջողեցրին մի հավ ծլկացնել, բայց ծախող գյուղացին շուտ գլխի ընկավ և իր ապ-

րանքը պահ տալով հարևանին, աղաղակով ընկավ հետևներից։

Վրա հասավ շուկայի միլիցիոները։

Ընկերները փախան, բայց ինքը բռնվեց։

Չկարողացավ արագ փախչել։

Տարան քաղաքամաս։

Կուչ յեկած քաղաքամասի մի անկյունում, դողում էր։

Սաստիկ վախենում էր։

Առաջին անգամն էր այդպիսի փորձանքի մեջ ընկնում և չգիտեր օրենքների մասին։

Գիտեր միայն, որ գողությունը հանցանք է և հանցանքի համար խիստ պատիժ կա։

Մանավանդ, որ միլիցիոներներն էլ, որ հավաքված ծխում էին, ծաղրում էին նրան։

Մեկը նույնիսկ սպառնաց, թե միլիցիապետը հենց որ գա, իսկույն կախ են տալու իրեն։

Չգիտեր, ծիծաղում, կատակ են անում, թե լուրջ են ասում։

Ամբողջ մարմնով դողում էր։

Լացը գալիս էր, ուզում էր լաց լինել, բայց ամաչում էր։

Որքան ժամանակ էր անցել, չէր հիշում, որ մեկ էլ դուռը բացվեց և ներս մտավ մի բարձրահասակ, խիստ դեմքով մարդ։

Միլիցոներները վոտքի յելան և բարևեցին։

Նրանցից մեկը հայտնեց, վոր շուկայում գող են բռնել ու ցույց տվեց իրեն։

Քոթոթն սպասում եր, վոր են ե, ինկույն հրամայելու յե կախ տան իրեն, սակայն նա մոտեցավ, բարի աչքերով նայեց ու հարցրեց,—

— Անունդ ի՞նչ ե, փոքրիկ։

— Քոթոթ, — սիրտ առնելով, պատասխանեց և զարմացած մնաց բերանաբաց, չհասկանալով թե ի՞նչ պատահեց։

Պետն սկսեց այնպես բարձր, այնպես հյութալի ծիծաղել, վոր քիչ մնաց ինքն ել ծիծաղեր, թեև յերբեք ծիծաղելու տրամադրություն չուներ։

— Այո, ընկեր միլիցապետ, ճիշտ ե ասում, Քոթոթ ե անունը, — հաստատեց միլիցիոներներից մեկը։

Յերբ միլիցապետը դադարեց ծիծաղելուց, մի քանի հարցեր տվեց և ապա ասաց.—

— Դե վոր անունդ Քոթոթ ե, այս անգամ ներում եմ, բայց տես, վոր այսուհետև այլևս քեզ այստեղ չբերեն։

Քոթոթն ուրախությունից տեղում վեր-վեր թռչելով, արագորեն դուրս նետվեց դռնից ու փախավ։

Նշանակում ե Քոթոթը լավ անուն ե, — մը-

տածեց նա, և այնուհետև այլևս չեր բարկանում ընկերների վրա, յերբ նրան այդ անունով եյին կանչում։

Յեվ կծկված նստարանի վրա, նա ելի շատ դեպքեր եր հիշում իր կյանքից։ Միտքն աշխատում եր, բայց քաղցն այնպես եր տանջում, դատարկ ստամոքսն այնպես աղիողորմ նվում, վոր նա նույնիսկ գերադասում եր փորձանքի մեջ ընկնել, միայն թե մի կտոր հաց կարողանար ձեռք բերել։

Մի փոքրիկ, շատ փոքրիկ կտոր, այնքան, վոր ստամոքսը մի ակնթարթ գոնե հանգստանար։

Սակայն վոչ մի յելք չեր գտնում։

Յեթե գոնե քնել կարողանա...

Կքնի ու կմոռանա, իսկ յերեկոյան գուցե...

Պառկեց նստարանին յերեսն ի վայր, խփեց աչքերը։

Բայց ստամոքսն այնպես գալարվում, այնպես անհանգիստ կծկվում-բացվում եր, վոր կարծես լսելի յեր նրա աղաչանքի նվաղ ձայնը, վորը միաձուլվելով մեռնող տերևների խշխշոցին, ել ավելի վիշտ եր տարածում չորս բոլորքը, հակադրելով ուրախ քրքջացող զույգերի զվարճության։

3

Քնել էր արդյո՞ք ու վորքա՞ն ժամանակ էր անցել, Քոթոթը չգիտեր, յերբ մեկը կոպտորեն հրեց իրեն։

Բացեց աչքերը։

Գլխավերևը կանգնել էր իր «խուժանի» ընկերներից մեկը՝ մի նիհար, աչքերը դուրս ընկած և դեմքը շարունակ կեղտոտ մեկը։ Նա ընկերների շրջանում Հնարագետի համբավ ուներ և բավական ճարպիկ էր զանազան ծրագրեր գծելու մեջ, ուստի դրա համար էլ ընկերները նրան «Հնարագետ» էին անվանում։

Այդ անունը նրան մեծ բավականություն էր պատճառում և ամեն անգամ աշխատում էր պարծենալ դրանով ու ոգտագործել այն, ղեկավարի դեր ստանձնելու նպատակով։

Բայց լավ էր նրա հետ յերբեք «գործի» չգնալ։

Վտանգի ժամանակ մեկ էլ տեսար Հնարագետը չկա։

Սակայն նա շատ ընկերասեր էր։

Իր ունեցածից միշտ բաժին էր հանում նրանց և վտանգի մեջ ընկածների համար միշտ փրկության հնար գտնում։

Լավ է նրա ծրագրով գործ անել, բայց

յերբեք իր հետ չլինել,—այդպես էին ասում ընկերները և այդպես էլ վարվում։

Հնարագետն ինքն էլ այդպես հարմար էր համարում։

Ավելի յեր ապահով։

Իսկ իր բաժինը միշտ ստանում էր։

Նա շարունակ ուրախ էր, չգիտեր յերբեք հուսահատվել, թեկուզ և քաղցած լիներ ու միշտ ծաղրում էր թույլերին։

Նրա ներկայությունը յեռանդ ու վոգևորություն էր առաջացնում «խուժանի» մեջ։

Ցեվ այդ էր պատճառը, վոր Քոթոթը, հակառակ ստամոքսի տանջալի գալարումներին, յերբ աչքերը բաց անելով տեսավ նրան, թույլ ժպտաց, վորն ավելի շուտ ժպտի հեռավոր նրմանություն ուներ, ու նստեց տեղում։

—Հո՞, բաներդ լավ չեն, հա՞.—հարցրեց Հնարագետը, տեղավորվելով նրա կողքին։

— Սոված եմ,—շշնջաց Քոթոթը, – այսոր դեռ վոչինչ չեմ կերել։

— Ա՛յ քեզ բան... դե էլ ինչ ես նստել, շուտ վեր կաց գնանք,—Հնարագետը բռնեց նրա թևն ու քաշ տվեց։ Մի լավ ծրագիր ունեմ, գնանք, քեֆ կանենք.

«Վտանգավոր է»,—անցավ Քոթոթի մտ-

քով, «անպայման կթողնի ու կփախչի»։ Բայց քաղցածությունն հաղթեց և նա հետևեց ընկերոջը։

Քայլում են փողոցի միջով դեպի յերկաթուղու կայարան ու Հնարագետը բացատրում է իր ծրագիրը։

— Հիմի գնացքը գնալու ժամանակն է, կգնանք, մի կերպ կանցնենք պլատֆորմի կողմը. հեշտ է, հարկավոր է մի քիչ պտույտ գալ։ Յերբ գնացքը կանգ կառնի, մենք կմտնենք տարբեր վագոնների և իբրև կայարանում աշխատող բեռնակրերի, կառաջարկենք մեր ծառայությունը ճանապարհորդների իրերը վագոնից կառք տեղափոխելու։ Կվերցնենք մի-մի կապոց, չեմոդան, տոպրակ և մինչև տերը կիջնի, մենք շուտ-շուտ առաջ կնկնենք ու հայդա... կայարանի հակառակ կողմը... Հետո մի կերպ կծախենք։ Հեշտ է, զգույշ, չբռնվես, թե չէ թեթև չես ազատվի։ Աշխատիր այնպիսի բան վերցնել, վոր տանելը հեշտ լինի։

Քոթոթի մարմնով սարսուռ է անցնում։ Դա հո իսկական ավազակություն է, յեթե բռնվեց, այլևս ազատվել չկա։

Նա մի ակնթարթ մտածում է մերժել, հետ դառնալ, գուցե փողոցում մի կերպ կարողանա

հացի փող հավաքել։ Արդեն յերեկո յե, հասարակությունը կսկսի դուրս գալ զբոսնելու։

Սակայն իր այդ որվա անօգուտ փորձերը կանգնեցին առաջը և վերջնական անհաջողության վախը հաղթանակեց։

Ահա և կայարանը, վոր առջևում կանաչների մեջ սպիտակին է տալիս, վորպես մի հսկայական քարե սիրտ, վորի ամեն մի անկյունը հանգրվան է մեծ ճանապարհով յերթևեկող բազմաթիվ մարդկանց մեկը մյուսից տարբեր, մեկը մյուսից զանազան գաղտնիքների։

Գնացքը դեռ շուտ չի գալու, բայց մարդիկ խմբված դահլիճներում, սպասում են։

Դեռ չեն թույլ տալիս կառամատույցի կողմն անցնել։

Քոթոթն ու Հնարագետը պտույտ են տալիս կայարանին ու դուրս գալով մյուս կողմ, թաքնվում են պահեստատան յետև, հետ ու առաջ քայլող պահակից աննկատելի։

Նստած ավազի վրա, նայում են հեռուն, դեպի այն կողմ, վորտեղից յերևալու յե գնացքը։

Ահա հեռվից լսվում է առաջին սուլոցը զիլ ու յերկար... ապա մյուսը, յերրորդն ավելի վորոտնդոստ, բամբ ու աղմկալից, վորին միա-

խառնվում է անիվների աղմուկը, որոնք կարծես լայնաթոք աղաղակով հանգրվանին հասնելու իրենց ուրախությունն են հայտնում.—

— Արդեն հասանք, բարև ձեզ, արդեն հասանք, բարև ձեզ...

Յերբ հասարակությունը դահլիճից խռնվելով դուրս է թափվում կառամատույց, Քոթոթն ու Հնարագետը խառնվում են նրանց և գնացքի վերջին մասում, ամեն մեկը մի վագոնի պատուհանի առաջ կանգնած, իրենց ծառայությունն են առաջարկում իջնողներին։

— Եժան կվերցնեմ, ընկեր, տվեք այդ կապոցը ես տանեմ։ Ո՞ւր, կառք թե՞ դահլիճ։

Մարդիկ որերով նստած գնացքներում, յերբեք չեն շտապում և շատ հանգիստ են զգում իրենց, կարծես իրենց բնակարաններում, իրենց առանձնասենյակներում լինեն, բայց յերբ հասնում են ցանկացած կայարանը, մի ինչ որ անգիտակցական անհանգստություն է տիրում նրանց։

Շտապում են, աշխատում մեկը մյուսից առաջ անցնել...հրում են, բարկանում, ջղայնանում։

Աշխատում են բեռնակիրներին միմյանցից խլել, իրենց բեռները կոխել նրանց թևերի տակ,

դնել մեջքին և շտապեցնում են, շտապեցնում...

Քոթոթն ու Հնարագետը փոքր են, մեծ բեռներ չեն կարող տանել և իջնողները նայելով նրանց, ջղայնանում են, թե ինչու նրանք գոնե քիչ ավելի մեծ չեն, որ կարողանան վերցնել ծանր պայուսակներ, տոպրակներ։

Բայց կան այնպիսիները, որ նրանց կրելու համար յեվս բեռներ ունեն։

Քոթոթը մի փոքրիկ պայուսակ մեջքին, իջնում է վագոնից։

Ո՞ւր է Հնարագետը, չգիտե, ժամանակ չկա այդ մասին մտածելու։

Հարկավոր է շտապել։

Ու խռնվում է ամբոխին, իբր դահլիճի կողմը գնալու և յերբ նկատում է, որ պայուսակատերը կանգ է առել ու խոսում է մեկի հետ, իր վրա ուշադրություն չդարձնելով, անմիջապես փոխում է ճանապարհը և թեքվելով կանգնած կառախմբի հակառակ կողմը, վազ է տալիս դեպի հեռվում յերևացող ծառուտը, ուր պայմանավորվել են Հնարագետի հետ հանդիպելու։

Պայուսակը փոքր է, բայց ծանր։

Քոթոթը մի կողմից ուրախ է, որովհետև նշանակում է պայուսակում արժեքավոր բան

կա, բայց մյուս կողմից դժգոհ է, վորովհետև հոգնում է և չի կարողանում ավելի արագ փախչել։

Ո՜, ինչ փոքր են իր քայլերը, իսկ ծառուտը դեռ շատ է հեռու։

Հանկարծ յետևում ինչ վոր ձայներ է լսում։

Մի ակնթարթ հետ է նայում և սարսափում։

Յետևից վազում է պայուսակատերը և մի միլիցիոներ։

Ի՜նչ մեծ մեծ են նրանց քայլերը։

Կհասնեն, անպայման կհասնեն։

Միլիցիոները կանչում է.—

—Կանգնիր, թե չէ կկրակեմ։

Քոթոթի սարսափն անչափ է։ «Հիմի, հիմի կկրակի», -անցնում է մտքով և հանկարծ ձեռքերն ինքն իրենց բացվում են, պայուսակը վայր է ընկնում մեջքից, իսկ վոտքերն անգիտակցաբար ավելի արագ են թռչում դեպի առաջ։

Միայն թե պայուսակը վերցնեն ու այլևս չհետապնդեն։

Յեթե գոնե միլիցիոները չլինեի…

Ծառուտի կողմն այլևս գնալ չի կարելի։

Հնարագետը կարող է այնտեղ լինել. այդ դեպքում նա էլ կբռնվի։

Ու թեքում է ճանապարհը։

4

Յերբ Քոթոթն արթնացավ, իրեն շրջապատված գտավ մի խումբ մանուկներով։

Պատկոմներ էյին, վոր առավոտյան դուրս էյին յեկել բաց դաշտ մարզանքի ու յերեկոյան կոմ քաղաք էյին վերադառնում, ուրախ—զվարթ յերգելով։

Տեսել էյին ճանապարհի յեզրին ուշաթափ ընկած Քոթոթին, կանգ էյին առել և աշխատում էյին ուշքի բերել նրան։

Յերբ Քոթոթը աչքերը բաց արեց, շրջապատողներն ուրախացին բացականչեցին և լուրը բերնե-բերան անցավ վաշտի բոլոր ընկերներին։

Նա, վոր խոնարհված Քոթոթի վրա, ջուր եր ցանում դեմքին, փաղաքշական ձայնով հարցրեց.—

—Ինչպե՞ս եք զգում ձեզ, ընկեր։

Քոթոթը, վոր տեսնելով իրեն շրջապատողներին, մի ակնթարթ սրդողել էր ու անորոշության վախով բռնվել, հասկացավ, վոր նրանք իրեն բարեկամ են, վոր ազատել են միլիցիոների հետապնդումից։

Սիրտ առավ ու նվաղուն ձայնով ասաց. —

— Քաղցած եմ...

Պատկոմներն իսկույն շտապ-շտապ քանդեցին իրենց պաշարի մնացորդներն ու հանձնեցին Քոթոթի մոտ նստածին, վորն ընտրելով ավելի համեղ պատառներ, առաջարկեց նրան։

Քոթոթն սկսեց ագահ-ագահ ուտել, վախենալով, թե խլելու յեն ձեռքից։

Կողքին նստողը դիտում եր ու մտքով ընկած, կարծես բաց գրքի մեջ կարդում նրա կյանքը։

— Ո՞վ գիտե հասարակության համար ինչ օգտակար անդամ կարող է դառնալ, իսկ այսպես...

Նրա մտածումներն ընդհատեց ընկերներից մեկը, վոր ձայն եր տալիս. —

— Վահան, շտապիր, ճանապարհվում ենք։

Ցելավ. պատրաստվեց շարքում իր տեղը գրավելու, բայց մի միտք սուր կերպով պտտվում եր ուղեղում։

Ու դարձավ փաշտապետին, ցույց տալով Քոթոթին, վորը դեռ շարունակում եր ուտել։

— Իսկ սա՞։

— Ի՞նչ կարող ենք անել, — հարցրեց փաշտապետն իր հերթին։

— Տանենք մեզ հետ քաղաք, հետո այնտեղ կմտածենք։

— Լավ։

Ուրախ է Քոթոթը, վոր իրեն մենակ չթողեցին և շնորհակալությամբ լի հայացքով նայում է Վահանին։

Քայլում է նրա կողքով, շարքից դուրս ու մտածում. —

«Ի՞նչ լավ կլինի, յեթե ինքն ել նրանց շարքում լինի ու միշտ նրանց հետ։ Այնպե՜ս լավ կլինի։ Ամեն որ միայն մի կտոր հաց ունե նա, բավական է, այլևս ուրիշ հոգս չի ունենա և ամբողջ որը կսովորի, նրանց նման լավ տղա կդառնա»։

Նա նույնիսկ քիչ կարդալ գիտե, մի քանի տառ ճանաչում է։ Սովորել է պատերին փակցրած մեծատառ հայտարարություններից և ցուցանակներից, իր ընկերներից մեկի օգնությամբ, վորը մի ժամանակ դպրոց է հաճախել։

Ու մտածումներով տարված, չնկատեց ել ինչպես հասան քաղաք ու Աբովյան փողոցով անցնելով, կանգ առան պատկոմական շտաբի առաջ։

Պատկոմներն հրաժեշտ տալով միմյանց, ցրվեցին, իսկ Վահանը բռնելով նրա թևից, ներս

տարավ սենյակ, ուր մի քանի այլ պատկոմներ յեվս կային։

Դրսում արդեն մութն էր։

Նստած մի անկյունում, Վահանը հարց ու փորձ է անում Քո՛թոթին։

— Ո՞վ է, ո՞ւր պիտի գնա, ի՞նչ է անելու, և ինչու այդպես քաղաքից դուրս, ուշաթափ ընկած էր ճանապարհի վրա։

Յեվ Քոթոթը պատմում է ամեն ինչ։

Պատմում է իր մշտական օթևանի՝ փողոցի մասին, ընկերների ամենօրյա քաղցածության մասին, պատմում է իր այդ որվա բոլոր անհաջողությունների և վերջապես պայուսակը գողանալու մասին մեկիկ-մեկիկ, առանց ծածկելու, առանց իրեն արդարացնելու։

Լսում է Վահանը, ավելի մոտենում նրան, թեր պատում մեջքով և յերբ նա վերջացնում է, հարցնում է բուռն.—

— Կմնաս մեզ հետ։ Մնա մեզ մոտ, կսովորես, խելոք մարդ կդառնաս։ Համաձա՞յն ես։

Քոթոթն ուրախությունից քիչ է մնում լաց լինի, վոչինչ չի կարողանում ասել, թափով առնում է նրա ձեռքն ու ամուր-ամուր սեղմում և իր մեծ, սև, թախծոտ և ժամանակից շատ առաջ խորն ընկած աչքերով նրան նայում։

Անցան օրեր։

Քոթոթն արդեն պատկոմ է։

Նա դպրոց է հաճախում և ջանասիրությամբ աշխատում լրացնել իր տարիների թողած բացը։

— Նա այլևս Քոթոթ չէ։

Նա Հոկտեմբեր է, ի նշան Հոկտեմբերի հաղթանակի և մարդկանց յեղբայրության։

Ուրախ է, զվարթ, ընկերները սիրում են նրան, իսկ Վահանի հետ շատ մտերիմ են։

Մոռացել է անցյալը, անցյալը կարծես չի յեղել, կա միայն ներկան և գունագեղ, խոստումներով լի ապագան ու յերբ վաշտապետը վողջունում է նրանց.—

— Պատկոմ պատրաստ...

Նա ուժգին շեշտով, մյուսների հետ միասին պատասխանում է.—

«ՄԻ՛ՇՏ ՊԱՏՐԱՍՏ»։

ԱՌԱՆՑ ՎԵՐՆԱԳՐԻ

ՆԱԽԱԲԱՆ

Լինում է չի լինում, ասում են մի դղյակ է լինում շատ շքեղ, փարթամ, անթիվ—ան հաշիվ հարստությամբ։

Այդ դղյակում մի աննման տեսքով արև մազերով, շարմաղ դեմքով աղջիկ է լինում։

Դղյակ էին շտապում աշխարհի բոլոր կողմերից թագավորազներ, իրենց քաջագործությամբ ու ճարպիկությամբ դղյակի կույսի սիրտը շահելու։

Լինում է մի հայր՝ իմ հայրը։

Ունենում է իր դղյակը՝ իր տունը, հարուստ և ամեն ինչ առատ ու։

Իմ հոր տուն էին շտապում բազմաթիվ մարդիկ իրենց աշխատանքի արդյունքը բերելու, որ տանտերն ապրի առանց զրկանքի։

Դե որ ասում են, ուրեմն մի բան յեղել է։

Սակայն ինչ կապ կա այս յերկուսի մեջ։

Ճիշտն ասած՝ ոչ մի։

Միայն այն չափով, որ թե այն, թե այս, յերկուսն էլ չկան։

Դղյակն հեքիաթ էր, տունն էլ հեքիաթների շարքն անցավ։

Ցեղել են, անցել, վոր էլ չլինեն։

Մի քամի յեկավ, մի հողմ, մի թաթառ ու մաքրեց-սրբեց այն ամենը, վոր հեքիաթի պես կախվել էր մարդկանց գլխին։

Ու մոռացվեց։

Գուցե լոկ մի հեռավոր հուշ մնացած լինի, այն էլ միայն «նախկինների» սրտերում, վորոնք առավոտից մինչև ճաշ ու ճաշից մինչև յերեկո ու կրկին առավոտից մինչև իրիկուն զբոսարանի հին, վոտքերը բարձր ու ցածր, ամեն ուղղությամբ գետնի մեջ մտած նստարանները կապալով վերցրած, գալիս շարվում են միմյանց կողքի, հենված իրենց պես ծեր և հավիտենական հանգստի կարիք զգացող ձեռնափայտերին, վորպես սարյակների յերամ՝ հեռագրալարերին թառած։

Ո՞Վ ԵՄ ԵՍ

Մարդ եմ։

Մարդ, վոր աշխարհ է յեկել ապրելու։

Ի՞նչու յեմ աշխարհ յեկել, յես այդ չգիտեմ, այդ մասին պիտի հորս հարցնել։

Իսկ թե ինչո՞ւ յեմ ապրում, այդ մի ժամանակ, կարծում եմ, գիտեյի։

Այդ գիտակցությունը խնամոտ կերպով պատվաստել եյին ինձ թե տանը և թե դպրոցում։

Գրքերն էլ այդ մասին ինձ շատ բան եյին ասել։

Մի ժամանակ յես ամենքին էլ հավատում եյի։

Ինչպես կարող եյի չհավատալ, յերբ բոլորն ամեն ակնթարթ և ամեն որ նույնն եյին կրկնում։

Մանավանդ՝ գրքերը, վորոնցից յես շատ ունեյի։

Իմ սենյակում ինքս միայն մի փոքրիկ անկյուն ունեյի, իսկ մնացած վողջ տարածությունը նրանց էր պատկանում։

Ու նրանք, վորպես իրավատեր, բավական մեծ խնամքի եյին արժանանում իմ կողմից։

Բայց նրանք էլ ինձ խաբեցին, ինչպես իմ գեղագրության ծեր ուսուցիչը, վորի կարծիքով տառը գեղեցիկ գրելու համար հարկավոր է նախ քաշել մի հիմնական հաստ գիծ, ապա վեր տանել մի բարակ մազական։

Սակայն նա մոռանում էր, վոր այդ ձևով գրված տառը գեղեցիկ է միայն իր համար։

Բայց ստիպում էր, վոր բոլորս էլ այդ ձևը համարենք գեղեցիկ։

Մեր կարծիքը հաշվի չէր։

Մեր կարծիքը հիմարություն եր։

Սակայն պարզվեց, որ հիմարությունն հենց այդ է։

Ամեն գծագրող իր ձևն է գեղեցիկ համարում։

Օրինակ՝ մի հոռմեյական սյուն և կողքին կպած, ասենք, մի՝ պեղումների ժամանակ գըտնված նախամարդու ագդր։

Յեվ այդ հետևողականությամբ դուրս յեկավ, որ ամեն ինչ համեմատական է ու հարաբերական։

Առաջ գիտեյի թե ինչու յեմ ապրում, սակայն այժմ այդ էլ չգիտեմ։

Դուրս յեկավ, որ այդ էլ համեմատական է։

Գեղագրության նման։

Նշանակում է, որ այժմ յես կյանքի նըպատակ չունեմ։

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ ՊԵՏՔ Է ԱՊՐԵԼ

Քանի որ գոյություն ունեմ, ապա պիտի շարունակեմ ապրել։

Այլապես պիտի անձնասպանություն գործել։

Սպասինքն այն՝ ինչ որ մեկ որ ինքնին լինելու յէ։

Իսկ դա այնքան էլ մեծ հերոսություն չէ։

Արագացնել այն, ինչ որ պիտի լինի վաղ թե ուշ։

Այլ խնդիր է, յեթե մարդն անմահ լիներ։

Այո, այդ դեպքում իմաստ կունենար։

Վորովհետև դա մի անսովոր յերևույթ կլիներ։

Ցնցում կառաջացներ։

Այնպես՝ յեթե մեկ որ արևը սառչի։

Կամ թե՝ մարդը կարողանա ճանապարհվել դեպի Մարս այնպես, ինչպես Ամերիկա յե գնում։

Կամ թե մարդու ներսում թաքնված սուր յեղջյուրներն իրենց վողջ յերկարությամբ ցցվեյին գլխի աջ ու ձախ կողմերում։

Թե չէ ինչ արժեք ունի, յեթե կյանքի նըպատակ չունեցող բազմամիլիոն մարդիկ մեկ որ պառկեն ու մեռնեն։

Վորքան շուտ, այնքան լավ։

Այն ժամանակ, օրինակ, քաղաքային այգու նստարաններն հանգիստ կառնեն ու բյուսերն ավելի փարթամ կուռճանան՝ ավելի առատ բերք տալով։

Այս դեպքում հերոսությունն ապրելն է։

Ապրել և կյանքն իմաստավորել։

ՅԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՄԱՐԴԿԱՆՑ

Անկասկած է, յես սիրում եմ մարդկանց ։

Յերբ անցնում եմ փողոցով և անկյուննե-

րում տեսնում եմ մանուկներին կիսամերկ ու քաղցած, պառկած միմիանց վրա ինչպես մի մախրակույտ կամ ցեխի զանգված, իմ սիրտը ճմլվում է ու յերազում եմ, ինչպես յես մեկ որ մի՝ պարտեզներով ու սպիտակ տներով գեղեցիկ քաղաք եմ շինում և նրանց բոլորին հավաքում եմ այնտեղ, հանձնելով խնամոտ ձեռքերի հոգատարության։ Ինչպես նրանք հավիտենական թարմ կանաչի մեջ, վորպես ամենաբուրավետ ծաղիկներ, ճռվողում են անհոգ թռչնակների պես և դաստիարակների գիտությանն հանձնած նրանց մանուկ ուղեղները, պատրաստվում են իմաստավոր կյանքի ապագա պիտանի ուղիները հարթել։

Յեվ կամ յեթե տեսնում եմ մտամոլոր քայլերով անցնող մեկին, վորն իր ուսերին նստած վըշտի տակ կքել է, անմիջապես կամենում եմ մոտենալ նրան, սփոփել և այնպիսի գեղեցիկ բառեր ասել, վոր նա ժպտա, վոր ուրախ-ուրախ ծիծաղի բարձր։

Ծիծաղի, այո՛

Հարկավոր է, վոր մարդիկ ծիծաղեն։

Ընդհանրապես մարդիկ քիչ են ծիծաղում։

Յեթե մեկ-մեկ ել ծիծաղում են, կարծես նրանց ներսում մի ինչ վոր անյերևույթ ձեռք

կոկորդը բռնած, սեղմում է, թե սուս արա, բավական է։

Պետքե ազատվել այդ աներևույթ ձեռքից։

Յեթե վոչ, հետզհետե ծիծաղը կմոռացվի։

Այդպես շարունակվելու դեպքում շուտով յերեք տարեկան յերեխան վաթսուն տարեկան ծերուկի լրջություն կստանա։

Այո՛, այո՛, ծիծաղ, ուժեղ, անզուսպ, անհետադարձ ծիծաղ է պետք։

ԳՈՐԾԻ ՅԵՄ ԴԻՄՈՒՄ

Ու վոգևորված իմ այդ հայտնաբերությամբ, յես արագ-արագ, վազելու չափ արագ քայլում եմ փողոցում։

Մարդիկ զարմանքով ինձ են նայում։

Մեկը նույնիսկ մատով ցույց է տալիս ինձ և գլուխը յերերում, կարծես խղճալով ինձ, վոր այդպես յերիտասարդ հասակում խենթացել եմ, կամ խենթանալու նշաններ եմ ցույց տալիս։

Սակայն այդ վոչինչ։

Քայլում եմ ու միտքս նույնպես արագորեն աշխատում է։

Ի՞նչպես անել։

Վ՞որն է այդ ճանապարհը։

Գտա։

Զավեշտը, - ահա ամենաուղիղ միջոցը:

Այո, ի հարկե:

Ու վազ եմ տալիս խմբագրատուն:

Յես կարճահասակ եմ ու բավական նիհար:

Ոդի մեջ բռնած իմ տարածությունը և յերկրի վրա ունեցած իմ ճնշումը չափազանց փոքր է, ուստի աննկատելի մտնում եմ խմբագրի առանձնասենյակի դուռը:

Բայց հանկարծ դեմս է յելնում մի ինչ-վոր արթուն պահապան և հուզված փակում առաջս:

— Չի կարելի, ընկեր, խմբագիրն զբաղված է, վաղը յեկեք, — ասում է նա, հետ-հետ հրելով ինձ:

Յես աշխարհն ու մարդկությունը յերջանկացնելու ծրագրերով եմ տարված, իսկ սա այստեղ ինչ-վոր զբաղվածության մասին է խոսում:

Ի՞նչ տարօրինակություն:

Չէ՞ որ ամեն րոպե թանգ է:

Հրում եմ նրան ու դուռը թափով բաց անելով, ներս մտնում:

Խմբագիրը նստած մի ահագին գրասեղանի առաջ, գրում է, խորասուզված մտքերի ծովում:

Ո՞վ գիտե ինչ կնճռոտ խնդիր է կամենում լուծել:

Մի րոպե զղջում եմ կատարածս հանդուգն քայլի համար:

Հանդուգն, այո, վորովհետև յես իմ ներս ընկնելով անշուշտ ընդհատեցի խմբագրի մտքի թելը, ուրեմն և արգելք յեղա մարդկային կյանքի վորևէ կողմի բարելավման խոշորագույն ծրագրերից մեկի լույս աշխարհ գալուն.

Կամենում եյի հետ դառնալ և սպասել:

Վոչինչ, թող մարդիկ մի քիչ ուշ սկսեն ծիծաղել, — մտածեցի յես, կիսապտույտ անելով վերադառնալու, յերբ խմբագիրը դարձավ ինձ. —

— Ի՞նչ եք կամենում.

Նա իր լայնությամբ բավական մեծ տրամագիծ ուներ և շարժումից տակի բազկաթոռը ծանրորեն հեվաց:

Դարձա ու նստեցի:

— Յես կամենում եմ մարդկանց յերջանկացնել:

— Ինչպե՞ս, — խմբագիրն աչքերը կկոցեց:

— Այո, յերջանկացնել: Մարդկությունը դարեր շարունակ տառապում է վշտի ու հոգսերի ծանր բեռների տակ, վորոնք յերկու Մասիսների պես ծանրորեն չոքել են նրա կրծքին ու թույլ չեն տալիս նրանց սրտանց ծիծաղելու: Մարդկության յերջանկությունն իր ծիծաղի մեջն

ե, նրանք պիտի ծիծաղեն, նրանք պարտավոր են ծիծաղել։ Իմ այս հայտնաբերությունը միանգամայն փոխելու յե մարդկանց կյանքի հիմքերն ու պայմանները։

Դուք պարտավոր եք ընդառաջել ինձ։

Շատ բան պետք չե, մի վախեցեք։

Միայն թերթի մեկ եջը։

Իհարկե, և առանձնասենյակ իր բոլոր հարմարություններով և մահճակալով...

Չեմ խոսում ռոճիկի մասին, դա ինքնին հասկանալի յե և չափը հայտնի, որպես սպեցռոճիկ։

Յեվ յես կսկսեմ այդ եջում պարզաբանել իմ միտքը։

Դուք կտեսնեք, ինչպես մարդիկ այսուհետև փորերը բռնած քահ-քահ կծիծաղեն և այլն և այլն։

ԲԱՅՑ...

Մինչ յես շարունակում եյի խոսել ու իմ ծրագիրը մեկնաբանել, խմբագիրն սկսեց հորանջել և ձեռքը յերկարելով մեծ թանաքամանի մոտ յեղած զանգին, սեղմեց կոճակը։

Արթուն պահապանը ներս մտավ։

— Ընկերն ուզում է գնալ, ճանապարհիր

նրան — դարձավ նրան խմբագիրը, կրկին անգամ հորանջելով և հաստ վիզը շփելով։

Յես զարմացած, ապուշ եյի կտրել։

— Յես ճանապարհը գիտեմ, ընկեր, սակայն այդ չե կարևորը։

— Դա շատ կարևոր ե։

— Կարևորն իմ ծրագիրն ե, թերթի եջը, առանձնասենյակը...

Խմբագիրը հետ ընկավ թիկնաթոռի մեջքին։

— Դուք կոմի՞կ եք։

— Ինչպե՞ս թե կոմիկ։

— Կոմիկ դերասան, չե՞ք հասկանում։

— Վո՛չ։

— Ափսոս։ Նշանակե խեղկատակ եք։ Դիմեցեք կրկեսի վարչությանը։ Մեր կրկեսը լավ խեղկատակի կարիք ե զգում։ Կամենաք, գրություն տամ կառավարչի անունով։

— Բայց...

— Այո՛, այո՛, դուք հսկայական հաջողություն կունենաք։

...

— Դուք չե՞ք կամենում։ Սակայն ինձ մոտ ել կարող եմ տեղավորել ձեզ։ Համաձայնվեցեք լրագիր վաճառել։

Խմբագիրը սկսեց ծիծաղել բարձրաձայն։

— Հավատացնում եմ, դա շատ հետաքրքիր գործ է։

Հենց որ լրագիրը լույս տեսավ, դուք կըվերցնեք մի կապոց և փողոցներում վազվզելով, բարձր ձայնով կկանչեք հետաքրքիր լուրերը։ Ժողովուրդն անմիջապես կշրջապատի ձեզ և դուք կծախեք... Դուք շատ հետաքրքիր լրագրավաճառ կլինեք։ Շատ շահավետ գործ է։ Հատից կստանաք մեկ կոպեկ։ Յեթե որական ծախեք հարյուր հատ, կստանաք մեկ մանեթ, յեթե հարյուր հիսուն հատ...

— Թո՛ւ, գրողը տանի...

Կատաղությունից վոտքի յեմ ցատկում և մի քայլ անում դեպի նա, բայց արթուն պահապանը բռնում է ինձ ու դուրս հրում։

— Լսեցեք, — կանչում է խմբագիրը, — դուք ճանաչում եք Սպանդարյան փողոց № 72 տունը, խորհուրդ եմ տալիս ուղղակի այնտեղ գնալ։ Դա այնքան էլ անհաճո տեղ չէ, վորովհետև այլևս դեղին գույն չունի։ Սպիտակ են ներկել։

ՓՈՔՐԻՑ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ

Դուրս եմ յելնում ու մտամոլոր իջնում փողոցով, ուր մարդիկ շտապ-շտապ անցնում են վեր ու վար։

Յես կարծես պատրաստ եմ բոլորից ներողություն խնդրել, վոր «ինձանից անկախ պատճառներով» չկարողացա իրականացնել իմ սքանչելի ծրագիրը ու նրանք դեռ պիտի շարունակեն այդպես կծկված մնալ վշտի ծանրության տակ, մինչև...

Այո՛, մինչև...

Այնուամենայնիվ յես չեմ հրաժարվում իմ ծրագրից։

Դա արդեն իմ կյանքի նպատակն է ու ինձանից անբաժան։

Միայն թե հարկավոր է գործի դիմել զգուշությամբ։

Կամաց-կամաց։

Պետք է սկսել փոքրից և աստիճանաբար հասնել նպատակին։

Այդպես է կյանքի օրենքը։

Բոլոր մեծ մարդիկ սկզբում հալածվել են, յերկար ժամանակ անճանաչելի մնացել և բոլորովին այլ գործերով զբաղվել, մինչև նրանց համար հնարավոր պայմաններ են ստեղծվել։

Անհրաժեշտ է հնարավոր պայմաններ ստեղծել։

Պայմաններ ստեղծելու համար պահանջվում է դիպլոմատիա։

Յես լեվս դիպլոմատ կլինեմ։

Կյանքում դիպլոմատիան մեծ դեր է խաղում։

Դիպլոմատիան փոփոխում է պետությունների ներքին կյանքը, նրանց արտաքին հարաբերությունները։

Դիպլոմատիան մարդկանց համար ստեղծում է պաշտոն, դիրք, հասարակական արժեք։

Դիպլոմատիան հաց է, բնակարան, ճոխ սեղան...

ԾԱՌԱՅՈՒԹՅԱ՛Ն ՊԵՏՔ Է ՄՏ՛ՆԵԼ

Նախ և առաջ պետք է ծառայության մտնել։

Յեթե խմբագրի հետ գործը գլուխ գար, հարցը կփակվեր։

Ամեն ինչ պատրաստ կլիներ ինձ համար։

Ինչպես թռչունների համար՝ ամեն թուփ ու թավուտ։

Իսկ այժմ կրկին նախկին որերիս պիտի դառնամ։

Սակայն դա բանի նման չէ։

Փողոց և քաղցած փոր։

Վո՛չ, մեծ ծրագրեր հղացող մարդը և՛ տաք բնակարան պիտի ունենա, և՛ պատրաստի սեղան։

Այդ նրա իրավունքն է։

Այդ մասին պիտի հոգան ուրիշները։

Պետք է նախ մեծությունը ճանաչող միջավայր ստեղծել, որից հետո...

Հետո փողերը կհնչեն իրենք իրենց և համբավը կգլորվի, կգլորվի ու կմեծանա...

Այն ժամանակ ամեն ինչ ինքն իրեն կլինի։

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱ՛Ն ԸՆՏՐՈՒԹՅՈՒ՛Ն

Ի՞նչ մասնագիտություն ընտրել ծառայության մտնելու համար։

Ֆինանսնե՞ր, վարչակա՞ն գործ, դատաստանակա՞ն, կոոպերացիա՞...

Վո՛չ, վո՛չ, դրանք ինքնին շատ արժեքավոր հանգամանքներ չեն մարդկության համար։

Կեղտոտ մետաղ, կարգապահություն, որինապահություն կամ առևտուր...

Ներկայումս տիրող այդ պայմանները պիտի վերացնել իսպառ։

Յես դեմ եմ դրանց և հավատացած եմ, որ շուտով այդ ժամանակավոր յերևույթները կվերանան և այլևս մարդը պետք չի ունենա դրանց։

Այդ ամենը մարդկությունը թշվառացնելու, նրանց կյանքը ծանրացնելու պայմաններ են։

Ստեղծագործական աշխատանքն է, որ ար-

մասապես բարեփոխելու յե մարդկային գոյության հիմքերը։

Յես կգնամ այդ ճանապարհով։

Ուրեմն... ամենից լավը տնտեսագիտությունն ե։

Դե ի հարկե։

Յես տնտեսագետ եմ։

Մեծ, անվանի տնտեսագետ, վորի առաջ խոնարհվում են բոլոր այլ ասպարեզի մասնագետները։

Տնտեսագիտությունն ե, վոր բարձրացնելու ե յերկրի նյութական և կուլտուրական մակարդակը, վոր մարդկանց ազատ և ապահով ապրելու հնարավորություն ե տալու, վոր նրանց մեջ ծիծաղ ե առաջ բերելու։

Ինչպիսի խոշոր սխալ եր իմ կողմից հենց սկզբից այդ մասին չմտածելը։

Հրաշալի՛ յե։

Ամեն ինչ լավ ե դասավորվում։

Ուրախ եմ, վոր խմբագրի հետ գործը գլուխ չեկավ։

Այո, յես տնտեսագետ եմ։

Իմ խորհրդով ե կատարվում ամեն ինչ և յերբ անցնում եմ փողոցով, բոլորն ինձ են մատնացույց անում, վորպես իրենց խնկական բա-

րեկամի, վոր մոռացած ինքն իրեն, ամեն ինչ ի սպաս ե դնում մարդկության ընդհանուր սեղանին։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՅԵՄ ԸՆԿԵՐՈՋՍ

Յեվ յես հպարտորեն քայլում եմ փողոցում, յերեկոյան մթնշաղի մեջ։

Սակայն ստամոքսս ինչ վոր անհանգիստ շարժումներ ե գործում և պահանջ ներկայացնում։

Անիծյալը մոռացել ե, վոր յես ինձ նվիրել եմ մարդկության և ժամանակ չունեմ նման հիմար բաների մասին մտածելու։

Վոչինչ, կլռի։

Սովոր ե։

Փողոցի անկյունում հանդիպում եմ ընկերներիցս մեկին, վոր քաշված պատի տակ, թափառուն հայացքով դիտում ե անց ու դարձ անողներին, կարծես մտքում ինչ վոր ծրագիր քննության առնելով։

Հպարտորեն անցնում եմ մոտով, իբր չեմ նկատում։

Քիչ հետո մեկը քաշում ե թևս։

Հետ եմ դառնում, նա յե։

— Ի՞նչ ե, չե՞ս ուզում ճանաչել, — հարցնում ե նա կշտամբանքով։

— Բարեկամս, ես հիմա հայտնի մարդ եմ։

— Ինչպե՞ս։

— Այո, ես անտեսագետ եմ։

— Այդ ի՞նչպես, եղբայր, երեկվա ու այսօրվա մեջ այդ ինչ անցավ։

— Ե՜հ, երեկը երեկ էր, այսօրն այսօր։

— Պատմիր։

— Պատմելու ոչինչ չունեմ։

— Որ՞ տեղ ես ծառայում։

— Դեռ չեմ ծառայում, բայց առաջարկներ շատ կան։

Ընկերս բռնում է թևս։

— Լսիր, չե՞ս կամենում մի մի բաժակ գարեջուր խմենք, ես փող ունեմ։

Ստամոքսս անմիջապես շարժվում է։

— Ուրախությամբ։

Մտնում ենք գինետուն։

— Գիտես, եթե փող ունես, ավելի լավ է մի կտոր ուտելու բան վերցնենք,— ասում եմ ես։

— Լավ, բայց թանկ չլինի, փողը քիչ է,— ասում է նա ու քաշվում ենք մի հեռավոր անկյուն։

Պատվիրում ենք։

Փողոցի անկյուններից յուրաքանչյուր... գինետուն։

Սա ինքնին իսկ նշան է իմ անտեսագետ լինելուն։

Մարդկության կյանքի բարելավումը սկսվում է ինձանով։

Ագահաբար ուտում ենք։

— Լսիր, երբ գործի մտնես, չմոռանաս ինձ։

— Ո՜, սիրելի բարեկամս, իհարկե ո՛չ։ Դու իմ անձնական քարտուղարը կլինես։ Ես այսօրվանից նշանակում եմ քեզ այդ պաշտոնին։

— Շնորհակալ եմ։ Ես շատ հավատարիմ ծառայող կլինեմ։

Վոգևորվում ենք։

Պատվիրում ենք նաև գարեջուր։

—Մարդկության ապագա երջանկության կենացը,— բարձրացնում եմ բաժակս։

—Կեցցե մեր մեծ անտեսագետը,—ընկերս ձայնը բավական վեր է բարձրացնում։

Չորս բոլորքից հետաքրքրությամբ մեզ են նայում։

—Լսիր,—ընկերս խոնարհվում է դեպի ինձ,— իսկ այս գիշեր մի թեթև «գործ» չանենք, հենց այնպես, մի երկու օրվա ապրուստ հայթայթենք։

—Վո՛չ,—զայրանում եմ ես,—ինչե՞ր ես ասում, վաղվանից երկուսս էլ ապահով ենք։

—Լա՛վ, մի բարկացիր միայն։

Նստում ենք յերկար։

Գինետունը փակելու ժամանակն է, պետք է արդեն վճարել։

Սակայն փողը պակաս է։

Ինչ կերպ էլ հաշվում ենք, պակաս է դուրս գալիս։

Ի՞նչ անել։

Ափսոս, որ այստեղ դեռ ինձ չեն ճանաչում։

Մտածում ենք։

Ու մեկ մեկ դուրս ենք յելնում յետևի դռնով, ուր գնում ենք «կարևոր գործով»։

Պատը խանգարում է փողոց դուրս գալու, բայց այնքան էլ բարձր չէ։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒՄ

Յերբ գինետնից բավական հեռանում ենք, կանգ եմ առնում։

—Ո՞ւր գնալ...—կրկին կանգնում է իմ առաջ այդ հարցը։

Ընկերս էլ ինձ նման անկյուն չունի։

Կրկին քաղաքային այգու ծառերի տակ, միլիցիոներների աչքից հեռու։

Բայց մի գիշեր է միայն։

Այս գիշեր է՛լ թող այդպես լինի։

Պառկում ենք կիսաչոր կանաչին ու լուռ դիտում յերկինքը։

Խոսելիք չունենք։

Կուշտ ենք և ապագայի գունագեղ հեռանկարը մեր առաջ։

Շուտով մոռանում ենք ամեն ինչ ու քնում խաղաղ։

Յեղանակը դեռ ցուրտ չէ ու հողին պառկած, պարզ յերկնքում փայլող աստղերի տակ քնելն սքանչելի յէ, մանավանդ, յերբ հոգիդ ուռչում է դեպի մարդիկ ունեցածդ անսահման սիրուց և յերբ զգում ես քո ոգտավետությունն ու փորդ էլ կուշտ է։

ՅԵՍ ՊԱՇՏՈՆ ԵՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Հետևյալ առավոտ արթնանում ենք բավական ուշ, բայց և այնպես դեռ վաղ է։

Դուրս ենք գալիս քաղաք շրջելու։

Ընկերոջս փողը նույնությամբ մնացել է։

Մտնում ենք թեյարան և թեյ խմում։

Ճիշտ քաղաքացիների նման։

Քաղաքային ժամացույցը խփում է ութ և կեսը։

Պարապմունքներն սկսվում են ութին։

Շտապում ենք։

— Վարիչը դալիս է տասից վոչ շուտ, — հայտարարում է քարտուղարը։

Բավական ընդարձակ սենյակում բազմաթիվ փոքր ու մեծ սեղաններ կան դրված։ Ամեն մեկ սեղանի մոտ նստած են մեկ—յերկու պաշտոնյաներ։

Կանանց թիվը բավական շատ է։

Բայց չի յերևում, վոր զբաղված են աշխատանքով։

Մի մասը հետ ընկած նստած աթոռների մեջքին, անտարբերորեն նայում են առաջ, մի մասն ել սեղանից սեղան բարձրաձայն խոսակցում են։

— Վարյա, ափսոս յերեկ չեյիր յեկել ներկայացում, շատ լավ եր։

— Ի՞նչ եյին խաղում։

— Համլետ։

— Ինչպե՞ս եր։

— Հրաշալի, շատ ընտիր հասարակություն կար։

— «Են մեկը» մասնակցում եր, — դիմում է մի յերրորդը առաջինին։

— Այո։ Սքանչելի յե նա այդ դերում։ Այնպես սազ է գալիս թիկնոցը։

— Դո՛ւշկա։

— ...

— Կարո, այսոր անպայման գնա կինո։

— Ի՞նչ կա այդպես։

— Ցույց են տալիս «Գնչուհու սերը», Ֆրանչեսկա Բերտինին աննման է խաղում։

— Այո, նա լավ դերասանուհի յե։

— Ո՛, ինչ աչքեր ունի, ուղղակի այրում են։ Այնպիսի ցնցող մոմենտներ կան, վոր դիմանալ չի լինում։

— Ասում են Ամերիկայում կինո-դերասանուհիներ կան, վորոնք շաբաթական տասը հազար դոլլար են ստանում—քարտուղարը բարձրացնում է գլուխը և նայում իր լսարանին։

— Տասը հազար դոլլա՛ր... թռչում է բոլորի բերանից։

— Յերանի՜ նրանց...

— Այ, հասկանում եմ, — Վարիայի աչքերը վառվում են հուզմունքից, — թե չե ամբողջ որը չարչարվիր և ամսական ստացիր քսան ութ մանեթ...

— Ինչպե՞ս են կարողանում այդքան փողը ծախսել...

— Ծախսելն ինչ կա վոր, տուր ինձ, տես թե ինչպես եմ ծախսում։

Լսում եմ ու զայրանում։

— Վո՛չ, յերբ յես գործի անցնեմ, այս դատարկախոսությանն անմիջապես վերջ կտամ,— մտածում եմ ու քարտուղարիս հետ դուրս եմ գնում, ժամը տասին գալու։

ՎԱՐԻՉԸ

Գալիս ենք ժամը տասին։

Վարիչը դեռ չի յեկել։

Այս անգամ սպասում ենք դրսում։

Տասն և մեկին գալիս է։

Բայց վոչ վոքի չի ընդունում։

Սաստիկ զբաղված է։

— Գնացեք և ժամը մեկին յեկեք,-ասում է քարտուղարը։

—Բայց ես այդքան չեմ կարող սպասել, առանց այն էլ յերեք ժամից ավելի կորցրել եմ —իմ ձայնը հպարտ է հնչում։

Անշուշտ չի համապատասխանում թե իմ և թե ընկերոջս հագուստին։

— Իսկ ի՞նչ գործ ունեք։

Չէ, յեղբայր,—մտածում եմ,—չես խաբի, չեմ ասի։

Ու դառնում եմ իրեն.—

— Շատ կարևոր բան ունեմ ասելու անձամբ իրեն։

— Գործի հետ կապ ունի, թե մասնավորապես իրեն է վերաբերում։

Վո՞րն է լավ,—մտածում եմ, մտքումս ծանըր ու թեթև անելով։

Մարդիկ միշտ անձնականը վեր են դասում։

— Իրեն է վերաբերում,— ասում եմ։

Այս անգամ բաղդը ժպտում է ինձ։

— Իսկույն, սպասեցեք մի րոպե։

Քարտուղարը ներս է մտնում և մի ակընթարթից դուրս յելնում։

— Խնդրեմ,—դիմում է ինձ։

Յես ու ընկերս ուզում ենք ներս մտնել։

— Միայն դուք, իսկ ձեր ընկերը թող ըսպասի այստեղ,—ասում է քարտուղարը, առաջներս փակելով։

— Լավ։

Դառնում եմ ընկերոջս և հրամայական շեշտով նետում,—

— Սպասի՛ր։

Ներս եմ մտնում։

Վարիչը թաղված բազկաթոռում, ծխում է և ինչ վոր գիրք թերթում։

— Ի՞նչ կասեք,— դառնում է ինձ, թողնելով գիրքը ու ինձ նայելով։

— Յես տնտեսագետ եմ և յեկել եմ համապատասխան պաշտոն ստանձնելու։

— Բայց դուք ինձ վերաբերող գործ ունեյիք։

— Դե իհարկե ձեզ է վերաբերում։ Դուք հնարավորություն կունենաք մի հմուտ մասնագետ և տնտեսական կյանքի բարելավման բազմաթիվ վարդագույն հեռանկարներ ունեցող աշխատակից ունենալ։

Վարիչը զարմանքից լայնացած աչքերով ինձ է նայում։

— Իհարկե,— պնդում եմ ես,— մեր յերկրի շահն է այդ պահանջում։

— Տնտեսագե՞տ եք։

— Այո։

— Փաստաթղթեր ունեք։

Փաստաթղթե՞ր…

Գրողը տանի, այդ մասին վոչինչ չեյի մտածել։

Պետք է մի բան հնարել։

— Դժբախտաբար վոչ։ Բոլոր փաստաթղթերըս հրդեհի ժամանակ այրվեցին։ Գիտեք, դա մի սարսափելի հրդեհ էր, հազիվ ինքս կարողացա ազատվել։

— Ո՞վ կարող է յերաշխավորել ձեր մասին։

— Յերաշխավորե՞լ։ Կարծում եմ վոչ վոք, վորովհետև յերեկ միայն ժամանել եմ այստեղ

և չգիտեմ թե իմ նախկին ընկերներից ովքեր կան։

— Այդ լավ չէ, առանց յերաշխավորության վոչինչ անել չեմ կարող։

— Իսկ ինչպե՞ս անել։

— Չգիտեմ։

— Սակայն ինձ հարկավոր է ծառայել, այլապես իմ դրությունը բավական ծանր կլինի։

— Դժբախտաբար վոչինչ անել չեմ կարող,— առանձին շեշտով ասում է վարիչը, կրկին խորասուզվելով գրքի էջերում, ծխախոտի ծուխը քուլաներով բաց թողնելով մաքուր ածիլած շրթունքներից։

ԳՈՆԵ ՑՐԻՉԻ ՊԱՇՏՈՆ

Յես հասկանում եմ, վոր վարիչի ընդունած այդ դիրքը նշանակում է, թե ընդունելությունը վերջացած է, սակայն ինչպես կարող եմ դուրս գալ այսպես ձեռնթափ։

Իսկ ծրագրերը, ապագան, վաղվա որը…

— Ընկեր վարիչ…

— Յես ասացի ամեն բան։

— Իմ դրությունը չափազանց ծանր է։

— Ցավալի յե։

— Գիտեք, գուցե առայժմ մի այնպես, փոքր պաշտոն…

— Դուք ինձ խանգարում եք, ընկեր, յես զբաղված եմ, յես չեմ կարող իմ ժամանակն ամբողջապես ձեզ տրամադրել։

— Ներեցեք, գուցե ցրիչի պաշտոն...

— Բոլոր տեղերը բռնված են։

— Այնուամենայնիվ...

Վարիչը զանգահարում է։

Հազար անգամ ասել եմ, վոր իմ զբաղված ժամանակ վոչ վոքի ներս չընդունեք,— ջղայնացած հարձակվում է ներս մտնող քարտուղարի վրա։

Քարտուղարը գունատվում է և շփոթվելուց կարծես խոսելու ընդունակությունը կորցնում։

— Բայց նա ասում եր...

— Սատանան գիտե թե ինչ է, շատ ել ասում եր,— վարիչը ձեռքն ամուր խփում է սեղանին։

Քարտուղարը կծկվում է։

Յես բարձրանում եմ տեղիցս և ուղղվում դեպի դուռը։

— Ցտեսություն...

ՓՈԴԼՈՑՈՒՄ

Ընկերս սպասում է պատշգամբում։ Բռնում եմ թևն ու իջնում աստիճաններով։

— Հ՞ը, վո՞ր բաժինն հանձնեցին,— հարցնում է։

Լռում եմ։

— Ելի ի՞նչ պատահեց քեզ։

— Վոչինչ դուրս չեկավ։

— Այսինքն ինչպե՞ս, չե՞ վոր ասում եյիր հրավիրում են։

— Ե՛, քո գլուխը չունեմ։

— Այդպես հա՞, նեղ տեղն ընկած ժամանակ գլուխ ունե՞ս։

— Ասում եմ բան դուրս չեկավ։

— Ասում ես ելի, վոր խույս տաս։ Իսկ խոստումդ։

— Այո, յեթե յես պաշտոն ստանամ, խոսքս խոսք է։

— Բայց չե՞ վոր ասում եյիր, թե առաջարկում են,— ընկերս կրկնում է և համառ նայում ինձ։

Աչքերս խոնարհում եմ գետին։

— Ասում եյի, բայց...

— Խաբո՞ւմ եյիր...

— Յես կարծում եյի, թե կառաջարկեն։

— Գնա դու ել ե՛, իզուր որս կորցրի, փողերս ել վրան,— ասում է նա ու պտույտ տալով, հեռանում, առանց հետ նայելու։

Մնում եմ մենակ։

ԹԱՓԱՌՈՒՄ ԵՄ

Կրկին փողոցում։

Կրկին այն ամենը, ինչ վոր եր։

Կարծես ավելի յեվս փոքրանում եմ և թեթևանում։

Սակայն յես աշխատել եմ կամենում։

Կամենում եմ ունենալ իմ անկյունը և իմ աշխատանքի վարձատրությունը, կամենում եմ իմ աշխատանքով ոգտակար լինել մարդկանց ու ընդհանուր գործին։

Սակայն կրկին թափառում եմ աննպատակ։

Առանց գիտենալու, թե ի՞նչն ե ինձ առաջ մղում, հետ դարձնում։

Ի՞նչ ե ինձ սպասում իմ ճանապարհին։

Ինչի՞ վրա եմ սպառելու իմ ուժերը։

ՈՒՏԵԼ ԵՄ ՈՒԶՈՒՄ

Անտանելի քաղց եմ զգում։

Արդեն յերեկո յե, իսկ իմ կերածը մի կտոր հացն ե յեղել առավոտյան թեյի հետ։

Փող ել չունեմ։

Ընկերոջս մոտ մի քանի կոպեկ մնացել եր, բայց նա յել գնաց։

Յեթե մի կտոր սև հաց լիներ գոնե…

Չկա՛։

Մութ։

Սակայն դա կնշանակե վերադարձ դեպի իմ հին կյանքը, վորից կտրվել եմ կամենում։

Քայլերս արագացնում եմ։

Գուցե շտապելուց քաղցս մոռանամ։

Սակայն վո՛չ։

Պահանջը սաստկանում ե։

— Տարորինակ անգիտակցությամբ շարունակ ուտեստեղենների խանութների մոտ եմ լինում։

Ահա մեծ ապակու հետև ցուցադարակում շարված են բազմաթիվ ուտելիքներ։

Յերշիկ, ապխտած բուդ, ձկնեղեններ, տապակած հավ, ձկնկիթ, պանիր, յուղ…

Այնքան մոտ, այնքան շատ…

Ձեռքդ պարզիր ու վերցրու ինչքան կամենաս։

Բայց մատներս կպչում են սառն ապակուն և հիշում եմ, վոր փող ե պետք։

Իսկ փող… չկա։

ՓՐԿԻՉԸ

Ուտեստեղենի խանութի դուռը թափով բացվում ե ու ներս ե մտնում մեկը, փայտին հենվելով։

Ապակու յետևից յերևում ե նրա կիսադեմքը։

Սպիտակահեր ծերունի լէ, ազնիվ դեմքով։

Անկասկած նա շատ բարի մարդ է։

Այո, այո։

Ցես վաղուց սպասում էյի նրան։

Սպասել եմ օրեր, տարիներ։

Վերջապես ահա նա։

Վերջապես գտա նրան։

Նա հիմա դուրս կգա, կմոտենա ինձ, կբռնի թևս ու կասի.

— Գնանք ինձ հետ, դու շատ ես տանջվել, գնանք ու յերջանիկ յեղիր։ Ապրիր խաղաղ, հանգիստ, առատության մեջ։ Ել պետք չի, վոր փողոցում թափառես։

Նա իմ փրկիչն է։

Ահա նա մոտենում է վաճառասեղանին դարսած ուտելիքներին, գնում է, պատվիրում գործակատարին կշռելու սրանից, նրանցից։

Գործակատարը ժպտուն դեմքով շտապում է կատարել նրա պատվերները։

Նա էլ սիրում է նրան, այդ բարի ծերունուն։

Ո՜, յես ինչպես կսիրեմ, կխնամեմ նրան, վերջին օրերը քաղցրությամբ կլցնեմ։

Ահա վճարում է։

Ահա դուրս է գալիս։

Մոտենում եմ դռանն ու սպասում։

Նա դուրս է գալիս։

Ինձ թվում է, վոր ահա նա բռնում է թևս։

Սակայն անցավ։

Չի կարող պատահել, գուցե չտեսավ ինձ։

Չե՞ վոր ծերուններրը լավ չեն տեսնում։

Առաջ եմ անցնում։

Կանգնում եմ դեմն ու նայում։

Բայց նա ինձ չի նայում, այլ մտահոգված է ձեռքին յեղած բազմաթիվ փաթեթները հարմարավոր բռնելով։

— Հայրիկ, —կանչում եմ, —յես այստեղ եմ։

Սակայն նա առաջ է անցնում։

Հանկարծ նրա փաթեթներից մեկը վայր է ընկնում։

Շտապում եմ վերցնել իրեն տալու։

Կռանում եմ, բայց դեռ ձեռքս փաթեթին չհասած, փայտի մի հարված է հասնում մեջքիս։

Նայում եմ վեր։

Նա յե ու հայհոյում է.—

— Կորի անպիտան։

— Բայց ես ուզում էյի միայն ոգնել ձեզ։

— Կորի, սրիկա թափառաշրջիկ։

Ու վոտքի մի հարված յեվս կպչում է մեջքիս։

Կռանում է ինքն ու վերցնում փաթեթը։

— Դուք բարի յեք, յես այդ գիտեմ, վաղուց գիտեմ, դուք չեք թողնի, վոր յես փողոցներում կորչեմ,— ասում եմ ու կողքով քայլում։

Նա կանգ է առնում և խիստ բարկացած, կանչում.—

— Կորի, թե չե միլիցիոներ կը կանչեմ։

Մեր չորս բոլորքն ամբոխ է խմբվում։

Տեսնում եմ, վոր հեռվից միլիցիոները նըկատում է տեղի ունեցող իրարանցումն ու մեր կողմն է շտապում։

Դրությունը կրիտիկական է դառնում։

Սողալով դուրս եմ գալիս հավաքվածների միջից ու փախչում...

Փախչում եմ իմ բարի ծերունուց։

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Անցնելով մի յերկու փողոց, մյուս փողոցի անկյունում կանգ եմ առնում։

Վտանգն անցած է։

Հանգիստ շարունակում եմ քայլել։

Դիմացից գալիս է մեկը։

Թվում է թե ծանոթ դեմք է։

Ինչ վոր մի տեղ տեսել եմ։

Բայց չեմ կարողանում հիշողությանս մեջ վերականգնել։

Ժամանակն այնպես է փոխել մարդկանց, վոր շփոթելը շատ է հեշտ։

Նայում եմ նրան, դեմքի գծագրությունը վերականգնելու։

Նա էլ ինձ է նայում։

Անցնում ենք միմիանց կողքով։

Մի քանի քայլ անց հետ եմ դառնում։

Նա էլ է հետ դառնում։

Ու մոտենում է ընդոստ.—

— Բարև։

Ձայնը... ձայնից ճանաչում եմ իսկույն։

— Բարև։

Յես, իհարկե, զգուշանում եմ գրկել նրան, բայց նա գրկում է ու համբուրվում ենք։

Դպրոցում տարիներ շարունական կողք կողքի նստել ենք մի նստարանի վրա, միշտ առաջին շարքում։

Նա յել ինձ նման կարճահասակ է։

Դպրոցական մտերիմ ընկերներ եյինք։

Բավական շատ պատանեկական հանցագործություններ եյինք կատարել միասին։

—Քանի՜ տարի յե չենք տեսնվել, գնանք մի տեղ նստենք։ Ասելու ինչքա՜ն բան կունենանք։

—Գնանք զբոսավայր։

—Վո՛չ, ինչո՞ւ, մտնենք կաֆե։

—Կաֆե՜...

Նայում եմ նրան։

Հագնված է կոկիկ, մաքուր։

Ինքս նրա համեմատությամբ ցնցոտի յեմ։

—Ո՛չ, սազ չի գա։

—Ի՞նչը։

—Կաֆեն ինձ սազ չի գա։

—Ինչո՞ւ։

—Հապա լավ նայիր ինձ։

Նայում է։

—Հը՛մ... այո՛... Բայց գրողը տանի, ո՞ւմ ինչ։ Գնանք։

Գնում ենք։

Դիտմամբ հեռավոր և կիսամութ անկյունում դրված սեղան եմ ընտրում։

—Ի՞նչ կխմես։

—Ի՞նչ... վոչինչ...

—Չե՛, ինչպես կարելի յե, մի բան խմիր։ Մատուցողը մոտենում է։

—Յերկու բաժակ թեյ։

Հազիվ եմ ինձ զսպում, չխնդրելու, որ ուտելու վորևէ բան պատվիրի և կարծես հեռվից լսում եմ նրա ձայնը.—

—Պատմի՛ր ինչպե՞ս ես, ի՞նչ ես անում։ Քանի՜ տարի յե բաժանվել ենք միմյանցից։ Ինչե՜ր յեկան ու դարձան։

—Յես պատմելու վոչինչ չունեմ, իսկ դու, ինչպես յերևում է, կյանքում բավական լավ հաջողություն ունես,— ասում եմ ու ագահաբար նայում դիմաց յերևացող վաճառասեղանին դարսած խածունքներին։

ԴԱՍԸՆԿԵՐՈՋՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ թեյը բերեցին, դասընկերս ուղղվեց տեղում և սկսեց իր պատմությունը։

—Այո, կյանքից յես դժգոհ չեմ։ Յերբ դըպրոցի դասընթացն ավարտեցինք և, հիշո՞ւմ ես, ավարտական խնջույքից հետո ցրվեցինք, յես վերադարձա իմ հայրենի քաղաքը։ Դա մի փոքրիկ, գավառական քաղաքին հատուկ ծուռ ու նեղլիկ և միշտապես կեղտոտ փողոցներով, առորյա հոգսերով ծանրաբեռնված քաղաք եր։ Ուներ իր, այսպես կոչված, արիստոկրատ դասը հանձինս մի քանի պաշտոնյաների, վարչական անձանց, քահանայի և քաղաքային դպրոցի ուսուցիչների։ Կային նաև մի քանի առևտրականներ, վորոնք, պիտի ասել, իրենց փոքրությամբ և թափազրկությամբ հանդերձ, ճարպկորեն կարողացել եյին ամբողջ շրջանի առևտուրն իրենց ձեռքում կենտրոնացնել։

Յես շուտով ընդունվեցի այդ շրջանի մեջ,

մասնակցելով նրանց թղթախաղերին, քեֆերին, պարապ զրույցներին։ Նրանցից ամեն մեկն աշխատում եր իր խորհուրդներով ոգտակար լինել ինձ։ Քահանան խորհուրդ եր տալիս քահանա ձեռնադրվել, տեսուչը՝ ուսուցչություն անել, իսկ գավառապետը՝ ծաղրելով բոլորին, խորհուրդ եր տալիս պաշտոնյա դառնալ, մտնել իր մոտ գրագիր, գրավիչ ապագայի հեռանկար գծագրելով, թե ինչպես յես աստիճանաբար բարձրանում եմ մինչև գավառապետություն, ապա նահանգապետ և այլն և այլն։

Բոլորին լսում եյի ու բոլորի հետ ել համաձայնվում։

Դպրոցից տարած վառվռուն ծրագրերս վաղուց ծալել մի կողմ եյի դրել։

Սակայն մի դեպք բոլորովին այլ ընթացք տվեց իմ ապագային։

Յես սիրահարվեցի հարուստ վաճառականներից մեկի աղջկան։

Անշուշտ հաշիվ ել կար մեջ տեղ, քանի վոր նա հարուստ ոժիտ ուներ, իսկ իմ հայրը, վորպես արհեստավոր, հազիվ կարողանում եր ծայրը ծայրին հասցնել։

Վորպեսզի իմ նպատակն իրագործեմ, արիստոկրատ դասի առաջարկները մերժեցի և

մտա այդ վաճառականի մոտ գործակատար, պահելով նրա հաշիվները։

Վարում եյի նրա հաշիվները և սպասում այն րոպեյին, յերբ պիտի նրա գործակիցը դառնայի։

Այդ ևս շուտով տեղի ունեցավ։

Ինձ համար սկսվեց մի այլ կյանք, բացվեց մի այլ աշխարհ, վորը վոչ մի կապ չուներ այն ամենի հետ, վոր յես ծրագրել եյի դպրոցական նստարանի վրա և պատկերել ինձ։

Յես հարստանում եյի որե-որ։

Պատերազմը մի անսպասելի գյուտ եր ինձ համար, իմ դրամագլուխը կրկնապատկելու, յեռապատկելու։

Սակայն վրա հասած հեղափոխությունը փոխեց պայմանները, իսկ Հոկտեմբերը մաքրեց ամեն ինչ։

Դուրս յեկա նոր բաղդ փնտռելու։

Յեվ ընկա հեղափոխության ալիքի մեջ։

Հիշո՞ւմ ես, յես բավական լավ խոսել գիտեյի։

Այս անգամ իմ խոսելու շնորքը մեծագույն ծառայություն մատուցեց ինձ։

Շատ հեշտությամբ ուշադրություն և համակրանք վաստակեցի։

Հարվածային, ուժեղացրած և այլ ամեն տեսակ փայեր ստանալը և հետզհետե բարձրանալն արդեն ապահովված եր ինձ համար։

Յեկավ նեպը։

Խոսքը տեղի տվեց գործին։

Գրասենյակում նստելը, հրամանագրելը, կարգադրելը և նման բաներն այլևս իրենց արժեքը կորցնում եյին։

Պետք եր մտածել ապագայի մասին։

Յեվ յես մտածեցի։

Ինքս իմ թեկնածությունն առաջ քաշելով, անցա մի տնտեսական հիմնարկության գլուխ։

Ու... գրպանիս մասին առանձնապես մտածելն ավելորդ չհամարեցի։ Իսկ հնարավորություններ, վորքան կամենաս։

Շրջապատում տնտեսական գործերից հասկացողներ չկային. բոլորը բանվորներ ու յերիտասարդներ եյին, վորոնց համար իրենց պայքարի նպատակը միայն կար։

Յերբ ավելի ամրապնդվեցի, այլևս չեյի քաշվում յերբեմն նրանց վրա նայել վորպես իմ բարորության համար աշխատողների։

Ինարկե, այդ բանն աչքի ընկավ։

Սակայն դա ինձ այլևս չեր հետաքրքրում։

Կուսակցությունից հեռացրին։

Առանձնապես չտխրեցի, բայց ձևի համար բողոքեցի։

Այնուհետև ինձ «վիրավորված» համարելով, քաշվեցի բոլոր գործերից։

Ու շատ չանցած կրկին իմ հին գործին անցա։

Նախկին դիրքս շատ նպաստեց առևտրական գործերիս ընդարձակման և հաջողության։

Այո, ամեն մարդ պիտի կարողանա ժամանակին ոգտագործել։

Բաղդ ասածդ սուտ բան ե, մարդ ինքն ե իր բաղդն ստեղծում և տնորինում այս կամ այն ձևով։

Ի՞նչ կաներ իմ բախտը, յեթե յես վեր ընկնեյի մեր տանը, կնոջս կողքին ու ամբողջ որը տանը պարկած ճանճեր քշեյի։

Գուցե մեկ որ ել դեռ գնդակահարեյին, վորպես նախկին չարաշահի և ձրիակերի։

Բայց յես իմ բաղդի սանձն առա իմ ձեռքը ու քշեցի այն ուղիներով, վորոնք ինձ նպաստավոր եյին յերևում։

Ճիշտ ե, կարող եր պատահել, վոր սխալվեյի, կարող եր պատահել, վոր հաջողությունը յերես թեքեր ինձանից, բայց դրա համար կա ճարպկությունը։

Հաջողությունը միշտ գերի չէ ճարպիկության ձեռքում և նրա թելադրանքներով է շարժվում։

ԿԱՄՔԻՍ ՈՒԺԸ ԹՈՒԼԱՆՈՒՄ Է

Մինչ ընկերս պատմում էր, ես հայացքս մտամոլոր պառեցնելով կաֆեյում, ցրիվ մտածում էի։

Թեյս սառել էր։

Ի՞նչ կանեի թեյը քաղցած ստամոքսիս։

Հաստատուն վորոշել էի դիմադրել իմ ներքին պահանջին և ցույց չտալ իմ դրության իսկական պատկերը։

Յեվ յերբ նա վերջացրեց ու հետ ընկավ աթոռի մեջքին, ինքնաբավական ժպտով նայեց ինձ, հայացքս կանգ առավ նրա կուշտ դեմքին։

Այո, ճարպիկություն... մտածեցի յես։ Յեվ դու բավական ճարպիկն ես յեղել, հակառակ այն հանգամանքին, վոր դպրոցում ամենաթույլ աշակերտն էյիր և մեր աշխարհագրության հանգուցյալ ուսուցիչն ամեն անգամ քեզ դաս հարցնելիս, յերբ դու քարտեզի մոտ կանգնած կըմկմում էյիր, յերբեմն Գրենլանդիան ընդունելով վորպես մի մեծ գետ, իսկ Սենան՝ քաղաք, մատով թխկթխկացնում էր քո մեծ գլխին ու ասում.—

— Ապուշ, քո վեգլոյի տակը ծակ է, լըցնում եմ, լցնում, բայց շարունակ թափվում է։

Յեվ կամ թե.

— Յեղբայր, գնա դալլաքություն սովորիր, իզուր ես ժամանակդ կորցնում։

Իսկ դու հիմարի պես ժպտալով, կըկնում էյիր.—

— Ճիշտ եք ասում, պարոն ուսուցիչ։

Իսկ հիմա, իր կյանքի անիվն առած իր ձեռքը, հմտորեն գլորում է առաջ, արտխատիկ կերպով խուսափելով բոլոր խութ ու կոշտերից և ահա նստած այստեղ ինքնագոհ դեմքով, վերից վար նայում է մարդկանց, կարծես ասելով.—

— Յերջանիկ համարեցեք ձեզ, վոր բարեհաճել եմ իմ ներկայությամբ պատվել ձեզ։

— Դե, հիմա դու պատմիր քո կյանքից,— նրա ձայնն ականջիս հասավ կարծես շատ հեռվից։

Սթափվեցի։

— Պատմելու վոչինչ չունեմ։

— Չէ, այնուամենայնիվ, էլի վորևէ բան կլինի։

— Հավատացնում եմ, վոչ, շատ սովորական կյանք, նման հարյուր հազարավորների,

որոնք կյանքում աշխատում են որևէ անկյուն ձեռք բերել։

— Սակայն խոսքերդ մռայլ են։

— Ուրախ լինելու առանձին բան չկա։

— Իսկ յես շարունակ ուրախ եմ։ Տխրելու շռայլություն թույլ չեմ տալիս ինձ։ Ժամանակ ել չունեմ։

— Անշուշտ դա ել ճարպիկություն ե։

— Իհարկե։ Սակայն դու կարծես ինձ կշտամբում ես։

Յերբեք չեյի կարող յերևակայել, որ այդպիսի նրբություն ըմբռնելու ընդունակություն կունենաս։

— Վո՛չ, ինչո՞ւ։ Միայն ընդգծում եմ փաստը։

— Դե լավ, չկռվենք։ Այսքան տարիների բաժանումից հետո առաջին հանդիպմանն իսկ հո չե՞նք կռվելու։ Դասարանում յեղածը դասարանում ել մնացել ե։

— Կյանքն ել մի մեծ դասարան ե։

— Այո՛, այդպես ե, և յես տեսնում եմ, որ այդ մեծ դասարանը փոքր դասարանին հակառակ, այնքան ել լավ ընդունելություն ցույց չի տվել քեզ։

Յես, ի հարկե, կարող եյի վիրավորել նը-

րան, բայց արդյո՞ք իրավունք ունեյի վիրավորելու մի այդպիսի հարուստ մարդու, որի հետ մի սեղանի շուրջ նստելն անգամ մեծ պատիվ եր ինձ համար։

Ուստի լռեցի։

— Գիտես ինչ, զուր ես թագցնում, տեսնում եմ, որ տնտեսական դրությունդ այնքան ել մխիթարական չե։ Յես կարող եմ ոգնել քեզ։

Նրա ձայնի մեջ մեծահոգության շեշտ կար։

Բոլոր դժբաղտներն այդ շեշտն անմիջապես որսում են, որքան ել թույլ հնչի նա։

Մերժե՛լ արդյոք։

Բայց դա մի ակնթարթ եր միայն։

Ստամոքսս իր ողջ եյությամբ հակառակ յելավ դրան ու ծառացած առաջս, ստիպեց իր հետ կրկնել.—

— Յեթե այդ ծանր չի լինի քեզ համար... վերջերս գործերս լավ չեն գնում։

— Վո՛չ, վո՛չ, ի՞նչ ես ասում։

Ու ձեռքը գրպանը տարավ։

Քաղցած մարդու հոգեբանությամբ անմիջապես մտածեցի, թե ինչ գումար ե տալու և կրկնեցի անհամացած քաղաքավարական խոստումը.—

—Ես, ի հարկե, կվերադարձնեմ առաջին հնարավորության դեպքում։

—Այո, յերբ հնարավոր կլինի։

—Շնորհակալ եմ։

—Ոչինչ, ոչինչ։ Ես վաղը գնում եմ, այստեղ գործերս արդեն վերջացրել եմ։ Հավանորեն շուտով կրկին վերադառնամ։ Նորից կհանդիպենք։

Վճարեց թեյի փողն ու դուրս յելանք։

—Ցտեսություն, սիրելիս,—նա ձեռքը պարզեց։

—Ցտեսություն,—ասացի, ձեռքը բռնելով։

Յերբ նա առաջ անցավ և նրա մեջքը կորավ զբոսնող բազմության մեջ, յես ձեռքս գրպանս տանելով, ստացածս դրամը սեղմեցի բռանս մեջ ու շտապ իջա ցած, դեպի աժանագին ճաշարաններից մեկը։

ԳԻՇԵՐԱՎԱՅՐՈՒՄ

Մի քանի օր է ահա, որ յերեկոյան մութն ընկնելուն պես մտնում եմ նույն գինետունը և աժանագին ընթրիքն ու մի շիշ գարեջուր առաջս, նստում եմ յերկար, մինչև գինետունը փակելը։

Շտապելու ոչինչ չունեմ և հյուրընկալ սենյակս չի սպասում ինձ իր հարկի տակ։

Իսկ գինետունը փակելուց հետո գնում եմ մի խան և չնչին վճարով, ընդհանուր սենյակի որևէ անկյունում պառկում եմ գետնին, մինչև լույս։

Խանը բազմաթիվ հաճախորդներ ունի։

Ինձ նման անտունների թիվը շատ է։

Մի անկյունում պատից կախած է մի փոքրիկ, ապակու վերին մասը կոտրած նավթի լամպ, որն հազիվ է լուսավորում ընդարձակ սենյակի անկյունները, ուր մարդիկ պառկած հատակին, ծածկված ով ինչով կարողացել է, կամ քնած են, կամ կիսաձայն խոսակցում են, յերբեմն-յերբեմն էլ այս կամ այն մասում խմբված թուղթ են խաղում աղմուկ-աղաղակով։

Պատահում է, որ թղթախաղը կռվի յե փոխվում։

Այդպիսի դեպքում ներս է մտնում խանի տերը և կռվողներին հանդարտեցնում, սպառնալով անմիջապես դուրս շպրտել նրանց և այլևս գիշերելու տեղ չտալ։

Տիրոջ բարձր հասակն ու ջլուտ բազուկները բավական ազդեցիկ էյին, ուստի կռվողներն անմիջապես լռում էյին և հաշտվելով, շարունակում խաղը։

Ներս մտնելով, յես աշխատում եմ անկյու-

տելի անցնել վորև է ազատ անկյուն և անմիջապես պառկում, քնած ձևանալով։

Իմ կարճ հասակը, նիհար մարմինը վրան հագցրած լայն ու յերկար բաճկոնով, բավական սրախոսությունների նյութ է հանդիսանում, մի բան, վոր գիշերողները յերբեք չեյին հրաժարվում հրապարակ բերել։

Առաջին որը փորձեցի պատասխանել, սակայն իմ պատասխանն ավելի մեծ սրախոսություններ և հոմերական քրքիջ առաջացրեց, ուստի այնուհետև բարվոք համարեցի այլևս ուշադրություն չառնել նրանց առածները։

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մի գիշեր սովորականից վաղ վերադարձա գիշերավայրս։

Որվա ապարդյուն թափառումներից հոգնած եյի, սիրտս լցված եր ու ապագայի անորոշությունն եր իր իրավունքները ներկայացնում։

Դարսնկերոջս տված փողն արդեն վերջանալու վրա յեր, իսկ գործ դեռ չեյի գտել։

Ընկճված տրամադրությանս վրա գրգռիչ եր ազդում գինետան հաճախորդների աղմուկն ու ինքնաբավական դեմքերը։

Պառկած իմ անկյունում, անհանգիստ մտածում եյի։

Անելանելիությունը փախցրել եր քունս։

Յեվ շուռ ու մուռ եյի գալիս այս ու այն կողքիս։

Սենյակի մեջ տեղ խմբված, թուղթ եյին խաղում, իսկ քնածներից շատերը խռմփացնում եյին։

Մեկի խռմփոցը մանավանդ... կարծես Յերիքովյան խողովակ լիներ, վոր ուղղակի կտրատում եր նյարդերս։

Միջատներն էլ մի կողմից եյին անհանգիստ անում։

—Ընկեր, քնած չեք, —հանկարծ լսեցի կողքիս։

Համենայն դեպս հարցն ինձ չի վերաբերում, մտածեցի ու լուռ մնացի։

Բայց կրկին լսեցի կողքիս պառկածի ձայնը.

—Ընկեր, հարցնում եմ քնած չե՞ք։

—Վո՛չ, —պատասխանեցի կոպտորեն, —իսկ ձեզ շատ է հետաքրքրում այդ։

Ու շուռ յեկա մյուս կողքիս։

—Ներեցեք, վոր անհանգիստ արեցի ձեզ, սակայն յես չար նպատակով չհարցրի։

Ձայնը մեղմ եր ու անկեղծ։

Նայեցի տեղումս։

Նա էլ նայեց։

Բոլորովին յերիտասարդ եր, համարյա պատանի, մաքուր հագնված։

Բաց եր արել վերմակը, փռել հատակին ու վրան պառկել, գլխատակը դնելով մի փոքրիկ ճամպրուկ։

Նման չեր գիշերավայրի սովորական հաճախորդներին։

— Կրկին անգամ ներեցեք պատճառածս անհանգստության համար։

— Վոչինչ։

— Գիտեք, յես առաջին անգամն եմ այս քաղաքում։ Յեկել եմ հորյեղբորս մոտ, վորն այստեղ բարձր պաշտոն ունի։ Բայց հասցեն չըգիտեմ։ Հյուրանոցներում տեղ չկար, իսկ մութըն ել արդեն ընկել եր։ Իրերս վերցնող մշակը խորհուրդ տվեց այս գիշեր մի կերպ այստեղ անցկացնեմ, մինչև առավոտյան հորյեղբորս կգտնեմ։

— Նամակագրություն չունեյի՞ք։

— Վոչ, վաղուց ե, վոր միմիանց կորցրել ենք։ Ծնողներիս մահից հետո, վոր տեղի ունեցավ վերջերս, կարճ ժամանակում, յես այլևս վոչ մի բանով կապված չեյի իմ ապրած քաղաքի հետ, ուստի վաճառեցի ամեն ինչ, վոր այնքան ել մեծ չեր, ու յեկա այստեղ, լսելով վոր հորյեղբայրս այստեղ ե։

Նա հայտնեց հորյեղբոր անուն-ազգանունը։

Այդպիսի մարդու մասին յես չեյի լսել։

Բայց յես վոչ վոքի չեյի ել ճանաչում, ուստի տարորինակ ել չեր, վոր այդ բարձր պաշտոն ունեցող հորյեղբայրն ինձ հայտնի չեր։

— Ինչպես ասացի, յես առաջին անգամն եմ այս քաղաքում, բարի չեյիք լինի արդյոք վաղն իմ ուղեկիցը դառնալ։ Բայց գուցե դուք գործ ունեք, յես կխանգարեմ ձեզ։

Նրա խնդիրն այնքան անկեղծ եր, վոր մերժել չեր կարելի։

Անելիք ել հո չունեյի։

Խոստացա։

— Լավ, քնեցեք, իսկ վաղը գործի կդիմենք։

Բարակ ու յերկարավուն ձեռքը պարզեց ինձ ու սեղմեց ձեռքս։

— Շնորհակալություն։ Ինչ լավ ե, յերբ անծանոթ վայրում բարի մարդու յես հանդիպում։

ՍԿՍՈՒՄ ԵՄ ՀԱՎԱՏԱԼ, ՎՈՐ ՀՐԱՇՔՆԵՐ ԼԻ՛ՆՈՒՄ Ե՛Ն

Հետևյալ որը վաղ արթնանալով, յերիտասարդի հետ դուրս յեկանք նրա հորյեղբորը փնտրելու։

Դեռ վաղ էր։

Թեյատանը, նստած սեղանի շուրջ, նա պատմեց ինձ իր վողջ կյանքը, վորը շատ պարզ էր ու սովորական։

Յեվ մեծ յեղավ իմ զարմանքը, վոր ինքս էլ անգիտակցաբար պատմեցի իմ կյանքն այն որից, յերբ հիշում եյի ինքս ինձ, մինչև վերջին, միասին անցրած գիշերը։

Անկեղծ էր այն վշտակցությունը, վոր իմ պատմության ընթացքում հետզհետե պատկերվում էր նրա դեմքին։

Ու բուռն էր նրա այն ցանկությունը, վորով նա կամեցավ աջակից լինել ինձ։

—Այո, հորեղբայրս անպայման կկատարի իմ ցանկությունը։ Այսոր անշուշտ կգտնենք նրան, քաղաքն այնքան էլ մեծ չէ։

Սրտիս վրա ծանրացած սառույցն սկսում է հալչել։

Հավատը կրկին վերակենդանանում է։

Թեև ցնցոտիներ հագած, բայց գրավիչ կանգնել է նա առաջս, ուրիշներից աննկատելի ու այնպես սքանչելի ժպտում է։

Մոռանում եմ ամեն ինչ ու գնում նրա կանչին։

Ամուր, ամուր սեղմում եմ յերիտասարդի

ձեռքը և ինքս էլ ժպտուն հայացքով չորս բոլորքս նայում։

Ա՜խ, ինչ լավ է կյանքը, ինչ լայն ու արձակ, ինչ արևոտ ու լուսաշող է աշխարհը։

Վորքա՜ն բարի յեն մարդիկ։

Ինչ լավ է ապրել և անխաբ հավատի արևի շողերով ջերմանալ։

ՀՈՐՅԵՂԲԱՅՐԸ

Հորյեղբայրը գտնվում է հեշտությամբ։

Նա հայտնի անձնավորություն է։

Յերբ ներս ենք մտնում, քեռին գրկում ու համբուրում է յեղբոր տղային։

—Շատ ուրախ եմ, շատ ուրախ...ինչ մեծացել ես, գեղեցիկ տղամարդ ես դարձել։

Յերբ անցնում են առաջին րոպեները և քեռին կրկին նստում է իր բազկաթոռին, յերիտասարդը ցույց տալով ինձ, վոր շարունակում եմ կանգնած մնալ դռան մոտ, ասում է.—

—Քեռի, խնդրեմ ծանոթանաս, յեթե ընկերը չլիներ, յես քեզ չպիտի կարողանայի գտնել։ Մեծ բարություն արեց ինձ։

Քեռին նայում է ինձ ու գլխով բարևում։

—Շատ ուրախ եմ։

—Քեռի, ընկերը մեծ նեղության մեջ է, պետք է մի գործ տալ նրան, անպայման։

—Լավ, լավ,— ասում է քեռին,— այդ մասին հետո, իսկ այժմ ասա, թե վո՞րտեղ ես կանգ առել։

—Չե՛, քեռի, հենց այսօր իսկ մի գործ տուր ընկերոջը։ Նրա դրությունը շատ ծանր է։

—Ասացի լավ, կմտածեմ, առայժմ վոչ մի ազատ տեղ չկա։ Առաջ պետք է քեզ տեղավորել։

Զանգահարում է։

—Խնդրեմ կարգադրեք յեղբորս վորդու իրերն անմիջապես մեր տուն տանեն։ Հետո բերեք ծառայողների հաստիքը։

Ապա դառնում է յեղբոր վորդուն։

—Դու գուցե կամենում ես հանգստանալ, հոգնած կլինես։

—Վոչինչ, հոգնած չեմ, թեև ամբողջ գիշեր չեմ քնել։

—Այդ դեպքում հենց հիմիկ իսկ գործի կանցնենք։ Առաջին ազատ տեղը կհատկացնեմ քեզ, հետո փոփոխություն կմտցնենք։

—Ինձ համար ել միևնույն է, թե ինչ տեղ լինի,— ասում եմ յես։

Քեռին արհամարական հայացք է գցում վրաս։

—Քեզ համա՞ր... կտեսնենք հետո։

Քարտուղարը ներս է մտնում։

—Իրերի մասին կարգադրություն արված է։ Ահա հաստիքը։

Քեռին առնում է ու աչքի անցնում։ Քարտուղարը կես խոնարհվում է սեղանին։

—Վոչ մի ազատ տեղ չկա՞։

—Վո՛չ։

—Ինչպես անել հապա։ Մեկ տեղ անհրաժեշտ է։

Մե՛կ տեղ... Յես ցնցվում եմ։

Քարտուղարը բարձրացնում է գլուխը.—

—Յեթե կկարգադրեք, վորևե մեկին կարձակենք։

—Հա՜... այդ դեպքում վորևե մեկին այսօրվանից արձակեցեք և փոխարենը նշանակեցեք այս յերիտասարդին—նա ցույց է տալիս յեղբոր տղային։

Քարտուղարը գլխով հավանության նշան է անում։

—Սակայն պետք է յերկու շաբաթ առաջ հայտնել արձակվածին։

—Վոչինչ, մի կերպ կարգավորեցեք։ Վճարեցեք լուծարքային և այլն։

—Լավ։

Քարտուղարը վերցնում է թերթը և ուզում է դուրս գնալ։

— Իսկ յես...— դառնում եմ քեռուն։

Քարտուղարը նայում է ինձ և քմծիծաղ տալիս։

— Քեռի, հապա ընկե՛րը։ Ավելի լավ է այդ տեղը նրան տվեք։

— Ի՞նչ ես հիմար հիմար խոսում,— քեռին բարկանում է և ջղայնության նշաններ ցույց տալիս։

— Քաղաքացի, շնորհակալություն յեղբորս վորդուն ձեր ցույց տված աջակցության համար։ Անշուշտ դուք նրանից վարձատրված կլինեք ձեր մատուցած ծառայության փոխարեն։

Բոլոր յերազանքներս մի ակնթարթում հանգչում են ու հավատի ձգող ժպիտն անհայտանում է։

Մեքենայորեն մոտենում եմ դռանը։

Յերիտասարդը մոտենում է ինձ, առնում ձեռքս ու շնորհակալություն հայտնում։

— Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ։ Մի վհատեք, յես մի բան կանեմ։ Հենց վոր գործի անցա, իմ առաջին հոգսը կլինի ձեզ համար մի վորևե պաշտոն գտնել, իսկ առայժմ, ահա...

Նա ձեռքս է դնում մի դրամ...

Յես դուրս եմ գնում։

ՎՈ՛Չ, ԱՇԽԱՐՀՈՒՄ ՀՐԱՇՔ ՉԻ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Մի քանի որ հետո գնում եմ յերիտասարդի մոտ։

Գիտեմ, վոր իզուր է, սակայն դա յել մի հույս է։

Նստած է իր սեղանի մոտ, կողքերից հենարաններ ունեցող բարձրաթիկունք աթոռին, իր կարևորությունը շրջապատին հասկացնել տվող դեմքի արտահայտությամբ։

Բարևում եմ։

Հազիվ գլուխը բարձրացնում ու ինձ է նայում, ապա շարունակում է աշխատել, նետելով.

— Իսկույն։

Բավական յերկար սպասում եմ կանգնած։

Վերջապես գրչակոթը վայր է դնում և ասում.—

— Նստեցեք։

Նստում եմ ու հարցնում.

— Ինչպե՞ս եք։

— Վոչինչ, լավ եմ.— ձգվում է աթոռին։

— Մի բան դուրս յեկա՞վ։

— Ի՞նչը։

— Ինձ համար գործ։

— Ա՜խ, այդ...դժբաղդաբար դեռ վոչինչ չկա

Իմ բոլոր ջանքերն ի զուր անցան։

Ի հարկե, սուտ է ասում, չեմ կասկածում դրանում, սակայն ուղիղ նայում է դեմքիս, առանց կարմրելու և խղճի խայթի։

— Ի՞նչ անեմ հապա։

— Սպասեցեք, ամեն կերպ կաշխատեմ։

Մոտենում է մի գեղեցիկ աղջիկ։

Բարևում է նազանքով.—

— Բարև, Սերժ։

Նա արագորեն վոտքի յե յելնում և սեղմում պարզած ձեռքը, դառնալով ինձ.—

— Ներեցեք, հանգիստ յեղեք, յես կաշխատեմ։

Վոտքի յեմ յելնում և դանդաղ քայլերով հեռանում։

Աշխատելու մասին խոսք լինել չի կարող այլևս։

Չե, աշխարհում ընդհանրապես հրաշքներ չեն կատարվում։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒՄ

Այլևս գիշերավայր չեմ գնում։

Փող չունեմ։

Իսկ գինետան սեղանի մասին վաղուց եմ մոռացել։

Ուշ է։

Այգում վոչ վոք չկա։

Պարկում եմ կողքի ծառուղիներից մեկի նստարանին։

Աշնան ցրտերն արդեն սկսվել են։

Կծկվում եմ ու ինձ թվում է, թե տաքանում եմ։

Չեմ մտածում։

Մտածելու էլ ի՞նչ կա։

Մտածեցի ու փորձեցի մտածումներս իրականացնել, բայց ապարդյուն անցան։

Ել ինչ մտածեմ։

Յեթե վաղը մի կտոր հաց գտա, կուտեմ, թե վոչ...

Կլինի այն, ինչ վոր լինելու յե։

Մեկ որ շուտ մեկ որ ուշ։

Հուսահատությունը կարող է ամոքվել հույսի մի թույլ շողով անգամ, իսկ անկարելիությունը։

Վոչ մի շող չի կարող ոգնել։

Այնպես, յեթե յես հիմա այս ծառի ճյուղերից մեկը պոկեմ և վոտքերիս տակ նետեմ։

Վոչ մի կերպ այլևս նա չի կպչի բնին մնացած իր մասին։

Ու կչորանա։

Ոչ մի գիտություն և մարդկային ոչ մի մտածում նրան վերածնել չի կարող։

Եվ ժամանակի ընթացքում կմոխրանա։

ԲԱՐԵՐԱՐԸ

Պառկած եմ նստարանին, մեջքիս վրա ու յերկինք եմ նայում։

Լուսայգը նոր միայն կապտավուն լույս է սփռում։

Առավոտյան զովից մարմինս ցնցվում է։

Հանկարծ մեկը կանգնում է կողքիս։

Նայում եմ։

Մի ծերուկ է, սպիտակահեր, դողդոջուն, հենված ձեռնափայտին, որ ուշադրությամբ ինձ է նայում, իր թուլացած տեսողությունը լարելով։

Նստում եմ տեղումս ու նրան նայում։

— Ինչո՞ւ յեք այստեղ պառկել։

Նրա հարցն ինձ չափազանց տարօրինակ է թվում։

Շատ վաղուց է, որ ինձ ոչ ոք այդպիսի հարց չի տվել։

— Հապա ո՞ւր պարկեմ, գետնի՞ն։

— Ձեր տանը։

— Ահա իմ տունը,— յես տարածում եմ ձեռքերս, այգին ցույց տալով։

— Ինչպե՞ս։

— Հենց այնպես։

Ծերունու դեմքը կնճռոտվում է։

— Թույլ տվեք նստել։

— Խնդրեմ, այս նստարանը նույնքան ձերն է, որքան և իմը։

Ծերուկը նստում է, հենվելով ձեռնափայտին ու գլուխը կախ է գցում։

— Բայց չէ՞ որ ցուրտ է։

— Այո՛, յես այդ զգում եմ, սակայն ի՞նչ կարող եմ անել։

— Իսկ ի՞նչ գործի յեք։

— Ի՞նչ գործի... Եթե հանդիպում է փողոցում ընկած որևէ ուտելիք, հավաքում եմ, յերբեմն ել ձեռք եմ մեկնում բարի մարդկանց։

— Ինչո՞ւ աշխատանքի չեք մտնում։

— Եթե լինի, ուրախությամբ, բայց իմ տեղեկությունների համաձայն, այդպիսին ինձ համար մինչև օրս դեռ չկա։

— Փորձե՞լ եք։

— Մաշված վոտնամաններս այդ մասին շատ բան գիտեն։

— Պատմեցեք ինձ ձեր մասին։

— Միևնույն չէ՞։

— Այո՛, ի հարկե, բայց գուցե յես կարողանամ օգնել ձեզ

—Մեկը, վոր կամենում է աշխատել և ապրել, վորովհետև գոյություն ունի։

Ծերուկը գլուխը բարձրացնում է, յերկար նայում ինձ, ապա շշնջում, հազիվ լսելի։

—Գնանք։

—Ո՞ւր։

—Ինձ հետ։ Միևնույն չէ՞ թե ուր.

—Գնանք։

—Իմ վորդին կարող է ձեզ համար գործ գտնել։

Յերբ տուն հասանք, վորդին նոր էր արթնացել։ Ծերուկը պատմեց իմ մասին ու խնդրեց գործ գտնել ինձ համար։

Վորդին մի քանի րոպե մտածելուց հետո, ուրախ ձայնով դարձավ հորը։

—Ցանկությունդ կկատարվի, հայրիկ։ Ինձ մոտ տեղ չկա, բայց տոմս կգրեմ, կոոպերատիվում կընդունեն։

—Կոոպերատիվո՞ւմ...—իմ ձայնի մեջ ուրախ շեշտ կար։

Վորդին դառնում է ինձ.—

—Այո, կոոպերատիվում։ Ի՞նչ կա վոր։

—Վոչինչ։ Կոոպերատիվը թեև արդյունաբերական որգան չէ, սակայն նա վորպես բաշխման ապարատի, մարդկային կյանքի բարելավման պայմաններից մեկն է։

—Դուք կրթություն ունե՞ք...

—Մի ժամանակ այո, իսկ այժմ...չգիտեմ...

ՊԱՇՏՈՆԻ ՅԵՄ

Մի քանի որ է, արդեն պաշտոնի յեմ։

Ծերուկի վորդու տոմսը բաց արեց իմ առաջ փակ դռները։

Նստած խանութում վաճառասեղանի առաջ, չեք եմ գրում ապրանք առնողների համար։

Շարունակ զբաղված եմ, բայց հոգնություն չեմ զգում։

Ի՜նչ ուրախ է աշնան որը, արևն էլ կարծես ավելի յե ջերմացնում։

Յեվ ամբողջ որը մոռանում եմ այգու նըստարանը, ուրախ ժպտալով հաճախորդներին։

Ինչ քիչ բա՜ն է հարկավոր մարդու յերջանկության համար։

ՅԵՍ ՔԱՂԱՔԱՎԱՐԻ ՅԵՄ

—Ընկեր, ի՞նչ եք ցանկանում։

—Մի կտոր սապոն և յերկու փունդ բրինձ։

—Դուք կոոպերատիվի անդա՞մ եք։

—Այո։

—Ձեր գրքույկը։

Նայում եմ, ստուգում, վերադարձնում։

—Խնդրեմ։ Ուրիշ վոչի՞նչ։

—Վոչինչ։

—Համեցեք։

ՅԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

—Ընկեր, տասը ֆունտ շաքար գրեցեք ինձ։

—Տա՞սը ֆունտ։

—Այո։

—Միայն յերեք ֆունտ։

—Յես ձեզ ասում եմ տասը ֆունտ։

—Յերեքից ավել չեմ կարող, ընկեր, այդպես է կարգադրված։

—Ինձ համար կարելի յե։

—Վոչ մեկի համար չի կարելի։

—Դուք ինձ չե՞ք ճանաչում։ Յերևի նոր եք։

—Ձեզ ճանաչում, Բայց այդ միևնույն է։

—Ախ, այդպե՞ս...

—Յես կատարում եմ վորոշումը։

—Գեղեցի՜կ...

ՅԵՍ ԱՆՊԵՏՔ ԵՄ

Հետևյալ առավոտ խանութը բացվելուն պես կառավարիչը կանչում է ինձ և ասում...

—Ընկեր, դուք այսօրվանից ազատ եք։

Առաջին պահ վոչինչ չեմ հասկանում, սակայն շուտով ըմբռնում եմ այդ բառերի այլող նշանակությունը։

—Ինչպե՞ս։

—Ազատ եք պաշտոնից։ Կարող եք հաշիվը ստանալ հիմա կամ յերբ կամենաք։ Լուծարքայինի պահանջ դնել չեք կարող, վորովհետև մենք ձեզ փորձում եյինք և որենքով սահմանված ժամանակը վաղն է լրանալու միայն։ Դեհ, գնաք բարի, դուք խանգարում եք։

Քանի՞ շիշ գինի յեր պետք այդպես ուժգին արբելու համար, դժվար է վորոշել։

Որորվելով դուրս յելա խանութից։

ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ

Չի կարող պատահել, վոր այդպես մնա,— ահա այդ եր իմ ամբողջ մտածմունքը, յերբ դուրս յելա խանութից և քայլերս ուղղեցի գրասենյակ։

Գրասենյակում վոչինչ հայտնի չեր և ընդհանրապես այդ մասին վոչ վոք վոչինչ չգիտեր։

Այդ եր այն պատասխանը, վոր յեղավ իմ բոլոր դիմումներին։

Վո՛չ, այդպես չի կարող մնալ, որինականությունն ամենից վեր է և անհատը չի կարող խախտել այն։

— Ես կբողոքեմ, կապացուցեմ, հետ կգնամ իմ տեղը,— մտածում էի հաստատ հավատով։

Բայց հանկարծ հիշեցի կառավարչի ասածը.—

— Մենք ձեզ փորձում էինք...

ՍՏԱՄՈՔՍԻ ՊԱՇՏՄՈՒՆՔԸ

Թափառում եմ խանութի մոտ հետ ու առաջ։

Թվում էր, որ հիմա դուրս կգա կառավարիչը և հետ կկանչի։

Չէի ուզում հավատալ, որ իմ հանգիստ օրերն այդպես շուտ վերջ ունեցան։

Երազ էր թվում։

Ցանկալի երազ, որից արթնանալ չէի կամենում։

Ու երբ խանութը փակելու ժամանակ ծառայողները դուրս եկան ու քմծիծաղով նայելով ինձ, անցան, նոր միայն ըմբռնեցի իմ կորուստը։

Նայում էի շատ անցնող մարդկանց, որոնք աշխատավայրերից տուն էին գնում։

Նայում էի նրանց ու կարծես բոլորի դեմքերին մի ինչ որ չարություն էր դրոշմված դեպի ուրիշները։

Նախանձ դեպի հարևանը, դեպի պաշտոնակիցը։

Նախանձ դեպի ծանոթը, դեպի անծանոթը։

Ու վախ...

Վախ՝ որ իր մի կտոր հացը կխլեն։

Որ իր անկյունն իրենից կառնեն։

Առօրյայի հոգսն է գերիշխում։

Ստամոքսի պաշտամունքը։

Ցավ իմ նոր հայտնաբերության ծանրությունից ճնշված ու մտացիր, քայլերս մերթ առաջանում, մերթ կանգ էին առնում։

Մարդիկ անցնում էին, հրում ինձ։ Ես իմ ներկայությամբ խանգարում էի նրանց ընթացքը, որ կանգնած ճանապարհի վրա, ստիպում էի նրանց մի հազարերորդ ակնթարթ շեղել իրենց ճանապարհը և իմ կողքով պտույտ տալ։

— Ի՞նչ եք ցցվել առաջս փայտի պես։ Սա կանգնելու տեղ չի, ճանապարհ տվեք։

— Բայց ես ձեզ չեմ խանգարում, անցեք խնդրեմ։

— Կանգնել է հոսանքի մեջ տեղ ու դեռ ասում է, որ չի խանգարում։ Ի՞նչ անքաղաքավարի վերաբերմունք է սա։

— Ի՞նչ քաղաքավարության մասին եք խո-

սում,— հարևանը ժպտում է։ — Ումի՞ց եք քաղաքավարություն պահանջում, փողոցային շըրջմոլիկի՞ց։

Եվ համբերելու ուժ չի մնում։

— Անցեք ձեր ճանապարհով,— ջղայնությունից մարմինս ցնցվում է։

— Գռեհի՛կ...

Դառնում եմ դեպի նա ընդոստ,—

— Բարեհաճեցեք հետ վերցնել ձեր շպըրտած բառը։

— Համարձակությանը նայեցեք,— հարևանը ծիծաղում է քահ-քահ։

— Հետ վերցրեք, յեթե վոչ...

Բռունցքս ինքնին բարձրանում է վեր...

Սակայն նա ուժեղ ձեռքով բռնում է ինձ ու հրում։

Հավասարակշռությունս կորցնում եմ և ընկնում մայթի ու փողոցի մեջ յեղած առվակի մեջ։

Ծունկս առնում է քարին ու սոսկալիորեն ցավում։

Շորերս ցեխոտում են, իսկ թևս պատռվում է։

Մի ակնթարթ պարկում եմ այդպես, ապա ճիգ գործելով, բարձրանում և շարունակում քայլել։

ԳԵՂԵՑԿՈՒՀԻ՛Ն ԽՂՃՈՒՄ Ե Ի՛ՆՁ

Իջնում եյի մոլոր, անարդարության ցավը սրտումս։

Իջնում եյի ու անիծում փողոցը, վորը յերբեք չի ցանկանում բաժանվել ինձանից, հակառակ իմ բոլոր ջանքերին։

Հանկարծ մեկը թևս քաշում է։

Դառնում եմ,— մի կին է։

— Յես ձեզ հասկանում եմ, ընկեր։

Անհավատալի յերևույթ եր դա։

Նա՝ այդ գեղեցկուհին բարեհաճում է ինձ հետ խոսել, հասկանալ ինձ

Յես խոնարհում եմ աչքերս։

— Ո՞ւր եք գնում այդպես։

— Չգիտեմ։

— Բայց պետք է ձեր շորերը փոխել, ցեխոտ է։

— Ուրիշը չունեմ։

— Խե՜ղճ... գնանք ինձ մոտ, յես կոգնեմ շորերդ մաքրելու։

— Շնորհակալ եմ։

— Գնանք։

Գնում ենք։

Գեղեցկուհու սենյակը թեև փոքր է և գար-

դադուրկ, բայց ինձ համար դա մի դղյակ, մի ապարանք է յերևում, ուր կարող եմ գոնե մեկ անգամ հանգիստ քնել, գլխատակիս բարձ դըրած և վերմակի մեջ փաթաթված։

ՅԵՍ ԵՎ Ա՛ՆԿՅՈՒ՛Ն ՈՒ՛ՆԵՄ

Յերբ արթնացա, արդեն շատ ուշ եր։

Շորերս մաքուր եյին, չոր և պատռվածքները կարկատած։

Սեղանին դրված եր հաց, պանիր և յեռացող ինքնայեռը։

Կատարյալ բարեկեցիկ ընտանիք

Ոլյան՝ այդպես եր գեղեցկուհու անունը՝ տնային շորերով նստած եր սեղանի մոտ։

Նա ինձ այնքան էլ գեղեցիկ չերևաց։

Սակայն դա կարևոր չեր։

Նա ինձ համար գեղեցկուհի յեր։

Նա ինձ համար հեքիաթային ազատարար վոգի յեր, վոր մարդկային կերպարանքով յերկիր եր իջել։

— Արթնացա՞ր, յեկ թեյ խմենք,— ձայնը քնքուշ եր ու գորովալից։

Մոտեցա, վերցրի ձեռքն ու համբուրեցի։

Թևը պատեց մեջքովս ու գլուխս կրծքին սեղմեց։

— Դու ինձ դուր ես գալիս...

Մեր շրթունքները միացան։

— Մնա ինձ մոտ, իմ աշխատանքը բավարար է առայժմ յերկուսիս համար, մինչև դու էլ գործ կգտնես։

Յես սեղմեցի նրան կրծքիս։

— Յես քո պաշտպանը կլինեմ... Մենք միասին կաշխատենք...

— Այո՛, դու կմնա՛ս, դու կպաշտպանես... Կյանքում շատերն են ինձ վիրավորում։

— Այո, այո, իմ գեղեցկուհիս...

ԲԱՅՑ...ԲԱՅՑ...ՅԵՎ ԲԱՅՑ...

Յերբ թեյը խմեցինք վերջացրինք, Ոլյան սկսեց հագնվել։

— Քո ներկայությամբ կարող եմ հագնվել, այնպես չե՞։

— Ուզում ես, յես դուրս յելնեմ։

— Վո՛չ, վոչ, ինչո՞ւ, մնա՛, դու ինձ կոգնես մեջքիս կոճակներն ամրացնելու։

Պատրաստ եր։

Ներկված ու շպարված, ինչպես մի շքեղ տիկին։

Ուզեցի ուղեկցել իրեն։

Թևով մեջքս գրկեց ու ասաց.—

— Սիրելիս, դու մնա տանը, յես մենակ պիտի գնամ, ինձ համար այդպես ավելի լավ է...

— Չէ՞ որ ավելի հարմար է, յերբ կինն ուղեկից ունի։

— Այո, բայց իմ գործում այդպես լավ չէ...

— Քո գործո՞ւմ...

— Դա յե իմ ապրուստի աղբյուրը։

— Հասկանո՞ւմ եմ...

— Մի բարկացիր, սիրելիս, յերբ տուն գամ, յեթե մենակ յեղա, դուռը մեկ անգամ կբաղխեմ, իսկ յեթե հետս «հյուր» յեղավ՝ յերկու։ Այդ դեպքում դու աննկատելի դուրս կգնաս և դրսում կսպասես, մինչև հյուրը գնա։

Յերբ պատուհանի վարագույրը բարձրացրած լինի, այդ կնշանակի, որ «հյուրն» արդեն գնացել է։ Դու կգաս, և այն ժամանակ մենք... Որպես իսկական ամուսիններ...

— Դե, ցտեսություն։

Գնաց։

Այո...

Ապրուստի միակ աղբյուրը...

Ցավ շատ թանգ գնով ձեռք բերած...

. . . .

Յերկար էր անցել արդյոք, չգիտեմ, յերբ

հանկարծ դուռը բաղխեցին յերկու անգամ..։

Աննկատելի դուրս սահեցի միջանցք, նրանց կողքով։

Ո՞վ եր նա, չնայեցի։

Սակայն միևնույն չէ՞...

ԿՐԿԻ՛Ն ՓՈՂՈՑՈՒՄ

Փողոցը...

Ճակատագրորեն կապված ինձ հետ, անխուսափելի ստվերի պես հետապնդում է նա ինձ ամեն ուր և ամեն ժամ։

Անհավասար պայքարում միշտ գերակշռող, նա այլևս յերբեք հաշվի չի առնում իմ կամքն ու իմ շուրջ ստեղծվող պայմանները։

Միշտ իր գրկում։

Ու քայլում եմ փողոցով, այլևս խաղաղ ու անվրդով։

Ել վոխ չունիմ նրա դեմ։

ՎԵՐԱԴԱՌՆԱ՛Լ ԱՐԴՅՈՔ

Ուշ է, շատ ուշ։

Գեղեցկուհուս պատուհանի վարագույրն արդեն բարձրացրած է և լույսն ընկել է փողոց։

«Հյուրը» գնացել է։

Հիմա նա սպասում է ինձ։

Վերադառնա՞լ արդյոք...

Տաք սենյակ, միշտ մի կտոր հաց, փափուկ անկողին և... կրքալից կուրծք ու հյութալից շրթունքներ, թեև «հյուրի» կողմից արդեն ու-բորված ու համբույրներից գունաթափված...

Սակայն քայլերս ինքնին տանում են ինձ կրկին դեպի քաղաքային այգին, դեպի «իմ» նստարանը...

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1

Ասյան ամուր խփելով դուռը, դուրս վազեց և մյուս սենյակի գահավորակին հասնելով, ընկավ վրան, դեմքը ձեռքերի մեջ առավ ու հեկեկաց։

Արշակը մի րոպե ապշած կատարված իրողությունից, չկարողացավ ըմբռնել պատճառը։

Այնքա՜ն պարզ ու հասկանալի չէր իր ասածը։

Վո՞րտեղից է նրա մեջ բնավորության այդ գիծը, վոր առաջ չկար։

Կամ գուցե չէր նկատել։

Սկզբում, նախ քան ամուսնանալը, լարված աշխատանքի մեջ հազիվ որական մի քանի կարճ րոպեներ կարողանում էր հանդիպել նրան, իսկ ամուսնությունից հետո տարված իր յերջանկությամբ, պարուրված կնոջ անվերջ փաղաքշանքներով, նա յերբեք չէր նկատել նրա մեջ պճնասիրության այդ գիծը, վորն այնպես ցայտուն կերպով այսոր պարզվեց իր համար, ինչ վոր մի զույգ կիսակոշիկների պատճառով.

Քայլում էր սենյակում ու մտածում։

Նրա պարզև հասակը կորացել, կծկվել եր։

— Ի հարկե, նա խրտնացել ե,— մտածում եր նա,— կինը դեռ չի ազատագրվել իր սեռին հատուկ տրամադրություններից։ Բնական ե, վոր միանգամից չի լինի, հարկավոր ե ժամանակ, գուցե յերկար ժամանակ։ Հարկավոր ե փոխել կնոջ դաստիարակության վողջ կառուցվածքը, նրա մտաշխարհը։ Պետք ե նրան շրջապատել նոր միջավայրով։

Բացեց դուռը ու խեղճացած, մոտեցավ կընոջը, վորը դեռ շարունակում եր հեկեկալ, դեմքն ափերի մեջ առած։

— Մայա,— մեղմ կանչեց նա, նստելով կողքին և թևը մեջքով պատելով։

— Թող ինձ,— բարկացավ Մայան,— դու ինձ չես սիրում. մինչև հիմա սուտ եիր ինձ։ Յես շատ թշվառ, արհամարհված կին եմ։ Դու սիրում ես ինձ այնքան, վորքան յես պետք եմ քո հանգստության ու հարմարությունների համար։ Յես քեզ համար միայն գլխաբարձ եմ։

— Մայա, ինչպե՞ս կարողանում ես այդ ասել առանց խղճի խայթ զգալու։

— Ինչ վոր տեսնում եմ, այն ել ասում եմ։

— Յեվ այդ բոլորը մի զույգ կիսակոշկի պատճառով, յերբ իմ կարծիքով դեռ կարիք չկա։

— Իհարկե, քո կարծիքով։ Բայց տես թե ուրիշներն ինչպես են հագնվում։ Միսակի կինը քանի՜ն ունի. լակովի, խրոմի, սպիտակ զամշի, մուգ մոխրագույն զամշի, դեղին սպիտակ կտորից, բաց լոդոշկա, խորը... Հագուստները մի տես... Դրսում ուրիշ գույնի յե հագնում, թատրոնում ուրիշ, յերեկույթում ուրիշ, հյուր գնալիս՝ ուրիշ։ Յես ամաչում եմ հյուր գնալ, հենց մի կտոր շոր ունեմ. հո չի կարելի ամեն անգամ նույնը հագնել։

— Բայց այդ բոլորը ձրի չե։

— Նա քեզանից ավելի ծառայող ե... Դու ավելի մեծ դիրք ունես, քեզ հարգում են, կոմիտեյում քո խոսքն ավելի արժեք ունի։ Իսկ նա ինչ ե վոր, մի սովորական կուսակցական։ Դու կրթված ես, ավելի մեծ պատրաստականություն ունես, իսկ նա յերկու խոսք ել չի կարողանում կապել։ Բայց տես թե ինչ տուն ե պահում...

— Մայա դու մոռանում ես, վոր այդ ամենը նախապաշարմունք ե։ Մեզ հարկավոր ե վոչ թե հագուստ, լավ տուն, այլ առողջ միտք և գործնական աշխատանք, փոխելու աշխարհի մինչ այժմ ունեցած փտած հիմքերը։ Յեթե Միսակն այդպես չի մտածում, ավելի վատ իր համար։

— Ի հարկե, յերբ խնդիրն այդպես ե հաս-

նում, իսկույն մեջ ես բերում զանազան գաղափարական պատճառաբանություններ։ Թող ուրիշներն այդպես վարվեն։

— Յես էլ մեկն ուրիշներից։ Մանավանդ կուսակցության մեջ ունեցած իմ դիրքը և իմ յերկար տարիների գաղափարները, վորոնց համար կրել եմ բանտ, աքսոր, հազար ու մի հալածանք, ես չեմ կարող դեն շպրտել այս ժամանակ, յերբ այդ ամենը վերջապես մեր արյունով ձեռք ենք բերել ու պարտավոր ենք ամրապնդել։ Յեթե մեր առորյա կյանքը շարունակենք հին ձևով, այդ դեպքում ինչպես կվարվեն մեր մյուս, քաղաքականապես ավելի պակաս դաստիարակություն ունեցող ընկերները, վորոնք կանգնել են մեր շարքերում, հավատալով մեզ ու մեր գործի ճշմարտությանը։ Ինչ կասի անկուսակցականների և ակամա յենթարկվածների հսկայական բազմությունը, վորոնց կառավարում ենք մենք. վորոնք դեռ չեն ըմբռնել մեր գաղափարներն ու զգված գազանի պես ակամա իրենց քաշած սուր ճանկերը, գարան մտած, հարմար բոպեյի յեն սպասում մեզ վրա ցատկելու և պատառոտելու.

—Յեվ դու պնդում ես, վոր ինձ սիրում ես։ Սիրող մարդը վոչ թե այդպիսի քաղաքական ճառ կարտասաներ, այլ չեր թույլ տա, վոր իր կինն այդպիսի դատարկ բանի համար այքան լաց լինի։ Դու մոռանում ես, վոր արտասվելը վատ է ազդում ինձ վրա և յերեսիս գույնն ու աչքերիս փայլը փչանում է,—ասաց Ասյան և հետ-հետ քաշվելով նրանից, խոնարհվեց գահավորակի թևին, կրկին հեծկլալով։

Արշակը կրկին կորցրեց իրեն, ծունկի յեկավ նրա առաջ, կիսագրկած, փայփայեց գլուխը.

—Դե լավ, լավ, բարձրացրու գլուխդ։ Բավական է, մի արտասվիր։ Յես սխալ եմ...յես պարտավոր եմ...Դե, դե լավ...Թող արցունքներդ համբույրով չորացնեմ։

Ուժով բարձրացրեց նրա գլուխը գահավորակի թևքից ու սկսեց համբուրել աչքերը, դեմքը։

Ասյան բուռն տենչանքով ընկավ նրա գիրկը, սեղմվեց խտիտ, սկսեց փաղաքշել նրա գլուխը։

Արշակը շատ եր սիրում իր կնոջ.

Որվա հոգնատանջ, հիմնարկության ջղայնացուցիչ աշխատանքից, յերկարատև ժողովներից, զեկուցումներից, դժվարին և մանրակրկիտ աշխատանք պահանջող ծրագրերից հետո միակ մտածմունքի առարկան կինն եր, դեպի վորը ձգտում եր բուռն թափով, նրա փայփայող քըն-

քուշ ձեռքի տակ մոռանալու այն հսկայական բեռան հոգնությունը, վորը կամովին իր վրա յեր առել տարիների ընթացքում։

Տարիների ընթացքում աննկուն և համառորեն աշխատելով, նա վոչ մի ակնթարթ չեր տարվել շրջապատի առօրյա կյանքի հանգիստ ու շռայլ հեռանկարներով, բայց միշտ կարիք եր զգացել մի ձեռքի, վոր մոռացնել տար իրեն իր յերբեմնակի հոգնությունն ու խրախուսեր իրեն իր ճանփի վերելքին։

Մեկ որ տեսել եր Ասյային մի ինչ վոր հիմնարկության մեջ աշխատելիս։

Աչքերը մի րոպե կանգ եյին առել նրա վրա ու կարճ ժամանակից հետո նրանք կապվել եյին հոգեկան հարակցությամբ։

Տարիներ շարունակ կոշտ ու մենակ մնացած սիրտն հանկարծ բաց եր արել իր սիրո վողջ կարողությունը ու բուռն ձգտումով մոտեցել նրան, վորպես իր կայանի։

Միտքը պատկանում եր իր գործին, իսկ սիրտն՝ ամբողջապես Ասյային։

Որվա ընթացքում աշխատանքով ծանրաբեռ, քիչ եր լինում նրա հետ, բայց իր սիրող սիրտը համոզված եր, վոր նա ել իրեն է սիրում, վոր նա յել տարված իր գաղափարի հաղթանակով իր հետ կգա խորացնելու և ծավալելու այն։

Իսկ այսօրվա դեպքը...

Արշակի դեմքը մի րոպե մռայլվեց, բայց նա իսկույն ցրեց այն ու հավատացրեց իրեն, վոր ինքը, միայն ինքն է մեղավոր և ավելի գիրկ փաթաթվեց նրան։

Յերբ բարձրացավ տեղից ու մոտեցավ թեյի սեղանին, արդեն ուշ եր։

Տնտեսական հանձնաժողովի նիստն ուշացել եր։

2

Մյուս որը Արշակը ֆինբաժնի վարիչին խնդրեց իր մոտ և հայտնեց, վոր կամենում է ավանս վերցնել իր յերկու ամսվա ռոճկի հաշվով։

Ֆինբաժնի վարիչը զարմացավ։

Առաջին անգամն եր նա այդպիսի խնդիր հարուցում։

Ընդհանրապես նա այն կարծիքին եր, վոր ավանսը մեռյալ գումար է և տնտեսությունը քայքայող։

Ճաշին յերբ տուն վերադարձավ, ուրախ-ուրախ ձայն տվեց...

— Ասյա, մի րոպեյով յեկ, բան ունեմ հայտնելու։

Յերբ Ասյան զարմացած մոտեցավ, մի թևովը գրկեց նրա մեջքն, իսկ մյուս ձեռքով թըղ-

թապանակից հանեց մի բավական ստվար կապուկ դրամ ու նրան տվեց։

— Առ, սիրելիս ու գնիր ինչ վոր պետք ե։ Լավ հագուստներ, կոշիկ, գլխարկ... Հենց այսոր իսկ կգնես։ Դե բեր ճաշենք, յես ժողովի յեմ գնալու։

Ասյան մեկ զարմացած ու մեկ ել կարծես մի ներքին ձայնի թույլ կանչից խղճի խայթ զգացած, հասկացավ այդ զոհաբերությունը, ամաչեց, մի ակնթարթ տատանվեց, ուզեց մերժել, ասել, վոր պետք չե, վոր իր առավոտյան պահանջը միայն քմահաճույք եր, վորն անցավ, բայց Արշակը մի յերկարատև համբույրով փակեց նրա բերանը։

— Չե, չե, վոչինչ մի ասա, մի հակառակիր, շնորհակալություն մի հայտնիր։ Այս անգամ յես եմ պահանջում, վոր լավ հագնվես, այնպես, ինչպես ինքդ ես ուզում։ Ո՜, յես քեզ ավելի յեմ սիրում, քան դու կարծում ես, քան յես կարողանում եմ արտահայտել, ցույց տալ։

Ո՜, ինչ հեշտ միջոցով վերադարձրեց իր յերջանկությունը, վոր առավոտյան այնպես հանկարծակի ուզում եր փախչել իրենից, վորպիսի միտքն այդ ամբողջ որը կրծել եր իր սիրտը։

Նրան թվում եր, վոր յերբ տուն վերադառնա,

իր պաշտելի Ասյային այլևս տանը չի գտնի, վոր նա վանդակի ճաղը մի կերպ կոտրած թռչնակի նման թռել, անցել ե սար ու ձոր, անծայրածիր դաշտեր և արդեն շատ, շատ հեռու յե իրենից։

Եվ ինչպե՞ս պիտի ապրի առանց նրա, եվ ինչպե՞ս կարող ե կյանքը գրավել իրեն։

Մինչ Ասյան ճաշի սեղանն եր պատրաստում, Արշակը քայլում եր սենյակի յերկայնքով ու մտածում։

— Վո՛չ, չեմ կարող ապրել առանց նրա։ Սա անշուշտ թուլամորթություն ե, յես ունեմ նպատակ, գործ, վորն ամեն ինչ ե ինձ համար, վորին կապված եմ իմ վողջ եյությամբ, մտածելակերպով, դատողությամբ, վորի ծնունդն եմ յես, բայց զգում եմ, վոր յեթե Ասյան թողնե ինձ, այդ ամենը կարող ե փլչել և յես կմնամ այդ հսկայական շենքի ավերակների տակ։

Անհատական յերջանկության զգացումը դեռ խորն ե մեր մեջ, նա թաղված ե մեր ուղեղում, բղխում ե մեր եյությունից։ Բայց չե՞ վոր յերջանիկ անհատների համախմբումից ե, վոր կազմվելու յե յերջանիկ հասարակությունը։ Հանցանք չե իմ արածը, այլ իմ անձնական յերջանկության գիտակցությամբ զինված, ավելի հնարավոր կլինի աշխատել հասարակությունների

համար յերջանիկ գոյություն ստեղծելու համար։

Բայց մի ներքին ձայն կամացուկ շշնջում եր, վոր դա խաբուսիկ ե, վոր նա մեղանչում ե ինքն իր դեմ և իզուր ե ինքն իրեն պաշտպանում։

Նա կամենում եր ցրել, խլացնել այդ ձայնը զանազան թեզերով, բայց նրան թվում եր, վոր չհաջողվեց, չկարողացավ համոզել։

Ճաշից հետո անմիջապես շտապեց ժողովի։

Զարմացավ, վոր ճաշն այնքան յերկար տեվեց։

Հիշեց, ինչպես առաջ ճաշի համար գործադրած ժամանակը, վորպես զուր կորչող, նա աշխատում եր կարճել։ Ուտում եր շտապ, շատ անգամ էլ վորևե կարևոր գրություն, գործ կամ գիրք թերթելով, միշտ կենտրոնացած ու մտախոհ։

Սակայն տունը հո ճաշարան չե՞։

Սիրած կնոջ ներկայությունն ավելի յե հաճելի։

3

Յերեկոյան Արշակը ժողովից տուն վերադարձավ հուզված։ Հետն եր իր վաղեմի ընկեր Սեդրակը, վորը նույնպես ժողովում եր և իրեն հակառակ կարծիք եր պաշտպանել։

Խոսելով քայլել եյին ու աննկատելի հասել տուն։

— Ուրեմն կարծում ես, վոր յես սխալվում եմ,—դարձավ Արշակը նրան։

— Այո, անկասկած։ Յես զարմանում եմ, վոր այդ խնդրում դու չես կարողացել մեր քաղաքականությունն ըմբռնել, կամ ավելի ճիշտ, չես ուսումնասիրել։ Դու հիմնվում ես ուրիշների կարծիքների վրա։

— Բայց գաղտնիք չե, վոր գործարանն ոգուտ չի տալիս, վոր նրա այդ ագր[illegible] չի ծածկում իր ծախքերի հիսուն տոկոսն անգամ, իսկ պատրաստած նյութը հատկությամբ ավելի վատ ե։

— Այդտեղ խնդիրը փոխվում ե։ Համաձայն եմ քեզ հետ։ Սակայն այդ կարելի յե վերացնել։ Պետքե մանրակրկիտ ուսումնասիրել, պարզել պատճառները և վերացնել չարիքը, բայց վոչ յերբեք հիմնվելով նրանց վրա՝ գործարանը կապելով տալ մասնավոր մարդկանցից կազմված արտելի, վորի գույնը դեռ վորոշ չե։

— Կապալով տալն ազատում ե հիմնարկությունը բոլոր ծախքերից և դեռ վորոշ գումար էլ ստացվում ե, վորով հնարավոր կլինի մի այլ, ավելի արժեքավոր ձեռնարկություն սկսել։

— Իսկ այն՝ վոր խախտվում է մեր սկըզբունքը։
— Չէ՞ վոր հսկողությունը մերն է, իսկ բանվորությունն աշխատանքի կոդեքսի պաշտպանության տակ առնված։ Նրանց դրությունը վոչնչով չի տարբերվում ներկայից։ Ընդհակառակը, այն ժամանակ նրանք ժամանակին կըստանան իրենց վարձատրությունը, մի բան, վոր հիմնարկությունը յերբեք չկարողացավ իրագործել։
— Հապա մեր նյութով կատարած չարաշահությո՞ւնը, հապա այն ճեղքը, վոր բացվելու յե դեպի մեր շինարար աշխատանքն ունեցած ժողովրդի հավատի մեջ։
— Կարծում եմ, վոր անցել է խոսքի ժամանակն ու սկսվել է գործնական շրջան։
— Այո, տեսնում եմ, վոր բավական գործնական փորձառություն ես ձեռք բերել,— ասաց Սեդրակը, հայացքը պտտացնելով սենյակում։
— Ի՞նչ ես ուզում ասել,— Արշակին թվաց, վոր վոտքերի տակ հատակը ճոճվում է։
— Վոչինչ, միայն այն, վոր ինքդ ել բավական գործնականորեն ես դասավորել կյանքըդ։ Տուն, կարասիներ, կին, վորոշ ժամերին թեյ, ճաշ, ընթրիք, մի խոսքով կանոնավորություն... Առաջ այդպես չեր...

— Դու ինձ մեղադրո՞ւմ ես։
— Մեղադրո՞ւմ։ Ինարկե վո՛չ, միայն թե այդ ամենը մեզ նմաններին սազ չի գալիս։
— Մի՞թե մենք իրավունք չունենք նորմալ կյանք ունենալ և հոգալ մեր առողջության մասին։
— Ո՞վ է այդ ասում, բայց մենք սովոր չենք և կարող է պատահել, վոր հեշտությամբ ծծվենք այդ նորմալության թույնով։
— Կարծում ես նորմալությունը մեզ հե՞տ կկանգնեցնի մեր աշխատանքից։
— Կարող է պատահել։
— Անպայման սխալվում ես։ Նորմալության արդյունքը կյանքի ճանաչողությունն է։
— Միաժամանակ և ծանրաշարժությունը, անձնական շահի, օգտակարության և փառակարության թեկուզ մի աննկատելի զգացում, վորը տանում է մարդուն իր նախորոք ընդգըծած ուղիներից։ Ձեռքն այլևս այնպես չի բարձրանում, վոր հարվածը նշանառու լինի։ Ասա՛ խնդրեմ, ի՞նչ պետք ունես անկյուններում դըրված այս սեղաններին իրենց մանր, միանգամայն անպետք իրերով, այս բազկաթոռին, գահավորակին և այլն։
— Կինս գտնում է, վոր այդպես լավ է։

— Անշուշտ, այսօր կինդ է գտնում, բայց վաղը մյուս օրն ինքդ էլ նույնը կգտնես։ Ընկերաբար նկատեմ, որ իմ կարծիքով, այս ամենն արդեն ազդել է վրադ։ Յեղբայր, վախեցիր, վախեցիր կոմֆորտից։ Մեր կոմֆորտը լավագույն զենքերից մեկն է մեր հակառակորդների ձեռքում մեր դեմ։ Նա կարող է փորել հողը, որի վրա կանգնած ես դու։ Զգույշ։

Այդ ժամանակ ներս մտավ Ասան, զանազան փաթեթներով ծանրաբեռնված, որոնք թափելով սեղանի վրա, վազեց ամուսնու մոտ ու փաթաթվեց նրան։

— Այնպես լավ-լավ բաներ եմ գնել, որ տեսնես, կզարմանաս։ Յեվ այնքան աժան, այնքան աժան... Բայց ամբողջ փողն համարյա ծախսել եմ։

Սեդրակը ձեռք տվեց նրան, քաշվեց սենյակի մյուս անկյունը, աչքի տակով սեղանին թափված փաթեթներին նայելով, ապա մի կըշտամբական հայացք գցելով Արշակի վրա, մտածեց. — «Մարդն ընկնում է, հարկավոր է փըրկել, կրկին իր ճանապարհը ցույց տալ»։

4

Արշակը զիջեց կնոջ թախանձանքին, մանավանդ վախենալով նրա արդեն մթագնած

դեմքից, որն արցունք էր գուշակում և համաձայնվեց հյուր գնալ կնոջ ընկերուհիներից մեկի մոտ, որի ծննդյան տարեդարձն էր։

Վերջապես մեզ էլ հարկավոր է մարդամեջ դուրս գալ, ծանոթություն ձեռք բերել։ Սարի գլխին հո չենք ապրում։ Ինչո՞ւ պետք է խույս տանք մարդկանցից։

— Ի՞նչ իմ տեղն է մի ինչ որ վաճառականի տունը։ Ավելի լավ է մենակ գնա. ժամանակին կառք կուղարկեմ յետևից։

— Ի՞նչ պակաս մարդիկ են։ Շատ սիրով ամուսիններ են, հիանալի տուն են պահում, ամեն ինչ առատ։ Շատ լավ կլինի։ Վերջապես մի գիշեր կհանգստանաս։ Այնքան ես աշխատում, որ յերեսիդ գույն չի մնացել։ Զե՛, սիրելիս, համաձայնվիր գնանք։ Յես մենակ չեմ գնա։ Մենակ տեսնեն ինչ կասեն։ Կմտածեն, թե հասարակության մեջ քեզ պահել չգիտես, դրա համար էլ խույս ես տալիս։

Հակառակելն այլևս հնարավոր չէր։

Գլխիկոր հետևեց կնոջը։

Յերբ հրավիրավայր հասան, մի ակնթարթ կանգ առավ դռան մոտ, կամեցավ հետ դառնալ։ Կինը կարծես հասկացավ նրա մտադրությունը, բռնեց թևից ու ներս տարավ։

Միջանցքում նոր միայն հանել էին վերարկուները, յերբ սենյակի դուռը թափով բացվեց ու նրանց ընդառաջ վազեցին տանտիրուհին և նրա հետևից էլ՝ ամուսինը։

Ամուսինը միջակից ցած, հաստ, լայնադեմք մարդ էր, փոքր, շարունակ անհանգստորեն դես ու դեն դարձող աչքերով, վորոնք յերբեք ուղիղ չէին նայում դիմացինի աչքերին։

Կինը շիկահեր էր, քիչ բարձրահասակ, մարմնեղ, թևերն հոլանի, աչքերը՝ խորամանկ։ Իր կես կուրծքը և թևերը բաց շականակագույն մետաքսյա նորաձև հագուստի մեջ նա բավականին գեղեցիկ էր, վորի գիտակցությունն ինքն ուներ և աշխատում էր ի ցույց հանել ըստ հնարավորի։

Կանայք համբուրվեցին ու առաջ անցան, իսկ վաճառականը մի քանի անգամ ամուր թոթվելով Արշակի ձեռքը, կրկնում էր.—

— Ուրախ եմ, շատ ուրախ ձեզ պես մի ազնիվ, խելոք և ազդեցիկ մարդ ընդունել իմ հարկի տակ։ Համեցեք, համեցեք...

Դահլիճը լի յեր հյուրերով։

Բավականաթիվ ծանոթ դեմքեր կային։ Պաշտոնյաներ, արդյունաբերողներ, առևտրականներ, վորոնք զանազան ժամանակ գործով յեղել էին իր մոտ։

Կուսակցականներ էլ կային, վորոնք քաշված մի հեռավոր անկյուն, լուռ, չորս բոլորքն էին դիտում, պարզ գիտակցելով իրենց ավելորդությունն այդ հարուստ, կահավորված, առատ լույսով ողողված դահլիճում, այդ ճոխ հագուստների մեջ փաթաթված մարդկանց մեջ։

Արշակը գլխով ընդհանուր բարև տալով և խուսափելով տանտիրոջ մտադրությունից՝ նրան մեկ-մեկ ներկայացնելու հյուրերին՝ մոտեցավ իր ընկերներին ու նստեց նրանց մոտ։

Հյուրերը զանազան խմբերի բաժանված, կամացուկ խոսում, զսպված ծիծաղում էին։

Տիրում էր մի ինչ վոր ճնշվածություն։

Տանտիրուհին գերյերջանիկ ժպիտով մոտենում էր այս ու այն խմբին, աշխատելով ընդհանուր խոսակցություն առաջ բերել, զբաղեցնել, վորպեսզի վոչ վոք տխուր չզգա իրեն։

Հյուրերի մեջ կային մի յերգիչ, դերասան-դերասանուհիներ, մի բանաստեղծ։

Տանտիրուհու հայացքը կանգ առավ դերասանի վրա։

— Խնդրում եմ մի մենախոսություն արտասանեք։

Ամեն կողմից միացան խնդրին։

Դերասանն առաջացավ սենյակի մեջ տեղ

ու կարևոր դիրք ընդունելով, սկսեց իր մենախոսությունը։

Արժանացավ բուռն ծափերի։

Հերթը բանաստեղծին հասավ։

Քիչ կոտրատվելուց հետո յելավ վոտքի՝ հայացքը սևեռուն իր կողքի աղջկան և ձեռքերի ու գլխի արագ և վոգևորված թափահարությամբ արտասանեց իր բանաստեղծություններից մեկը։

Հարմարավոր առիթը կարծես հանդիսացավ։

Բոլոր լեզուները բացվեցին։

Խոսում եյին բարձրաձայն, մեկը մյուսից առաջ ընկնելով, ընդհատելով դիմացինի խոսքը։

Խոսում եյին ամեն նյութի մասին.— գրականության, առևտրի, քաղաքականության, գեղարվեստի...

— Յեթե ինձ հարցնեք, յես կասեմ, վոր ամբողջ աշխարհում ամենալավ կառավարությունը մերն ե,— ասում եր մի հաստամարմին վաճառական իր կողքի հարևանին, աչքի տակով կուսակցականների կողմը նայելով։

— Իհարկե, ճիշտ եք նկատում,— ասում եր մեկ ուրիշը, դառնալով նրան,— միայն թե հարկերը մի քիչ շատ են։

— Հարկե՞րը Բոլորովին ել վոչ։ Հապա կառավարությունն ինչո՞վ պիտի ծածկի իր հսկա-

յական ծախքերը։ Կգա ժամանակ, հարկերն ել կպակասեն, դույցե և բոլորովին վերանան։ Կոմմունիզմի նպատակը դա յե։

Մի տիկին բարձրաձայն ասում եր.—

— Հրաշալի յե, վոր աղախինները միություն են կազմել ու նրանց ապահովագրում են։ Յես առաջինն ապահովագրեցի իմ աղախնուն։ Ութ ժամ աշխատում ե, ապա հանգստանում։ Ութ ժամվա աշխատանքը քիչ չե թեկուզ և մի մեծ ընտանիքի համար, յեթե լավ գործարար ե։ Մյուս կողմից ել հիմի ավելին կարող ես պահանջել. չե՞ վոր ապահովագրել ես և ութ ժամից ավել չի աշխատում։

— Յես ընդհանրապես չեմ դժգոհում,— ասում եր մի գեղեցիկ տիկին իր մոտ նստած յերիտասարդին, վորի դիրքն ու գործը դժվար եր վորոշել,— միայն թե շուտ կարգի ընկներ այս ամենն ու արտասահմանի հետ հարաբերությունն սկսվեր։ Գիտեք, ռուսական կտորները շատ են կոպիտ և վոչ մի կերպ հնարավոր չի լինում գեղեցիկ հագնվել։ Քանի՜ տարի յե ե, ուղղակի կարոտել եմ։

Բոլորն ուրախ եյին։ Վոչ վոք չեր տխրում բացի մի քանիսից, վորոնք քաշված անկյունում յերբեմն-յերբեմն միմյանց հետ փոխանակում եյին մի աննշան կարճ նախադասություն։

Արշակի դեմքը յերևի շատ էր մարտիրոսային, որ Ասյան մի րոպեյով բաժանվելով ամբողջ ժամանակ իր հետ յեղած յերգչից, մոտեցավ նրան ու ականջին շշնջաց.—

— Դեմքդ այնպես թթված է, կարծես հենց հիմա կախելու յեն տանում։ Ամոթ է, հասարակության մեջ չի կարելի այդպիսի դեմք ունենալ։ Ի՞նչ կմտածեն։

— Լավ, լավ,—արագ պատասխանեց նա, ակամայից ժպտալով|

— Շատ եմ ափսոսում, որ արտասահմանը թողեցի ու յեկա այստեղ։ Մեզ չեն գնահատում։ Ինչպե՞ս կարելի յե թատրոնը դարձնել զանազան նորմուծումների փորձարան։ Հիմի էլ նոր վոտք յելած դերասաններ են դուրս յեկել ու մեզ էլ չեն հավանում։ «Գեներալներ» եք դուք, ասում են, ձեր ժամանակն անցել է։

— Ասում եմ ախպեր, յես ձեր միակ յերգիչն եմ, հնարավորություն տվեք բժշկվեմ, նրանից հետո վորտեղ և ում համար ուզում եք, յերգեմ։ Դե ինչ դժվար բան է կառավարության համար մի մարդ պահելը։

— Մի՞թե, յես այդ չգիտեյի։ Ինչպե՞ս, ամուսինը գիտե և վոչինչ։ Այ, այ, այ, այ... Ասենք նոր կարգերում բազմամուսնությունն անընդունելի գաղափար չէ։

— Հավատացեք քաղաքացու ազնիվ խոսքիս, այդ բանում յես մեղք չունեյի, թեև աշխատում եյին ինձ էլ հանցակից անել։ Գալիս է, թե ձեզ այս ինչ կամ այնինչ ապրանքը պետք չէ՞։ Յես ազնվարական մարդ եմ, ինարկե պետք է։ Բայց ի՞նչ իմանամ, թե պետական պահեստնե բիապրանք է։ Ճիշտ է, պաշտոնյա յե, սակայն այժմ ով առևտուր չի անում։

— Վոսկի՞ն, ասում եք... հա, շատ է բարձրանում։ Դե ինարկե, չերվոնեցն էլ վերջի վերջո թուղթ է և հասկանալի յե, անապահով։ Անշուշտ ամենից վստահելին վոսկին է։

— Ասում եք չերվոնեցը կհավասարվի՞... ով կհավատա։ Կառավարությանը վոսկի յե պետք. չէ՞ վոր պարտքերը վճարելու յե վոսկով, վոչ թե չերվոնեցով։

Հետո մի տիկին առաջարկեց սալոնային ընդհանուր խաղ խաղալ։

Աթոռները շրջանաձև շարեցին սենյակի մեջտեղ, նստեցին, մեկը դատարկ թողնելով։ Ամեն մի կնոջ մոտ յետևից կանգնեց մի կավալեր. դատարկ աթոռի մոտ էլ մեկը, առանց դամայի։ Դամա չունեցողը պիտի հայացքի աննկատելի հրավերով ցանկացած դամային իր մոտ հրավիրեր։ Հրավերն ընդունող դաման պիտի աշխատեր իր յետևում կանգնած կավալերից աննկա-

տելի տեղափոխվել հրավիրողի մոտ, իսկ կավալերը պիտի զգաստ լիներ և թույլ չտար, վոր իր դամային խլեն, բռնելով նրա ուսերից այն ժամանակ, յերբ նա տեղափոխվել է ցանկանում։

Արշակը հրաժարվեց մասնակցելուց և տեղը փոխելով ու ավելի հեռավոր անկյուն քաշվելով, դիտում էր, ինչպես ուրախանում, ծիծաղում, վոգևորվում, հիանում են թե խաղի մասնակցողները և թե նրանց շուրջ հավաքվածները։

Ահա մի հաշվապահ, վորն աշխատում է իր հիմնարկության մեջ։

Մի մարդ, վորի վողջ մտաշխարհը թվերն են ու իր ռոճիկը, վորը խոնարհությամբ կատարում է ամեն չնչին կարգադրություն, վորպես անխախտելի սահմանված օրենք, վորը լրագիր անգամ չի կարդում ու չի համարձակվում աչքերը վեր բարձրացնել և պաշտոնով իրենից բարձրի դեմքին նայել։

Հագուստն ու կոշիկները կարծես ասեղի տակից նոր են դուրս յեկած։ Վոգևորված հորթի պես թռչկոտում է, քահ-քահ ծիծաղում, նույնիսկ աշխատում է սրախոսել։

Արշակի հայեացքն ընկավ կնոջ վրա, վորը կարծես վերափոխվել, մի ինչ վոր անբացատրելի յերանության հասածի ամբողջ բերկրանքն ապրելով, ժպտում էր յերջանիկ։

Արշակին թվաց, վոր Ասյայի կավալերն իր ձեռքերը շատ ամուր է սեղմել նրա ուսերին ու քիչ էլ ցած իջեցրել։

Խաղին հաջորդեց պարը։

Տանտիրուհին նստեց դաշնամուրի մոտ ու առաջին ձայների թնդյունի հետ զույգերն սկսեցին պտտվել դահլիճում։

Յեվրոպական պարերին հաջորդեցին ասիականներն իրենց աղմկալից ցատկոտումներով ու մարմնի կոտրատումներով։

Ասյան պարում էր անընդհատ։

Նրա պարն այնքան էր գրավել ամենքին, վոր բոլոր կավալերները ցանկանում էին նրա հետ գոնե մի պտույտ անցնել։

Խոսակցության, վոտքերի դոփյունի ու նվագի միախառնումից սոսկալի աղմուկ էր կազմըվել։

Տանտերը կամենալով զբաղեցնել նրան, մոտեցել ու կողքին նստած, խոսում էր, կամաց-կամաց խոսքը դարձնելով յերկրի արդյունաբերության շուրջը, ընդգծելով պատերազմից առաջ իր ունեցած դերն այդ արդյունաբերության մեջ, գանգատվելով իր ներկա դրությունից և ցանկություն հայտնելով կրկին իր նախկին գործերին անցնելու։

Ծախքերը շատ շատ են, կին, յերեխաներ, ծանոթ ու բարեկամ, պետք է մի կերպ ծայրը ծայրին հասցնել: Շատ է խնդրում, վոր ընկեր Արշակն աջակցե իրեն: Ինքն այդ լավությունը չի մոռանա: Ինքն ել մարդ է, հասկանում է, հո սարից չի՞ յեկել:

Արշակը լսում եր անուշադիր ու հոգու խորքից մի ինչ վոր գունդ, դառը ու կոշտ, բարձրանում եր դեպի կոկորդը:

Ահա նա քերում է կոկորդը, ուզում է դուրս պրծնել: Իր մեծությամբ խեղդում է նրան: Շընչառությունն ընդհատ է դառնում, մատները ջղաձգորեն ծալվում են ու բացվում:

Մի կերպ ուժ գործ դնելով, զսպում է իրեն:

Բավական ուշ ժամանակ հայտարարվում է, վոր ընթրիքը պատրաստ է և հյուրերը հրավիրվում են սեղանատուն:

«Վերջապես», անցնում է նրա մտքով,— «շուտով վերջ կունենա այս կոմեդիան»:

Աջ կողմ նստած է տանտիրուհին, իսկ ձախ կողմում մի վաճառական և ընդհանրապես տղամարդիկ ավելի շատ միմիանց մոտ են նստած:

Մեկը բողոքում է.—

— Կրկին մեր սխալականությունը: Չեղավ,

չեղավ, ընկերներ, տեղափոխվեցեք, մի դամա, մի կավալեր, մեջ ը մեջ:

Տեղափոխվում են:

Արշակի ձախ կողմը նստած է մի բարձրակուրծք, շքեղ հագնված տիկին ու անմիջապես սկսում է առանց դադարի խոսել հազար ու մի դատարկ բաների մասին:

Արշակը ձանձրանում է:

— Շատ անշնորհք կավալեր եք,— նկատում է տիկինը,— նախ տիկիններին պիտի առաջարկել:

Արշակը յենթարկվում է, բայց զգում է, վոր այդ իրեն գործը չե ու թողնում է:

Ասյան նստած է դերասանի մոտ:

Նրանք խոսում են հակված միմիանց:

Խմում է, յերբեմն առանց սպասելու կենացի:

Բայց ամբողջ մարմնում կա մի ինչվոր ընդհանուր թթվածություն, վորը հակազդում է ալքոհոլին ու նա չի հարբում:

Յերբեմն հայացքն՝ ուրիշներից աննկատելի կշտամբանքով՝ կանգ է առնում կնոջ վրա, վորն ամբողջ ընթրիքի ժամանակ կարծես մոռացել է իրեն, բայց շատ ուրախ է ու տղամարդոց ուշադրության կենտրոնն է դարձել իր բաց կրծքով, հոլանի պարանոցով ու գիրկ մերկ թևերով:

5

— Արշակ, մի՞թե չես հասկանում, թե ինչ կարող ե պատահել, այսպես շարունակվելու դեպքում,— ասում ե Սեդրակը, նրա հետ միասին դուրս գալով ժողովից։

— Հասկանում եմ, բայց ինչ կարող եմ անել։ Ցանցը շատ սեղմ ե փաթաթվել ինձ,— պատասխանում ե նա, խոնարհելով գլուխը, մի անհուն վիշտ աչքերում։

— Զարմանալի յե, վոր այդ դու ես ասում։

— Բայց չե՞ այդ միմիայն ինձ ե վերաբերում, չե՞ վոր նա իր ամբողջ ծանրությամբ ինձ վրա յե ընկնում։ Ընդհանուր գործին, իմ հեղափոխական պարտականություններին չի ազդում։ Դա իմ անհատական կյանքին վերաբերող գործ ե և իզուր ուրիշներն աշխատում են ներս մտնել այնտեղ։

— Սակայն դու սկսում ես արդեն վիրավորել ինձ։ Յեթե դա միմիայն քեզ վերաբերվեր, այդ մասին յես չեյի խոսի յերբեք։ Ինչպե՞ս թե միայն քո գործն ե։

— Դե իհարկե. ում ինչ գործն ե, վոր իմ հոգեկան աշխարհը խախտվել ե, վոր իմ ընտանեկան կյանքը ծանր քարի պես նստած ուսերիս, յերկտակում ե մեջքս։

— Ինչպե՞ս... Յեվ քո կարծիքով այդ ամենը չի՞ ազդում քո հեղափոխական գործունեության վրա։ Հապա քո վերջերս նկատված շատապողականությունը, անհետևողականությունը, քեզ մոտ կնոջդ հանձնարարականներով այցելող զանազան «գործ շինողները», վերջապես գործարանը կապալով տալու քո պնդումը։

— Չլինի՞ կարծում ես, վոր գործարանը յես վորոշ նպատակով եմ ուզում կապալով տալ։

— Յես այդ չեմ կարծում ու չեմ ել կասկածում, բայց բանվորների մեջ խուլ դժգոհություն կա, վորը ցանկալի հետևանքների չի հասնի։ Վերջապես յես պահանջում եմ, վոր դու լինես այն, ինչ վոր առաջ եյիր։ Դու քո անձնականը ընդհանուրից գերադասելու իրավունք չունես։ Ո՞ւր ե քո նախկին յեռանդը, քո անքուն գիշերները, առանց հոգնելու աշխատելու ընդունակությունը։

— Ինձ հանգիստ ե հարկավոր, յերկար աշխատանքը քայքայել ե ջղերս։

— Յերկար աշխատանքը չե քայքայել ջղերըդ, այլ քո ընտանեկան կյանքը։ Իզուր աշխատում ես ինքդ քո առաջ արդարանալ։ Յես այդ հասկանում եմ։ Մի՞թե ինքդ չես զգում, վոր աշխատում ես խաբել քեզ, լռեցնել քո մեջ ան-

գուսպ բողոքող ձայնը։ Ինքդ չես հավատում քո ասածներին։

Արշակը լուռ էր։ Ընկերն իրավունք ուներ։ Զգում էր, որ այդ դրությունն իրեն շարքերից դուրս է շպրտելու։ Զգում էր, որ իր հոգու մեջ բույն է դրել մի կեղծիք, որն որե-որ մեծանալով, կամենում է ընդգրկել իրեն։

Հասան իր բնակարանին։

— Բարձրանանք, — ընկճված ձայնով առաջարկեց նա։

— Ո՛չ, ծանր է ինձ համար քեզ մոտ գալը, բացի այդ գործ էլ ունեմ։ Սակայն թափահարիր քեզ, դեն շպրտիր ուսերիցդ այդ կեղտն ու վերածնվիր։ Մնաս բարով, քո ընկերները դեռ իրենց հույսը չեն կորցրել։ Մի՛ մոռացիր, անհատը տեղ չունի մեր գործի մեջ։

Հենված դռանը, թղթապանակը թևի տակ, հետևում էր Սեդրակին, որը մեծ-մեծ քայլերով հեռանում էր փողոցի միջով։

«Անհատը տեղ չունի մեր գործի մեջ» — մտքում կրկնում էր Սեդրակի ասածը։ Արդյո՞ք նա իրավացի չէ։ Հնարավո՞ր է արդյոք այդ ճշմարտության կիրառումը, առանց որևէ շեղումի, քանի որ մարդկային կենցաղի մինչ այժմ յեղած բոլոր պայմանները միշտ դրա հակառակ ընթացքն

են ունեցել։ Սակայն գուցե Սեդրակը պնդում է այդ լոկ նրա համար, որ ինքն իր անձնական կյանքը չի կարողացել ստեղծել։ Ասում են, որ նա շատ անհաջող սեր է ունեցել, որ սիրած կինը այն ժամանակ, երբ մի քանի ժամից հետո իր կինը պիտի լիներ, թողել ու մեկ ուրիշի հետ հեռացել է։ Սակայն մի՞թե ինքը կասկածում է, մի՞թե ընդունում է, որ դա ճշմարիտ չէ։ Այն ժամանակ ի՞նչ անուն տալ իր այսքան տարիների աշխատանքին հանուն այդ գաղափարի...

Վերջապես համոզված, որ կեղծում է ինքը, որ ընկել, որ հեռացել է գաղափարից, նա ներս մտավ, հաստատ վորոշումով վերջ տալու այդ ամենին ու վերադառնալու իր ընկերների մոտ։

— Այո՛, այո՛, Սեդրակն իրավացի յե, — շշնջում էր նա, ներս մտնելով սենյակ։

Ասյան մենակ չէր. դերասանը մոտն էր։

Վերջերս նա հաճախ էր իրենց մոտ լինում, սակայն Արշակը դրան առանձին նշանակություն չէր տալիս, բայց այժմ նրա ներկայությունն ու Ասյայի ժպտուն դեմքը նրա ջղային տրամադրությունն ավելի լարեցին։

Մի ընդհանուր բարև նետելով, նա արագ անցավ իր սենյակն ու դուռն ամուր փակելով,

ընկավ սեղանի մոտ յեղած աթոռին, գլուխը ձեռքերի մեջ առնելով։

«Պետք է վերջ տալ, պետք է վերջ տալ», —շշնջում էր նա, —«այլապես կորած եմ, այլապես մեռած եմ իմ գործի համար»։

Ու մտքում բազմազան ձևով դարձնում էր այն մոմենտը, յերբ նրանք պիտի բաժանվեն, յերբ այլևս չի ունենալու իր Ասյային։

Զգում էր բաժանման ծանրությունը, զգում էր, վոր դա կխորտակե իր կյանքը վերջնականապես, բայց գիտակցում էր, վոր դա միակ միջոցն է իր ընկերների մոտ, իր գործին դառնալու։

Յերբ քիչ հետո ներս մտավ Ասյան, նա արդեն հանգիստ էր, իր վորոշման հաստատ լինելու հանգստությամբ։

Սակայն Ասյայի ընդոստ ներս մտնելը, կըշտամբանքով նրան նայելը թուլացրին նրա ջղերը։

«Անպայման արցունք» ..անցավ մտքով։

Ու առանց սպասելու, վոր կինն սկսի խոսել, ինքը կամենալով նախահարձակ լինել, դարձավ նրան քիչ բարձր տոնով. —

—Ասյա, քո վերաբերմունքը կտրում է իմ ընկերների դեպի ինձ ունեցած հավատն ու կորցնում այն վստահությունը, վորն ունեն նրանք իմ նկատմամբ։

Ինքս իմ աչքում արդեն ընկել, փոքրացել, կորցրել եմ իմ նշանակությունը։ Պետք է վերջ տալ այս ամենին։

—Ինչի՞ն վերջ տալ, —հարցրեց Ասյան կանգնելով նրա դեմ ու աչքերը կկոցելով վրան, կարծես նախապատրաստված այդ հարձակման։

Արշակն այդ հարցին պատասխանելու մասին չէր մտածել։

Այն, ինչ վոր կատարվում էր իր շուրջը, նրան էր միայն թվում արտասովոր։

Իսկապես ի՞նչ էր արել կինը, ի՞նչ հանցանք ուներ նա, վորը հիմք պիտի ծառայեր առաջացող կատաստրոֆային։

Իր համար արտասովորը նրա համար շատ սովորական էր և ցույց էր տալիս՝ սիրող կնոջ փաղաքշական խնամք դեպի իր ամուսինը՝ նրա ոգու համար։

Ըմբռնման տարբերությունն էր իրոք, վոր կանգնել էր նրանց մեջ։

Ու յերբ Ասյան մեկ էլ կրկնեց իր հարցը, նա կծկվեց ու չգիտեր ինչ պատասխանել։

—Այն, վոր մենք այսպիսի կյանք ենք վարում, —թոթովեց նա, աչքերը ցած խոնարհելով։

Կինը բնազդաբար հասկացավ ամուսնու մեջ

տեղի ունեցող պայքարը, զգաց, վոր պայքարող հակառակ ձայնը դեռ շատ ուժեղ չէ, վոր իր կանացիությամբ դեռ կարող է լռեցնել այդ ձայնը։

Մոտեցավ, գրկեց նրան, ծունկի իջնելով մոտը, փայփայեց, շշնջալով ականջին.—

—Սուտ է, սուտ, քո ընկերները նախանձից են այդպես ասում։ Տեսնում են մեր ուժգին սերն ու նախանձում։ Թե չես ուզում, դերասանի հետ ծանոթությունս կը ընդհատեմ, սակայն դու չես կասկածում իմ ազնվության վրա, վոր դա լոկ մի սովորական ծանոթություն է։

Ներքին խռովանքի մեջ խարխափելով, զգում էր Արշակը, վոր անձնատուր չպիտի լինի կնոջը, վոր դա ցանցի մի այլ վոստայնն է, վոր գալիս է էլ ամուր փաթաթելու, խճճելու նրան իր բազմաթիվ աջ ու ձախ անցնող նուրբ, բայց ամուր թելերի մեջ.

Զգում էր, վոր հենց հիմա պիտի իշխե կնոջ կամքին, թեքէ նրա բնավորությունը, ավելին, վոր պիտի հեռացնե նրան իրենից ու իր հոգեկան տանջանքներից վերածնված, գնա իր ընկերների մոտ, վորպես նախկին հեղափոխականը մի ցանկություն, մի ձգտում միայն ունենալով։

Բայց ամուր սեղմված կնոջ գրկում, շնչելով նրա մարմնի ախորժ բույրը, զգալով նրա գիրկ թևերի ցնցող հպումը, խոնարհվեց, բարձրացրեց նրան։

Կարոտով ու բուռն համբուրում էր ու մի ինչ վոր անհայտի ուղղելով բառերը, կրկնում, ավելի ու ավելի սեղմելով կնոջն իր գրկում.—

—Չեմ կարող, չեմ կարող…

6

Կենտրոնական կոմիտեն իր նիստում, հակառակ Սեդրակի բողոքին ու մեղմացնելու համար ձեռք առած միջոցներին, վորոշեց Արշակին հետ կանչել ստանձնած պաշտոնից ու իր տրամադրության տակ պահել։ Բանվորների բողոքն արդեն անկարելի յեր անուշադիր թողնել և բացի այդ բողոքներ եյին լսվում նաև ծառայողներից։

Կառավարության կողմից նոր նշանակվածին հանձնելով գործերը, նա վերադարձավ տուն։

Տրամադրությունը խաղաղ էր։

Ճաշելով կնոջ հետ սովորական սիրալիրությամբ, առանց հայտնելու նրան տեղի ունեցած փոփոխության մասին, նա առանձնացավ իր սենյակը, աշխատելու պատրվակով։

Վիճակը գցված էր։

Կոմիտեն իրավացի յե ու վորոշումը ճիշտ, նույնիսկ դեռ ուշացած։

Նա միայն բարկանում էր Սեդրակի վրա, որ աշխատել էր հետ կանգնեցնել անդամներին այդ որոշումը հանելուց և կամեցել էր մեղմել իր նկատմամբ նրանց կազմած կարծիքը։

Ինքն արդեն շարքերից դուրս մի անպետք ու ավելորդ դեմք էր։

Ի՞նչ արժեք կարող է ունենալ անհատը ընդհանուր գործի համար։

Հանուրի կամքն ու միաջան գործակցությունն է անհրաժեշտ գրված գիրքերը հաստատուն պահելու համար։

Իսկ ի՞նքը... մի մասնիկն էր այդ ընդհանուր կամքի, որն այսօր այսպես ապաշնորհ կերպով լքեց այդ գիրքերը, վախկոտի պես տեղի տալով, իր անձնական յերջանկության հետևից վազելով բոլոր նրանց նման, որոնց դեմ նա պայքարում էր համառորեն։

Իր գո՞րծը... այն կկատարի մեկ ուրիշը, այսօր թույլ, բայց վաղն արդեն հաստատուն։

Շարքից դուրս է հիմա նա...

Իսկ ի՞նչ է կյանքն առանց այդ շարքի։

Բայց նա պարտավոր է գոնե իր հեղափոխականի վերջին պարտքը կատարել։

Նա չպետք է լինի, որպեսզի իր ներկայությամբ կենդանի օրինակ չծառայի ու փարակման թույն չտարածի ուրիշների վրա։

Ո՛չ մի ցավ ու բաժանման կարոտ չէր տանջում նրան, այլև ու՛ շատ հանգիստ էր, յերբ ներս մտավ Սեդրակը։

Հարկավոր էր միայն կարգի բերել մի քանի գործեր։

Սեդրակը հակառակ իր բնավորության, ուրախ էր։ Ո՛չ մի ակնարկով չհիշատակեց տեղի ունեցած դեպքը, այլ խոսում էր զանազան այլ խնդիրների մասին։

—Ինչո՞ւ այսօր ժողովի չեյիր յեկել։ Կենտրոնական հարցը գավառի խնդիրն էր։ Տեղերում հմուտ աշխատողների պակասը շատ է զգացվում ու այդ հարցը շատ զբաղեցրեց մեզ։ Գավառ ուղարկելիք մարդկանց սով է։

Արշակը փարվեց այդ մտքին։

Նա առաջ էլ լսել է այդ մասին, սակայն ծանրաբեռնված իր գործերով, յերբեք չէր անդրադարձել նրան, ամեն անգամ նման խնդիր առաջացած ժամանակ համաձայնվելով ընկերների ասածին։

Իսկ այժմ նա ամուր բռնեց նրանից։

Դա իր փրկության հենարանն էր

Սեդրակի գնալուց հետո նա դեռ յերկար ժամանակ, հուզված սրտով քայլում էր սենյակի յերկայնքով։

Վերածնվելու միջոցը գտել էր։

Դեպի գավառ, մոռանալ ամեն ինչ ու կրկին անձնատուր լինել գործին, յերկար ժամանակ հեռու լինել այս ամենից, հեռանալ առանց ափսոսանքի ու հետադարձ հայացքի։

Կարգի բերեց թղթերը, մոտը յեղած դրամն ամբողջությամբ հանձնեց կնոջը, վորոշեց վաղվա անելիքն ու հանգիստ քնեց, այնպես խաղաղ, ինչպես չեր քնել յերկար ամիսներ։

Կոմիտեյում շատ զարմացան, յերբ հետևյալ որն Արշակը հայտնեց, վոր ուզում ե վորևե գավառ գնալ։

Աշխատեցին հետ համոզել նրան, վոր նա այստեղ ե պետք իրենց, բայց Արշակի վորոշումն անդրդվելի եր։

Անմիջապես ստացավ պետք յեղած թղթերը, հրահանգները, փնտռեց, գտավ Սեդրակին ու հայտնեց, վոր այդ գիշեր իսկ մեկնելու յե։ Խնդրեց լուրը չտարածել ու յերեկոյան կառքով գալ իր յետևից, իբր արտակարգ ժողովի տանելու։

Սեդրակն ուրախացավ, տեսնելով ընկերոջ մեջ տեղի ունեցած փոփոխությունն ու խոստացավ։

Յերեկոյան յերբ Սեդրակը յեկավ, նա կաս-

կածի տեղիք չտալու համար, հրաժեշտ չտվեց կնոջը, միայն մի խորը, թախծոտ հայացք նետեց վրան ու թղթապանակն առնելով, արագ դուրս գնաց։

Կայարանում շատ քիչ մարդ կար։

Քայլում եյին նրանք յերկուսով կառամատույցով վեր ու վար։ Լուռ եյին։

Միայն մեկ անգամ Սեդրակը բռնեց նրա ձեռքը, նայեց աչքերին ու ասաց.—

— Յես հավատում եյի քո վերածնունդին։

Յերբ հնչեց յերրորդ զանգը, հրաժեշտի համբույրով բաժանվեցին նրանք ու գնացքը սուլելով, ծածկվեց հեռավոր խավարի մեջ։

ՆԱՎԹԻ՛

1

Նա՛ֆթի՛...

Այդպես եյին ճանաչում նրան քաղաքի բոլոր փողոցների կենվորները։

— Նա՛ֆթի...— կանչում եյին այս կողմից, կանչում եյին այն կողմից կանայք, յերեխաները։

— Պրիմուսի նաֆթը վերջացել ե, գնա տես Նավթին չի՞ յերևում, կանչիր գա,— կասեր մայրը փոքրիկ տղային, վորն իսկույն կվազեր փողոց, ականջները սրած այս ու այն կողմ կնայեր, և յեթե թեկուզ հեռվում լսեր նրա ձայնը, կվազեր մոտը։

— Նաֆթի, նաֆթներս վերջացել ե, մայրիկս ասում ե թող գա։

— Լա՛վ, բալաս,— կպատասխաներ նա հանգիստ, մեղմ ժպտալով,— ցուրտ ե, գնա տուն, ա՛յ, սրանց նաֆթ տամ, կգամ։

Սիրում եյին նրան։

Բարեխիղճ եր, յերբեք թանգ չեր վաճառում. փող չեղած ժամանակնել ապառիկ եր տալիս։

Նաֆթն էլ միշտ լավն էր. անխառն, մաքուր։

Ցելեքտրականություն չեղած տներում, ուր ստիպված էին լամպ վառել, յեթե մեկ-մեկ լույսը հանկարծ կաղոտանար, կսկսեր ճըթճըթալ, տան տղամարդը նեղացած կասեր. —

— Հազար անգամ ասել եմ, Նաֆթը Նաֆթիից առեք, ուրիշները ջուր են խառնում։

Ու կդառնային Նաֆթիի «մուշտարին»։

Շատ էին նրա մուշտարիները։

Գործը հաջող էր գնում։

Ամաններն արդեն մեծացրել էր, դարձրել յերկուսը, բայց յերբեմն այդ էլ չեր բավականացնում և նա յերկու անգամ եր գնում պահեստ։

Պահեստապետը ձեռքով թեթև խփում եր նրա կորացած թիկունքին և կատակով ասում.—

— Գործերդ հաջող են, Նաֆթի, շուտով միլիոնատեր կդառնաս, սեփական պահեստ բաց կանես։ Տես, այն ժամանակ ինձ չմոռանաս, ինձ գործակատար կվերցնես։

Մյուս կողմից Նաֆթ կշռողը կսկսեր իր կատակները. —

— Հիմի աղջիկդ լավ օժիտ կունենա, արի տուր ինձ։ Լավ տղա յեմ, խելոք, համեստ, ինձ քո ժառանգը դարձրու։

Նաֆթին չեր նեղանում այդ հանաքներից։ Քթի տակ ժպտում եր, փողը վճարում և ուրախ ուրախ դուրս գալիս պահեստից։

Առավոտը վաղ, դեռ լույսը նոր բացված, դուրս եր գալիս տանից, յերկու լիք ամանները ձեռքին շրջում փողոցներն ու յերբեմն հանդարտ, յերբեմն բարձր, կանչում.—

— Նա՛ֆթի՜... Նա՛ֆթի՜...

Մուշտարիները մեկ-մեկ, յեթե առավոտյան թեյի կամ ճաշի ժամանակ լիներ, մի բաժակ թեյ, մի աման կերակուր կառաջարկեյին։

Նա կուտեր, կխմեր, շնորհակալություն կհայտներ ու ամաններն առած դուրս կգնար և կրկին կլսվեր նրա կանչը. —

— Նա՛ֆթի՜... Նա՛ֆթի՜...

Շրջում եր մինչև իրիկուն, յերբ վոչ վոք նաֆթ առնելու կարիք չեր ունենա և ուրախ-ուրախ շտապում տուն, իր անկյունը, ուր նրան սպասում եր միակ աղջիկը, ընթրիքի սեղանը պատրաստած։

Տուն հասնելուն պես հաշվում եր ստացած դրամը, խնամքով դարսում, փակում սենյակում յեղած միակ սնդուկի մեջ, հետո լվացվում ու նստում ընթրելու։

Ուրախ եր, գոհ եր վիճակից, խնամված իր սիրող աղջկանից։

Ընթրիքից հետո հայր ու աղջիկ միմիանց մոտիկ նստած, միմիանց փայփայելով, մի քիչ էլ այս ու այն բանից էյին խոսում ու պառկում հատակին փռած անկողինների մեջ և հանգիստ քուն մտնում։

Գոհ էր Նաֆթլին իր վիճակից։

2

Երբ սկսվեց պատերազմը, նրա որդուն էլ մյուսների հետ զինակոչի յենթարկեցին ու տարան օտար յերկրներ։

Տան ամբողջ հոգսն իր վրա մնաց։

Ինքն արդեն հասակն առել էր, հույսն իր նեցուկի վրա յեր դրել։

Բայց պատերազմը քանի գնում յերկարում էր։

Տղան չեր վերադառնում։

Կանայք դաշտային աշխատանքին շատ էլ չէյին կարողանում օգնել։

Տնտեսությունը քայքայվում էր։

Ծերուկի ուժը պակասում էր։

Գյուղը, ուր ապրում էր նա, սահմանամերձ էր։

Պատերազմի փոփոխական հաջողություններին ու անհաջողություններն ամբողջապես ազդում էյին գյուղի վրա, որն ապրում էր ամեն րոպե պատահող անակնկալների վտանգը։

Յեվ յերբ մեկ օր զորքն անսպասելի կերպով և հապճեպով քաշվեց, գյուղն ամբողջությամբ պոկվեց տեղից ու հսկայական ալիքի նման հորձանք տալով, ձգվեց զորքի յետևից։

Անգիտակ իրենց ունեցած հանցանքին, անկախ իրենց կամքի, ուրիշի մեղքերը քավելու վիճակին դատապարտված, հետևից կրնկակոխ թշնամու գնդակից հազիվ փրկված, անխուսափելիորեն մատնված քաղցի ու թափառումների անագորույն վիճակին, գյուղացիք զուրկ ամեն ինչից, տարածվեցին զանազան կողմեր, ատամներով պայքարելով մահի դեմ, մի կերպ քարշ տալով իրենց այլևս անպետք գոյության մնացորդը։

Ծերուկն էլ պառավ կնոջ, հարսի ու աղջըկա հետ, ամեն մեկի մեջքին մի տոպրակ՝ բարոլից տնից փրկած խղճուկ փշրանքներով՝ յերկար ճանապարհի հոգնությունը հաղթահարելով, հասան քաղաք։

Անձրևի տակ ու ցեխի մեջ տեղավորվեցին քաղաքից դուրս, հեռավոր մի ավերակի մեջ, շատերի հետ միասին, յենթակա նպաստաբաշխների լուտանքին ու կոպտության, ծաղրին ու քմահաճույքներին։

Անցնում էին օրեր, կես կուշտ, կես քաղցած, անգիտակ իրենց գալիքին։

Սպասում էին իրենց զավակին։

Նա յերիտասարդ էր ու առույգ։

Նրա ներկայությունը կփոխեր նրանց կենսական պայմանները։

Բայց նա չկար։

Սպասում էին և լավ գալիքի հեռավոր շողանքների մեջ թշվառ օրերի դանդաղ քանդվող թելերն էին կծկում, յերբ մի օր փուլ յեկավ յերազանքների մեջ կառուցած գյուղի պատվանդանն ու գարնան վարար ջրերն անկանգ վազքով մաքրեցին ամեն ինչ, տեղը միայն չոր անապատ ու սուր-սուր ցցված ապառաժներ թողնելով։

Տղան սպանվել էր։

Լուրը նրան հաղորդող պաշտոնյան շատ հանգիստ էր, նույնիսկ ժպտաց,

— Հայրենիքի պաշտպանության հերոսների շարքում է դասվել ձեր վորդին։

Կանգնել էր պատի մոտ, մոռացել ամեն ինչ։

Վոտքերը դողացին, ծալվեցին ու պատն ի վար սողալով, ընկավ հատակին։

Նրան օգնեցին, ջուր տվեցին, հանգստա-

ցրին ու վոտքի հանելով, ճանապարհեցին, մխիթարելով.—

— Մենակ ձերը չէ, շատերն են սպանվել, դիմացիր։ Նա կատարել է իր պարտքը։

Քայլում էր դեպի իր տուն կոչված բույնը։ Աչքերի առաջ արցունքը վարագույրներ էր քաշել։

Քայլում էր հազիվ շարժելով վոտքերն ու կամացուկ, անշուկ կրկնում.—

— Կորավ, ամեն ինչ կորավ...

Ծովը հսկա թափով հորձանք տվեց, պտըտեց, նրանց մղեց մինչև հատակ ու բարկության փրփուրով վեր հանեց և շպրտեց դեպի ափ։

Ընկած ավազի վրա, ձկան պես ջրազուրկ, խեղդվելու դատապարտվեցին։

Պառավ կինը ցնցված վորդու մահվան լուրից, անկողին ընկավ և շատ օրեր չանցած, դադարեց իր գոյությունը։

Փողոցներում մեռել հավաքող սայլակը մի որ նրան տարավ ցնելու մեծ փոսը, վորի յերախը շատ էր լայն ու դեռ անկուշտ։

Հարսը յերիտասարդ էր, գեղեցիկ, լի կենսուրախ վայելքի պահանջով։

Արտասվեց, սգաց իր անժամանակ կորուս-

տըն, ապա մեկ որ հեռացավ և կյանքի ջրապըտույտի մեջ խորասուզվեց։

Չդիմացավ, չնախատեց ծերուկը։

Ի՞նչ կարող եր անել։

Միայն սարսափեց։

Ու լռեց։

Ժամերով քաշված մի հեռավոր անկյուն, նայում եր, հենված պատին, գլուխը կախ գցած մտածում ու չեր կարողանում հասկանալ պատճառներն այն անակնկալ քայքայման, վորին յենթարկվեց իր ընտանիքը։

Նպաստի բաշխումն աստիճանաբար պակասեց, ապա բոլորովին դադարեց։

Այն չնչին արժեքավոր փշրանքները, վոր մեջքների վրա ազատել եյին տնից, արդեն ըսպառվել եր։

Անկարելիությունը ծանրորեն չոքեց նրա դռանը։

Յեթե գոնե մենակ լիներ…

Բայց հարկավոր եր խնամել աղջկան։

Շատ տեղեր դիմեց, շատերից գործ խընդրեց, բայց իզուր։ Ծեր եր, աշխատել չեր կարող։

Յեվ յերբ իր հագի տաք շորն ել, վոր և նրա անկողինն եր, շուկա հանվելուց հետո ար-

դեն մի քանի որ եր, վոր այլևս վոչինչ չունեյին ուտելու, մի յերեկո դուրս յեկավ, անցավ քաղաքի գլխավոր փողոցով ու աշխատելով ծածկված մնալ մթության մեջ, զբոսնողներից վողորմություն խնդրեց։

Շատ ծանր եր։

Սովոր չեր։

Թվում եր, թե բոլորը նայում են նրան ու կշտամբում, թվում եր, թե անցնողներն ապտակում են նրան։ Դեմքն այրվում եր, վոտքերը դողում եյին, ձայնը խեղդվում եր կոկորդում։

Ծերության պատճառով խղճահարվողներ յեղան ու արդեն բավական ուշ եր, յերբ հավաքած դրամով մի կտոր հաց գնելով, շտապեց աղջկա մոտ։

Աղջիկն ագահորեն ուտում եր հացը, անգիտակ թե ի՞նչ գնով ե ձեռք բերված այն։

Անցնում եյին որեր։

Ծերուկը խնամքով թագցնում եր աղջկանից թե ո՞ւր ե գնում ամեն իրիկուն։ Իսկ յերբ մեկ անգամ նա հարցրեց այդ մասին, գունատվեց, կմկմաց ու ստեց, վոր մի տան մեջ գործ ե գտել։

Սակայն աղջիկն իմացավ։

Ի՞նչ հոգեկան ապրումներ ուներ նա, հայրը

չկարողացավ իմանալ, բայց նկատում էր, ինչպես նա որե — որ մաշվում ու դալկանում է։

Բայց և այնպես շատ անգամ էին նրանք սոված մնում և շատ անգամ էր ծերուկը վերադառնում տուն ձեռնունայն, հուսահատ։

Աղջիկը մեծացել էր արդեն։ Հայրը գիտակցում էր, որ մուրացկանի կյանքը նրան չի կարող բավարարել, որ նա մեկ որ կարող է ձեռքից դուրս գնալ։

Երեկոները շատ անգամ մինչև ուշ գիշեր պտտվելով քաղաքի զանազան մասերում, նա զարհուրանքով էր տեսնում այն կյանքը, որ տիրում էր իր չորս կողմը։

Ու մեկ որ էլ կատարվեց այն, որից այնքան սարսափում էր ու խնամքով աշխատում հեռու պահել իր աղջկան։

Մի յերեկո յերբ վերադարձավ, աղջիկը տանը չէր։

Անհանգստությամբ սպասեց յերկար, բայց նա չկար։

Վերադարձավ շատ ուշ։

Համառորեն լուռ էր և հոր հարցերին չէր պատասխանում։

Այնուհետև հաճախ կրկնվում էր այդ։

Հայրը սկսեց հետևել, սակայն վոչինչ չէր հասկանում։

Բայց մեկ որ ամեն ինչ պարզվեց։

Այն առավոտ յերբ արթնացավ, իր կողքին մի քիչ դրամ գտավ և աղջկա յերկտողը.—

— «Հայրի՛կ, ինձ մի մեղադրիր, ստիպված էի այս ճանապարհը բռնել։ Մնաս բարով...»— գրել էր նա ու հեռացել։

Հուսահատ և ուժասպառ, յելավ նա ու մի քանի որ շարունակ փնտռում էր նրան ամեն կողմ, ամեն ուր, սակայն մեծ էր քաղաքը, ամեն անկյունում մի մի գաղտնիք, մի մի անակընկալ...

Մնաց մենակ։

Մենակ ու անպետք բոլորի համար։

Մահն էլ մոռացել էր նրան։

3

Անցան ամիսներ, տարիներ։

Դրությունը փոխվեց դեպի լավը. կյանքն աստիճանաբար կանոնավորվում էր։

Մոռացվում էին նախկին անակնկալ ու կանխահաս տառապանքներն ու մարդիկ վերըստեղծում էին իրենց կյանքի քայքայված պայմանները։

Վերադառնում էին իրենց թողած գյուղերը, վերաշինում ավերված տներն ու տնտեսությունները։

Ծերուկը վերադարձի մասին այլևս չէր մտածում։

Ի՞նչ ուներ այլևս այնտեղ։

Ինչպե՞ս պիտի վերականգներ իր կորուստները։

Տղան սպանված, կինը մեռած, հարսը չկար, իսկ աղջիկը...

Մի քանի անգամ ուշ գիշերներին տեսել էր նրան տղամարդկանց հետ, բայց չէր համարձակվել մոտենալ։

Մոտենար ի՞նչ ասեր։

Այլևս չէր մեղադրում նրան. պայմանները և իր կիսաքաղց օրերը հաշտեցրել էին նրան այդ մտքի հետ։

Իսկ այժմ, երբ դրությունը փոխվել էր, նա մտածում էր ստեղծել մի հնարավորություն, մի միջոց, փրկելու նրան ու իր խնամքոտ թևի տակ առնելու։

Շրջելով շուկայում, փողոցներում, տեսնում էր, ինչպես մարդիկ աշխատում, հայթայթում են իրենց օրվա ապրուստը։

Փորձեց մշակություն անել, բայց չկարողացավ. ծեր էր, մեջքը ցավում էր, ոտքերը դողում էին։

Առաջին բեռը հազիվ տեղ հասցրեց ու վերկու որ տեղից չէր կարողանում բարձրանալ։

Առևտուր պետք էր անել, թեթև էր, հեշտ։

Մտածեց, մտածեց ու վորոշեց նաֆթ ծախել փողոցներում, տնե — տուն։

Գտավ մի բարի մարդ, խորհուրդ արեց նրա հետ։ Հաշվեցին։ Շատ փող պետք չէր։

Փնտրեց, գտավ աղջկան, հայտնեց իր վորոշումը, իր ծրագիրը։

Աղջիկը խոնարհվեց հոր կրծքին, արտասվեց, հառաչեց։

Զգաց նրա կրած ծանր տառապանքներն իր ակամա ընտրած ճանփին, ավելի խոցվեց ու նրա համաձայնությունից՝ վոր կվերադառնա, կգա իր հետ ապրելու, ավելի թափ առած, համառորեն հետապնդեց իր վորոշման։

Ստացած վողորմությունը խնամքով հավաքում, չէր ծախսում, օրերով սոված էր մնում։

Գտնվեցին մարդիկ, վորոնք ընդառաջեցին նրան ու մեկ որ նա ուրախ ժպտով, յերջանիկ և դեպի կյանքը լցված հավատով, նաֆթի պահեստից դուրս յեկավ մի փոքրիկ լիք աման ձեռքին, անցավ քաղաքի շուկայից հեռու ընկած փողոցներն ու կանչեց.—

—Նա՛ֆթի....նա՛ֆթի...

Աղջիկը թոթափեց վերայից փողոցի ցեխը, գգվանքով դեն նետեց իր մինչ այդ ապրած օրերը

և հոգնած, տառապած հոգով վերադարձավ մութ, խոնավ դատարկ տան անկյունն ու նոր խընամքով մտազբաղ, կենդանացրեց նրա թևահատ սիրտն իր ջերմ փաղաքշանքով։

Փոքր էր վաստակը, հազիվ առօրյա ցավը հոգացող, բայց սեփական աշխատանքով ձեռք բերված։

Ու յերկար տարիներից հետո, բազմաթիվ կորուստների շարանից յելած, անպատվության ու անարգանքի ծանրությունը թոթափած, նրանք կրկին յերջանիկ զգացին իրենց յեվ գոհ ու շնորհակալ, անց եյին կացնում օրերի շարքը յերկար, միշտ վստահ վաղվան։

4

Գարունն իր մոտալուտ գալստի նշաններն էր ուղարկում արևի տաք ճառագայթների հետ։

Այդ օր արևն ավելի տաք էր։ Վերջին ձյունը հալվել, վոտքերի տակ տրորվելով, ցեխ էր գոյացրել բոլոր փողոցներում, մայթերի վրա։

Ցերկու լիք մեծ ամանները ձեռքին, քայլում էր ծերուկը փողոցի միջով ու մտածում, մերթ-մերթ ըստ սովորության անգիտակցաբար կանչելով.—

Նա՛ֆթե՛...Նա՛ֆթե՛...

Մտածմունքներն աղջկա շուրջն եյին։

Գարունը գալիս է, դաշտերն ու ծառերը կզարդարվեն կանաչով, կնորոգվեն ու յերիտասարդացած, նոր կյանքով ապրելու յեռանդով կլցվեն։

Մարդիկ ել կզարդարվեն.

Ինքն ել իր աղջկան կզարդարի։

Ծածուկ, այնպես վոր նա չիմանա, կառնի մի ձեռք նոր շոր, սպիտակ գույնի, մանր կանաչ ծաղիկներով. այդպիսի մի շոր իր մուշտարիներից մեկի հագին տեսել է ու շատ է հավանել։

Կառնի ճիշտ այնպիսին։

Մի իրիկուն կտանի տուն, կպահի, իսկ յերբ նա քնի, կդնի գլխավերևը։ Առավոտը նա կարթնանա, կտեսնի, կզարմանա ու շատ կուրախանա։

Քայլում էր ու այդ միտքն ամեն տեսակ դարձնելով, փայփայում էր, գուրգուրում։

Փող չունի, աշխատանքից համարյա հետ չի ընկնում. դե տուն է, հազար ու մի տեսակ պակասություն կա, մեկ-մեկ, մանր-մանր առել է շատ անհրաժեշտ բաներ ու չի կարողացել փող հետ գցել, բայց վոչինչ, ապառիկ կառնի, կհավատան, հետո կամաց-կամաց կվճարի։

Իր կոշիկներն ել մաշվել են, ցեխը մեջն

է լցվում, բայց ինքը կարող է յոլա գնալ, հետո կառնի, իսկ հիմի աղջկա շորն է հարկավոր։

Այսօր նաֆթ առնող շատ քիչ է, համարյա չկա։

Դե ախր յերեկ բոլորն առել են,— ասում էր ինքն իրեն,— եղպես հո շուտ չվերջացրին։ Վնաս չունի, այսօր շուտ կգնամ տուն։ Տուն գնալուց առաջ կմտնեմ չթավաճառի մոտ, կնայեմ, կջոկեմ, գինը կտեղեկանամ...

Քայլում էր ու յերջանիկ ժպտում։

Ու դեռ ժպիտը դեմքին, յերբ ուզում էր թեքվել դեպի հատող փողոցը, սայթաքեց ու հավասարակշռությունը կորցնելով, վայր ընկավ։

Ամանները բաց ընկան ձեռքերից կողքերի վրա ու միջի նաֆթն սկսեց թափվել փողոցի մեջ, հոսելով ցեխի յերեսով։

Մի ակնթարթ տևեց այդ ու յերբ ծերունին ուշքի գալով վրա ընկավ ամանները վերցնելու, նրանք արդեն դատարկ եյին։

Մի րոպե դատարկ ու թեթև ամանները ձեռքին բարձր բռնած կանգնեց, նայեց ցեխի վրայով հանդարտ հոսող կապտավուն հեղուկին և կարծես մի ահռելի մտքից քարացած, լայն բացվեցին աչքերը, կրկին հավասարակշռությունը կորցրեց ու ընկավ նախկին տեղը, թափված նաֆթի կողքին։

Նրա առաջ իր վողջ հասակով կանգնեց գալիքը, տարածեց կոշտ ձեռքերը, բռնեց նրա կոկորդն ու սկսեց սեղմել ամուր, ամուր։

Նա խեղդվում էր, աչքերը դուրս եյին ընկել։

Ուժ արեց, ցնցվեց, մի խռպոտ ձայն արձակեց ու մեջքի վրա փռվեց ցեխի մեջ։

Աղջիկը յերեկոյան սովորական ժամին դռանը կանգնած հորն էր սպասում։

Իսկ նա չկար։

Անհանգիստ էր, ուզեց դուրս գալ գնալ փնտռելու, յերբ այդ ժամանակ յերկու մարդ կառքով հոր դիակը բերելով, իջեցրին, տարան ներս ու պատմեցին իրենց տեսածը։

Դատարկ ամաններն էլ բերել եյին

Նայեց աղջիկը հոր դեմքին, տեսավ այնտեղ դրոշմված սարսափն ու ճանաչեց այն։

Ճանաչեց գալիքի սարսափը, իր մարմնով էլ մի ուժգին սարսափ անցավ, վերհիշեց իր անցյալ օրերն ու սոսկմահար, կուչ յեկավ մեռած հոր կողքին, սեղմվեց նրան ու անշարժացավ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հորձանք . . . . . էջ 5
2. Մի՛շտ պատրաստ . . . . » 113
3. Առանց վերնագրի . . . . » 139
4, Վերածնունդ . . . . . » 215
5. Նաֆթի՛ . . . . . » 255

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. **Տանջանքի լարեր.**— *(արձակ յերգեր) 1911 թ.*
Թիֆլիս *սպառված*
2. **Կարոտի յերգեր.**— *1922 թ. Յերևան* »
3. **Դեպի ապագան.**— *(պատմվածքներ) 1923 թ.*
Յերեվան *գինն է 30 կ.*
4. **Նախօրյակը.**— *վեպ կինո—լենտ, 1923 թ.*
Յերիվան *գինն է 50 կ.*
5. **Հորձանք.**— *վիպակներ, 1925 թ.*
Յերեվան *գինն է 1 ր. 25 կ.*

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ

1. **Նվագներ.**—*(արձակ յերգեր 1910-1917 թ. տպագըրված զանազան թերթերում)։*
2. **Պատմվածքներ.**—*(տպագրված զանազան թերթերում 1910-1920 թ. 15 հատ)։*
3. **Նոր առավոտ.**—*պիես չորս գործողությամբ, տաճկաստանի դեպքերից։*
4. Накануне —*(ռուսերեն լեզվով)* роман кино-лента
5. **Հաղթանակի ուղին.** — *պիես չորս գործողությամբ։*
6. **Մի կյանքի պատմություն.** — *(վեպ-հիշատակարան ազգային կռիվներից)։*

Բ. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

1. **Մ. Գորկի.**—*Մայրը, Ծերունին, Ընկեր, Բազե, Մրրկահավը և Արտասովորը։*
2. **Արոսյեվ.**—*Մոտիկ անցյալից, վեպ։*
3. **Վ. Մույժել.**—*Գարուն, պիես 4 գործողությամբ։*
4. **Գանգուրին.**—*Փոթորիկ, պիես 4 գործողությամբ*
5. **Ա. Լունաչարսկի.**—*Փորձություն, պիես 4 գործող.*
6. **Զ. Գիպպիուս. Դ. Մերեժկովսկի. Դ. Ֆիլոսոֆով.** *Կակաչ, պիես 4 գործողությամբ, 1905 թ. հեղափոխութ. շրջանից*
7. **Լ. Անդրեեվ.**—*Մեր կյանքի օրերը, պիես 4 գործող.*
8. **Ա. Չեխով.**—*Բալենու այգին, կոմեդիա 4 գործող.*
9. **Շալոմ Աշ**-*Սաբբատայ Ցեվի, պիես 3 գործ. 6 պատկերով, նախաբանով և վերջաբանով։*
10. **Պշիբըշևսկի.**—*Արցունքի հովտում, արձակ պոեմ։ (Լույս է տեսել «Մշակ» օրաթերթում)։*

Տպագրված գրքերը կարելի յե ստանալ.— Հեղինակից՝ Յերևան, Սպանդարյան փող. № 84 և Հայաստանի Պետհրատի բոլոր գրախանութներից։

Գումարով գնողներին և գրավաճառներին սովորական զեղչ։

(83к)
Арм.
2-3505

1 Γ. 25 Կ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043182